

ԹՈՎՄԱՍ ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՀՈՒՇԵՐԸ

Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում 1914 թ.
հուլիսից մինչև 1916 թ. ապրիլի 26-ը
Տետր 7 և 8: 1916 թ. հունվարի 1-ից մինչև փետրվարի 3-ը*

Բանալի բառեր - Թովմաս Նազարբեկյան, Մ. Սիլիկյան
(Սիլիկով), Դրո, Ն. Յուդենիչ, Վլ. Դե-Վիտտո, Էրզրում, Խնուս,
Մուշ:

Թ. Նազարբեկյանի հուշերի 7-րդ և 8-րդ տետրերը ներկայացնում են 1916 թ. հունվարից մինչև փետրվարի 3-ը տեղի ունեցած մարտական գործողությունները, որոնք արմատական բեկում մտցրին Կովկասյան ճակատում ընթացող մարտերում:

Անտեսելով անբարենպաստ եղանակը՝ ձնամրրիկները, լեռնային տեղանքը, անբավարար մատակարարումը և այլն¹ Կովկասյան բանակն անցավ վճռական գործողությունների: Դա էր պատճառը, որ զինձառայողները ստիպված էին հաղթահարել ահռելի դժվարություններ, որոնց մասին արդեն Խնուսի գործողության նախօրեին Թ. Նազարբեկյանն իր պարտքն էր համարել զեկուցել Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի նոր հրամանատար, գեներալ Վլ. Դե-Վիտտին: Սակայն նման «հանդգնության» համար վերջինիս հրամանով Թ. Նազարբեկյանը ժամանակավորապես զրկվում է հարձակման անցած իր դիվիզիան ղեկավարելու հնարավորությունից: Միայն որոշ ժամանակ անց ցարական բանակի հրամանատարությունը հասկացավ, թե ինչ բարդությունների և արգելքների մասին էր նշված Թ. Նազարբեկյանի զեկուցագրում:

Զմեռային անտանելի պայմաններում, չունենալով բավարար սնունդ և ուշադրություն չդարձնելով հանդիպող բարդություններին, 1916 թ. հունվարի 13-ին կազակները, նրանց աջակցող հրաձիգներն ու Դրոյի զլխավորած Հայկական 2-րդ դրուժինան գրավեցին Խնուսը, ինչի շնորհիվ փրկվեցին 1000-ից ավելի հայ կանայք ու երեխաներ²:

* Ընդունվել է տպագրության 20.04.2020:

1 Գեներալ Ե. Մալոպոսկին ևս իր աշխատության մեջ ընդգծում է Թ. Նազարբեկյանի դիվիզիային բաժին ընկած դժվարությունները (տես **Масловский Е. В.**, *Мировая война на Кавказском фронте 1914-1917 г.*, Париж, 1933, էջ 307):

2 Տես **Шатирян Р.**, *Краткий очерк деятельности армянских добровольческих дружин 1914-1916 гг.*, «Армянский вестник», М., 1917, N 14, էջ 6:

Վեբ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) րարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

1915 թ. վերջին և 1916 թ. սկզբներին կովկասյան իշխանությունների մոտ արդեն հասունացել էր հայ կամավորական խմբերի լուծարման ցանկությունը: Այդ իսկ պատճառով զանազան անհեթեթ, երբեմն սադրիչ լուրեր էին տարածվում հայ կամավորների վերաբերյալ: Պատահական չէր, որ Խնուս էր մտել Լաբինսկյան կազակային գունդը՝ գնդապետ Նոսկովի հրամանատարությամբ: Սա Գլխավոր շտաբի այն նույն գնդապետն էր, ով 1915 թ. հուլիսին Մշո դաշտից կեղծ զեկուցագիր էր ուղարկել Թ. Նազարբեկյանին, թե իբր իր վրա հարձակվում են թուրքական 12 գումարտակներ: Եվ ահա Խնուսի գրավումից հետո այդ նույն Նոսկովի կազակները այս անգամ էլ տարածում էին կեղծ լուրեր, թե իբր հայ կամավորները բռնություններ են գործադրել տեղի քրդերի ու թուրք վիրավորների նկատմամբ: Թ. Նազարբեկյանը, լինելով Խնուսում, այցելում է հիվանդանոցում գտնվող վիրավոր և հիվանդ թուրքերին ու գրույց ունենում նրանց հետ: Վերջիններիս վկայությամբ՝ երբեմն սպանություններով ավարտված այդ բռնություններն իրականում կատարել էին նույն գնդապետ Նոսկովի կազակները: Ուստի որպեսզի հայ կամավորներին նորից հանիրավի չմեղադրեն նման գործողությունների իրականացման մեջ, Թ. Նազարբեկյանը հրամայում է թույլ չտալ, որ նրանք առաջինը մտնեն Մուշ: Սակայն 1916 թ. փետրվարի 3-ին Մուշը գրավելու մասին նրան հեռագիր ուղարկած գնդապետ Նոսկովն այդ հրամանը ևս չի կատարում: Ստացվում է, որ եթե 1915 թ. հուլիսյան տարօրինակ նահանջի կազմակերպմամբ վերջինս նպաստել էր Տարոնի հայության բնաջնջմանը, ապա 1916 թ. հունվար-փետրվարին էլ կազմակերպում էր թուրքերի ու քրդերի սպանությունները և դրանց պատասխանատվությունը դնում հայերի վրա: Ակնհայտ է, որ սա պատահական զուգադիպություն չէր, այլ Արևմտյան Հայաստանի գաղութացման համար «բաժանի՛ր, որ տիրես» սկզբունքով իրականացվող՝ «այրված հողի» քաղաքականության արտահայտություն:

Գեներալ Թովմաս Նազարբեկյանի հուշերը հայերեն թարգմանությամբ տպագրվում են առաջին անգամ և առանց կրճատումների: Մեր միջամտությունները ներկայացված են ուղղագիծ փակագծերում: Բնագիրը պահպանվում է Հայաստանի ազգային արխիվում:

Քանի որ ռուսական հրամանատարության ձեռքի տակ եղած քարտեզը թուրքական էր, նրանում մատնանշված օտարահունչ ու աղավաղված տեղանունները վերծանելու և այդ վայրերի տեղանքը ճշտելու համար դիմել ենք **Գեղամ Մ. Բաղալյանի** օգնությանը, ինչի համար հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:

Ռուբեն Օ. Սահակյան
Պատմ. գիտ. դոկտոր

Տեսք 7

1916 թ. Նոր տարին Կովկասյան բանակը ստիպված էր դիմավորել մարտական ծանր պայմաններում: [1915 թ.] դեկտեմբերի 29-ին բանակի հիմնական մասը Սարի-ղամիշի ուղղությամբ անցավ հարձակման: Այդ ուղղությամբ մարտերն աստիճանաբար ծավալվում էին, իսկ 4-րդ կորպուսը, ավելի ճիշտ՝ 4-րդ կորպուսի մնացորդները շարունակում էին կատարել ուժեղացված հետախուզություն, որպեսզի հնարավորություն չտան թուրքերին իրենց զորամասերն ուղարկելու Էրզրումին օգնության, իսկ առայժմ կորպուսի գլխավոր դժվարությունը պայքարն էր բնության դեմ:

1916 թ. հունվարի 1-ին Սարիղամիշի ճակատի համար 4-րդ կորպուսի կազմից վերցվեցին Կովկասյան 5-րդ հրաձգային գունդը և 66-րդ հետևակային դիվիզիան: Այդպիսով հունվարի 1-ին 4-րդ կորպուսի կազմում մնացին Կովկասյան 6-րդ, 7-րդ և 8-րդ հրաձգային գնդերը, Հայկական 2-րդ դրուժինան, մի քանի աշխարհագրային դրուժինաներ և զորահանգրվանային վաշտեր:

Հունվարի 1-ին որպես Դերիկի ջոկատի հրամանատար՝ ես գեկուցեցի 4-րդ կորպուսի հրամանատարին հետևյալը. «Անընդհատ ձյուն է տեղում, և մոլեգնում է հողմը: Բոլոր ճանապարհները թաղված են խոր ձյան տակ: Հակառակորդի վերաբերյալ տեղեկություններ չեն ստացվել: Երեկ երեկոյան 5-րդ գնդի 1-ին գումարտակը Սարի-ղամիշի ճակատում մասնակցել է մարտի, որը շարունակվում է: [1915 թ.] դեկտեմբերի 29-ին 1-ին կորպուսի հետ կապ պահպանելու համար մեր աջ թևից Միրկամիր-դաղով ուղարկված 6-րդ գնդի դահուկորդները [հետախույզները] այսօր [1916 թ. հունվարի 1-ին] միայն վերադարձան Խանազիր, սակայն ճանապարհին ոչ ոքի չէին հանդիպել: [1915 թ.] դեկտեմբերի 30-ին հասել էին Կաս-Կալե գյուղ, որտեղ ոչինչ չէին գտել: Կաս-Կալեի առջևում և իրենցից աջ հրետանակոծության ձայներ լսելով՝ նրանք փորձել էին առաջանալ այդ կրակոցների ուղղությամբ, սակայն մրրիկը հնարավորություն չէր տվել: Այդժամ նրանք որոշեցին գետակի հունով վերադառնալ յուրայինների մոտ և, մեկ օր ու գիշեր ճանապարհ անցնելով, եկան Խանազիր»:

Երեկ թույլտվություն ստացա պահակային զորամասից հրետանին տեղափոխել Շեյխանի գյուղ, սակայն հրետանավորները չկարողացան հրամանը կատարել, քանի որ ճանապարհները չափազանց ձյունածածկ էին: Այսօր՝ առավոտյան ժամը 10-ից սկսած, հեռախոսակապը պահակային ջոկատի հետ խզված է: Գիշերը ճանապարհներն այն աստիճան էին ձյունով ծածկվել, որ հաղորդակցության հնարավորությունը բացարձակապես խզվեց: Գնդապետ Միրիկովը Շեյխանից ուղարկեց բոլոր վաշտերը, որպեսզի մաքրեն ճանապարհները և վերականգնեն կապը: Վաշտերը, ամբողջ օրն աշխատելով, կարողացան հասնել միայն ճանապարհի կեսին: Այս պահին ճանապարհները չեն մաքրվել, և կապը չի վերականգնվել:

Շեյխանից փոխգնդապետ Պլատոնովը հայտնում է, որ բուքը հնարավորություն չի տալիս մաքրելու ճանապարհը: Եթե մինչև երեկո կապը չվերականգնվի, և իրավիճակը չպարզվի, ես թույլ կտամ գնդապետ Միրիկովին գումարտակը Խանազիրից աշխատանքների համար ուղարկել Շեյխան: Բացի այդ՝ հրամայվել է, քանի դեռ եղանա-

կը խաղաղ է, պահակային գորամասը ժամանակավորապես մոտեցնել պահակային պահեստագորին: Իմ փորձից գիտելի, որ այնուհետև ճանապարհներն ավելի ու ավելի ձյունածածկ կլինեն, և իրավիճակը կբարդանա:

Նոսկովի ջոկատից Պատնոսի³ ուղղությամբ ուղարկված երկու վաշտերը դիտարկեցին Դալարուից հյուսիս ընկած քրդական գյուղերը, որոնք անմարդաբնակ էին: Կազակային հարյուրյակը և Հայկական դրոժինայի հեծյալներն ուղարկվեցին Վրկուտ⁴ գյուղ: Նրանց մոտենալու ժամանակ քրդերը՝ մոտ 200 հոգի, սկսեցին նահանջել դեպի Պալե Զուրդկան⁵: Հետապնդվելով մեր հեծելագորի կողմից՝ նրանք նահանջեցին դեպի Գավրիշ⁶ և Ջերակի⁶: Հակառակորդն ունեցել է առնվազն 10 սպանված: Մենք մարդկային կորուստներ չենք ունեցել: Դրոժինայում սպանվել է մեկ ձի: Երեկոյան ժամը 6-ին ջոկատը վերադարձավ Պատնոս՝ իր հետ բերելով հայերի՝ երեք մեծահասակ և մի տղա:

Պահակային ծառայության ջոկատների վիճակը ոչ միայն չէր բարելավվում, այլև ավելի ու ավելի էր վատթարանում: Ջախ տեղամասում գտնվող Դերիկի ջոկատի պետ, գնդապետ Օբրագցովից ստացա հետևյալ գեկուցագիրը. «Առաջապահից և պահակային գորամասից ստացվել են գեկուցագրեր, որ մոլեգնող բուքը խիստ դժվարացնում է պահակային ծառայությունը: Դետերը կորցնում են ճանապարհներն ու մոլորվում: Չնածածկույթն ավելացել է երկու արշինով: Ձնամրրիկի և ճանապարհների ու ուղիների փակվելու հետևանքով որոշ ուղեկալներ հետ են կանչվել: Մամուտալից ուղարկված պարեկախումբը ճեղքելով հասել է մինչև Մոլլա-Օսման: Այժմ վերադարձել են ուժասպառ եղած ձիերով, որոնք պիտանի չեն հետագա աշխատանքների համար: Ուղեկալներին տրվել են վառելիք և թաղիքներ, դաշտային պահակակետերը փոխվում են երկու ժամը մեկ, սակայն դա չի բացառում ցրտահարման հավանականությունը, քանի որ մարդկանց հագուստը մինչև գոտկատեղ թաց է, իսկ գիշերը խիստ սառնամանիքների հետևանքով ամբողջությամբ պատվում է սառույցով: Ձյունն այն աստիճան փափուկ է, որ հետիոտնը խրվում է մինչև հողը:

Հաղորդելով այս մասին՝ գեկուցում են Ջերո Գերագանցությանը, որ նախատեսված հետախուզությունը ծայրահեղ անբարենպաստ պայմաններում չի տալիս էական արդյունքներ, և մինչև լավ եղանակի հաստատումը մտադիր են սահմանափակվել մինչև Մոլլա-Օսման ընկած տարածքի լուսավորմամբ [հետախուզմամբ], իսկ հնարավորության դեպքում՝ ավելի հեռու: Իսնդրում են Ջերո Գերագանցությանը հետաձգել հետախուզությունը, մինչև կզան ավելի բարենպաստ ժամանակներ: Գնդապետ Օբրագցով»:

Իմ միջնորդությունը կորպուսի հրամանատարի առջև հետախուզությունը մինչև բարենպաստ ժամանակները հետաձգելու մասին պատասխանի չարժանացավ:

Ուժեղ ձնամրրիկի պատճառով հրամայեցի աջ պահակակետի վաշտերը հետ քաշել պահակային պահեստագոր:

3 **Քաղնոց** - գյուղ Դուբաղի գավառում (Երզրումի վիլայեթ):
4 **Վրկուտ** - գյուղ Արծկեի գավառում (Վանի վիլայեթ):
5 **Բալակորուկան** - գյուղ Արճեշի գավառում (Վանի վիլայեթ):
6 **Ջիրաքի** կամ **Ջիրաքցի** - գյուղ Արծկեի գավառում (Վանի վիլայեթ):

Հունվարի 2-ին անվերջ ձյուն էր տեղում, և մոլեգնում էր ուժեղ բուքը: Մեծ ճանապարհը, որը Չուխ-Գյաղուկի լեռնանցքով Ալաշկերտի հովտի հետ հաղորդակցության միակ ուղին էր, մեծ դժվարությամբ մաքրվում էր աշխարհագրային բանվորական դրուժինաների և Խանիկում տեղակայված կորպուսի պահեստագործում գտնվող 6-րդ գնդի գումարտակի կողմից: 6-րդ գնդի հրամանատարը ստիպված էր Խանազկից գնալ Շեյխան, որպեսզի ղեկավարեր ճանապարհի մաքրումը մինչև պահակային պահեստագործ, որը մի քանի օր կտրված էր Շեյխան գյուղից, որտեղից այն ստանում էր պարեն ու վառելիք:

Այդ օրը ես կորպուսի հրամանատարից ստացա կարգադրություն՝ ուշադրություն չդարձնելով եղանակին՝ Դերիկի ջոկատի ողջ ճակատով շարունակել ուժեղացված հետախուզությունը: Այս կարգադրության հիման վրա հունվարի 2-ին՝ երեկոյան ժամը 6-ին, Դերիկի ջոկատի ձախ թևի հրամանատարին ուղարկեցի հետևյալ հրամանը. «Լուսաբացին ուժեղացված հետախուզական ջոկատ ուղարկե՛ք Ֆերնակի, Չուրավայի, Բայրակ-դարի ուղղություններով՝ հեռավոր հետախուզության համար: Միաժամանակ նախապատրաստվե՛ք մոտ օրերս այդ ուղղությամբ ողջ ջոկատով անցնելու վճռական հարձակման: Ձեռնարկե՛ք միջոցներ, որպեսզի հնարավորինս հստակ պարզեք հակառակորդի ուժերը, ինչպես նաև անվտանգության միջոցներ՝ ելման կետ հետախուզների անվտանգ վերադարձի համար: Կարևոր է նաև Ալթունթախթ-թափասի - Կոժիկ-թափասի ուղղությունների լուսավորումը [հետախուզումը]: Նշված ուղղությամբ թողնել ուժեղ առաջակալ գործամաս, քանի որ հարձակման է անցնելու ողջ ջոկատը»:

Բացի այդ՝ հրամայեցի գնդապետ Օրբագցովին խիստ զգույշ լինել Ֆերնակ-Բայրակ-դար ուղղությամբ գործող հետախուզական ջոկատի գործողություններում, քանի որ չնայած [թուրքական] 36-րդ դիվիզիայի գործամասերը հայտնաբերվել էին 1-ին կորպուսի ճակատում Դիք-դաղի գրոհի ժամանակ, սակայն չի բացառվում, որ 36-րդ դիվիզիայի գործամասերի զգալի մասը թողնված լինի Բայրակ-դարի շրջանում: Միաժամանակ ցանկալի է նշված ուղղությամբ հնարավորինս խորանալ հակառակորդի դասավորության մեջ:

Հունվարի 2-ին՝ ժամը 2-ն անց 20 րոպեին, Դերիկի ջոկատի աջ տեղամասից ստացվեց գեկուցագիր. «4-րդ օրն է, ինչ բուքը չի դադարում: Բոլոր ճանապարհները ծածկված են ձյունով: Մաքրված տեղամասերը կրկին ծածկվում են ձյունով: Բոլոր ուղենիշները ծածկված են ձյունով, ուստի ճանապարհները փակ են պահակային պահեստագործի և ջոկատի միջև: Միայն այսօր հաջողվեց հեռախոսակապ հաստատել: Պարենը շափակելով բերում էին մարդիկ: Այժմ այդ հնարավորությունից զրկված է աջ տեղամասը: Ձիերը չեն կարողանում անցնել: Վառելիք չկա, և հնարավոր չէ բերել: Հրամայեցի աջ և ձախ տեղամասերի պահակային վաշտերը ետ տանել պահակային պահեստագործի մոտ: Առայժմ այստեղ կազակային հարյուրյակը չի կարող հետախուզություն կատարել, ուստի խնդրում եմ թույլ տալ նրա մի մասը տեղափոխել Չելկանի⁷ կամ Խանազկի, ինչը կթեթևացնի անասնակերի ապահովումը: Կազակային հարյուրյակում սատկել է 3 ձի, և հարյուրյակը ծանր վիճակում է»:

7 **Չելկանի** - գյուղ Ալաշկերտում (երգրումի վիլայեթ):

Հունվարի 2-ին, համաձայն 4-րդ կորպուսի շտաբի կարգադրության, ես զգուշացրի Դերիկի ջոկատի աջ տեղամասի պետ, գնդապետ Միլիկովին պատրաստ լինել մեկ մարտկոցով անհապաղ անցնելու հարձակման: Այդ գնդի (6-րդ) մեկ գումարտակ մնալու է Շեյխանում՝ պահակային ծառայության համար: Հնարավոր է նաև առաջացումը դեպի Դայար:

Կովկասյան 5-րդ հրաձգային գնդի գումակը, որը հետևեց գնդին, հունվարի 2-ին վերադարձավ Չելկանի, քանի որ ճանապարհները պատված էին խոր և անանցանելի ձյունով:

Հունվարի 3-ին՝ ցերեկվա ժամը 6-ին, բանակի հրամանատարից ստացվեց հրաման՝ Կովկասյան 6-րդ հրաձգային գնդի 3 գումարտակներն ու մեկ մարտկոց անհապաղ ուղարկել Աշի-Իյաս՝ 1-ին կորպուսի հրամանատարի ենթակայության տակ: Հաղորդվեց նաև արշավի երթուղին. հունվարի 3-ին մեկ գումարտակ Շեյխանից պետք է ուղևորվի Ռիդիկան, մյուսը՝ Խանազիրից Ռիդիկան, երրորդը՝ Խանիկից [Ռիդիկան], և մարտկոցը՝ Խանազիրից Քյուրդանա: Հունվարի 5-ին ողջ ջոկատը պետք է կենտրոնանա Աշի-Իյասում: Գիշերակացի մասին զեկուցել 1-ին կորպուսի հրամանատարին՝ Սոլակրի և 4-րդ կորպուսի շտաբ:

Կովկասյան 6-րդ հրաձգային գնդի 3 գումարտակների մեկնելուց հետո 4-րդ կորպուսի ուժերն էլ ավելի պակասեցին: Հետևակի կանոնավոր զորամասերից մնացին Կովկասյան հրաձգային դիվիզիայի 6-րդ գնդից 1 գումարտակ և 7-րդ ու 8-րդ գնդերը:

6-րդ գնդի 3 գումարտակների ու 1 մարտկոցի մեկնելու և Դերիկի ջոկատի աջ թևում մեկ գումարտակ թողնելու մասին ես տեղեկացրի Դերիկի ջոկատի ձախ տեղամասի պետ, գնդապետ Օբրագովին:

Կորպուսի շտաբից գիշերը՝ ժամը 1-ն անց 20 ռուպլեին, ստացվեց օպերատիվ հեռագիր. «10 վերստանոց քարտեզ: Հունվարի 1-ին Թուրքեստանյան կորպուսի ճակատում՝ Սևրիչայի հովտում, մեր հետախույզները և կամավորները⁸ ճնշեցին թուրքական պահակային զորախմբին: Թուրքեստանյան 16-րդ գնդի զորամասը համառ մարտից հետո գրավեց Նորշենի զանգվածի Արծվի բույնը և մի քանի բարձունքներ, որոնցից մեկը՝ շրջանաձև խրամատով: Ընդ որում, գրավեցին թուրքական երկու գործող գնդացիք, սվինահարեցին շատերին՝ մինչև 200 հոգի, կան գերիներ: Թուրքերը նահանջեցին Խոզախոր⁹: Ցերեկվա ժամը 3-ից հետո թուրքերը սկսեցին հավաքվել Էգրեկից¹⁰ 2 վերստ արևելք գտնվող ձորում՝ ճգնելով շրջանել գնդի ձախ թևը, սակայն այդ փորձը ետ մղվեց գնդացրային կրակով, և թուրքերը ցրիվ եղան: Երեկոյան թուրքերը սկսեցին հավաքվել Օլթի-չայի արևմտյան ափին:

Գեներալ Վոլոշինի¹¹ զորամասը երեք զորայուններով, ճանապարհի բացելով խոր ձյան միջով և շալակած քարշ տալով թնդանոթները, Էխիզ-Գյուլի կողմից գլխավոր լեռնաշղթայով հարավ-արևելքից, դանդաղորեն հարձակվում է Կուզուչանի վրա: Բուքը մոլեգնում է: Թուրքական զետևափոր տնակները գրավելու օրը մեջտեղի զորայունը

8 Տվյալ պարագայում «охотники» բառը չպետք է հասկանալ «որսորդներ» իմաստով: Այդպես էին անվանում նաև այն զինծառայողներին, որոնք կամավոր մասնակցում էին այս կամ այն վտանգավոր առաջադրանքի իրականացմանը:

9 Կժոխտոր - գյուղ Թորթումում (Էրզրումի վիլայեթ):

10 Ագրակ - գյուղ Թորթումում (Էրզրումի վիլայեթ):

11 Վոլոշին-Պետրոհենկո Ֆյոդոր Մոխսեյի (1860-1930-ից հետո) - ռուս զորահրամանատար, զեներալ-մայոր (06.12.1915), Ղոնի հետևակային բրիգադի պետ (28.12.1915-12.08.1916):

հափշտակեց 200 փուլթ այլուր, 30 փուլթ պահածոյացված միս, 2 փուլթ աղ, 15 փուլթ հացահատիկ, 200 փուլթ պաքսիմատ, 10 հրացան, մեկական արկղ նռնակ և ռուսը: Գեներալ Վորոբյովը¹² լուսաբացին կռվի մեջ մտավ Մապա - Գամի շրջանում, և ժամը 11-ին մեր զորամասերը թուրքերին դուրս մղեցին Մապա-Գամից՝ գերելով 2 սպաների և 47 սակյարների, իսկ խրամատներում՝ փամփուշտներով լի պարկեր և մոտ 1000 փուլթ չոր խոտ: Թուրքերի մի մասը նահանջեց Կայանդադ, իսկ մյուսը՝ Կարաբիխ:

Շարունակելով հարձակումը՝ զորայան առաջապահ զորամասերը երեկոյան հասան Կարաբադիսի շրջան: 1-ին կորպուսի ճակատում՝ գեներալ Ռյաբինկինի տեղամասում, գեներալ Լիստոչկինի զորայունը Նոր տարվա նախօրյակին Ալաբիխսայի ճակատում անցավ հարձակման: Չորքերը հարձակվում էին աջից գումարտակներով՝ աջ թևում ունենալով կուբանցիներ ելիզավետպոլցիների երկու վաշտերի հետ, ձախից՝ բաքվեցիներ ու երկու դրուժինա պահեստագործում և երկու գումարտակ ելիզավետպոլցիներ: Առավոտյան ժամը 5-ին զորքերը եռանդուն հարձակում սկսեցին և նռնակներով ու սվիններով թուրքերին դուրս մղեցին խրամատներից: Թուրքերը կատաղի մարտ սկսեցին: Չնայած նրանց բացած գնդացրային և հրետանային կրակին՝ մեր զորքերն առանց հապաղելու գրոհեցին ամրությունները բոլոր կողմերից, գրավեցին 4 թնդանոթ, իսկ աջ թևում՝ Ազաքոյի սարահարթում՝ 2 թնդանոթ, որոնցից մեկը՝ ծանր տեսակի¹³, և 6 գնդացիր:

Շարունակելով հարձակումը՝ մեր զորքերը ժամը 3-ին գրավեցին Մողլամ-Մելիք և Մաթաուրթ¹⁴ գյուղերը՝ վերջինում տիրանալով հրետանային զինամթերքի մեծ պաշարների ու զինվորական նյութերի, սակրային գործիքների, կաթսաների ու պարենի, գերեցին 130 սպաների և 330 ասքյարների: Մեր հրետանին աջակցում էր զորամասերի հարձակմանը:

Արաքսի ձախ ափին գնդապետ, իշխան Նիժերաձեի¹⁵ զորայան զորքերը հետ էին մղում թուրքերի համառ հարձակումները: Դեկտեմբերի 31-ին Վերին Թախանջիի շրջանում՝ այդ նույն զորայան ձախ թևում, մեր կողմից գրավվեց շրջանաձև խրամատը: Մեր զորքերը շարունակում էին գրոհել Դիք-դաղը, որտեղ դիրքավորվել էին մոտ 2 գունդ թուրքեր, և երեկոյան գրավեցին Դիք-դաղի առաջապահ խրամատները: Մեր կորուստները պարզվում են:

Վան-Ուրմիայի շրջանում՝ Ոստանից արևմուտք (արևելք - Ռ. Մ.), Նեխրի գյուղից 2 վերստ արևելք, որն ընկած է Կալադևից արևմուտք և Ուշունեից¹⁶ հյուսիս՝ Սուլեյմանովա գյուղի մոտ, տեղի է ունեցել փոխհրաձգություն հեծյալ պարեկախմբերի միջև: Դեկտեմբերի 31-ին Համադանի ուղղությամբ տեղակայված գեներալ Բարաթովի ռազմարշավային կորպուսի շրջանում մեր զորքերը գրավեցին Քյան-Գևերսը: Մեր կորուստներն են՝ 1 սպանված և 6 վիրավոր կազակ: Հակառակորդը թողել է ավելի քան 30 դիակ, և 5 խռովարարներ գերվել են: Դորլետի-բալկյան ուղղությամբ տեղի են ունեցել ընդհարումներ խռովարարների հետ: Գեներալ Բարաթովի զեկուցագրի հա-

12 Վորոբյով Նիկոլայ Սիխայի (1855-?) - գեներալ-լեյտենանտ, Կովկասյան 4-րդ հրաձգային դիվիզիայի պետ, Սպիտակ շարժման մասնակից:

13 Նկատի ունի ավելի մեծ տրամաչափի:

14 Սարդաուր - գյուղ Մանազկերտի գավառում (Բիթլիսի վիլայեթ):

15 Նիժերաձե Վադիմի Վադիմի - իշխան, գնդապետ, 1915-1916 թթ. Դերբենոյան 154-րդ գնդի հրամանատար:

16 Ուշուն-Շնավի - բնակավայր պատմ. Պարսկահայքում:

մաձայն՝ 9 հարյուրյակով, 2 լեռնային թնդանոթով և 4 գնդացրով ետ են շարտել խռովարարներին: Մեր կորուստներն են՝ վիրավորվել են 1 կազակ և 1 ձի: Կասյիտան Կորյիցկի»:

6-րդ գնդի հեռանալուց հետո Դերիկի ջոկատի աջ տեղամասը պահպանվում էր մեկ գումարտակի կողմից: Այդ գումարտակից պահպանության համար առանձնացվեցին երկու վաշտեր, որոնցից մեկը գտնվում էր տեղամասի մեջտեղում, իսկ մյուսը երկու գնդացիներով՝ պահեստագործում: Այս տեղամասի պետը նախատեսում էր հունվարի 4-ին մեկ կիսավաշտով զբաղեցնել մեջտեղի տեղամասը, իսկ մյուս կիսավաշտով՝ ձախ տեղամասը՝ մեկ վաշտ թողնելով պահեստագործում:

Այսպիսով՝ վերջիվերջո աջ տեղամասում տեղակայվեց այնպիսի պահպանություն, որի մասին ես վաղուց խնդրում էի կորպուսի հրամանատարին, ով, չգիտես ինչու, դեմ էր դրան: Ի միջի այլոց, այդ ընթացքում այնքան ուժեր գուր ծախսվեցին, մարդկանց ու կենդանիների շրջանում զոհեր եղան, և մեծ թվով մարդկանց վերջույթներ ցրտահարվեցին:

Դերիկի ջոկատի ձախ տեղամասի համար առանձնացված հետախուզական ջոկատի համար առանձնացվեցին 7-րդ գնդի մեկ վաշտ, նույն գնդի հետախույզների ստորաբաժանում և 1/2 հարյուրյակ՝ փոխգնդապետ Գապոնովի հրամանատարությամբ: Հունվարի 2-ի երեկոյան ողջ ջոկատը կենտրոնացվեց Մոլլա-Օսմանում: Վաղ առավոտյան ջոկատն ուղևորվեց Ֆերնակ-Բայրակ-դար ուղղությամբ: Չախ թևն ապահովելու նպատակով ձախ տեղամասից Մինաին-կումիի ուղղությամբ ուղարկվեց մեկ հարյուրյակ:

Ես կարգադրեցի գնդապետ Օբրագովին, որ միջոցներ ձեռնարկի պաքսիմատի անձեռնմխելի պաշարները լրացնելու համար, եթե անհրաժեշտ լինի անհապաղ առաջանալ:

Աստիճանաբար փոխգնդապետ Գապոնովի հետախուզական ջոկատն ուժեղացվեց և հասցվեց մինչև գումարտակի՝ ստանալով հրետանի և 2 լեռնային թնդանոթ: Այս ջոկատը Չուրավա գյուղ հասավ առավոտյան ժամը 10-ին: Չուրավայից դեպի Կալու - Գաշան-կումի և Ֆերնակ ուղարկվեցին հետախուզական երեք ստորաբաժանումներ: Գաշան-կումին և Կալուն գրավվեցին մինչև ժամը 11-ը, իսկ Ֆերնակ հետախույզները չկարողացան հասնել մինչև ժամը 2-ը:

Առջևում գտնվող մերձակա բարձունքներում որևէ պահակակետ չհայտնաբերվեց: Ճանապարհներ և արահետներ չէին երևում: Հետևակը մեծ դժվարությամբ իր համար ճանապարհ էր բացում, նրա հետևից գնում էին հրետանին ու հեծելազորը: Չուրավայից ջոկատը դուրս եկավ առավոտյան ժամը 11-ին՝ մտադրվելով գիշերել Ֆերնակում, իսկ հաջորդ օրը՝ առավոտյան, պետք է առաջանար դեպի Կեֆրի - Բայրակ-դար:

Հունվարի 4-ի գիշերը՝ ժամը 11-ն անց 30 րոպեին, 4-րդ կորպուսի շտաբից ստացվեց հեռագիր. «Հունվարի 4-ի գիշերը 1-ին կորպուսի ողջ ճակատով սկսվել է հարձակում: Մենք գրավել ենք Դիք-դաղ և Շիրգեր լեռները: Թուրքերն այնքան հսպճեա են նահանջում, որ հնարավոր չէ նրանց հասնել: Դիք-դաղից հյուսիս երևում են մեծ հրդեհներ: Հավանաբար թուրքերը վառում են իրենց պաշարները: Զյուրիքյոյի մոտենում են մեծաթիվ թուրքական օգնական ուժեր: Կասյիտան Կորյիցկի»:

Վեյ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) րարի, թիվ 2 (70), ամբի-հունիս, 2020

Այս հեռագիրը ստանալուց հետո ես տեղեկացրի Դերիկի ջոկատի տեղամասերի պետերին, որ 1-ին կորպուսի տեղակայման վայրից գեներալ Չիկովանին¹⁷ Բայրակ-դարի ուղղությամբ ուղարկել է Մանջուրյան հարյուրյակը: Բացի այդ՝ կարգադրեցի գնդապետ Օբրագովին, որ այդ մասին տեղյակ պահի փոխգնդապետ Գապոնովին, որպեսզի բացառվի յուրայինների գնդակոծումը, երբ նրանք մոտենան Բայրակ-դարին:

Հունվարի 5-ի երեկոյան փոխգնդապետ Գապոնովը հաղորդեց, որ մեծ դժվարությամբ հասել է Գաշան-կումի: Այնուհետև ձիերը հրաժարվել էին առաջանալուց, ուստի նա հրամայել էր մեկ վաշտի, հետախույզների խմբին ու կիսահարյուրյակին ջգնալ Ֆերնակ, իսկ մնացածին՝ վերադառնալ Չուրավա՝ գիշերելու:

Ըստ երևույթին, Ֆերնակը և մերձակա բարձունքները հակառակորդի կողմից գրավված չէին: Հետախույզների խումբը, Կալուից արևմուտք գտնվող երեք խրամատներով անցնելով, հակառակորդի չհանդիպեց: Մեկ այլ խումբ, Գաշան-կումիից երեք վերստ դեպի արևմուտք շարժվելով, նույնպես հակառակորդի չհանդիպեց: Երրորդ խումբը խոր ձյան պատճառով Ֆերնակ հասնել չկարողացավ: Առավոտյան ջոկատը շարունակեց առաջխաղացումը, սակայն վաշտը, հետախույզների խումբը և կազակային կիսահարյուրյակը կրկին չկարողացան հասնել Ֆերնակ, քանի որ մարդիկ բառիս բուն իմաստով հյուծվել էին ճեղքելով երկու արշինի¹⁸ հասնող ձյունը, ուստի որջ ջոկատը կենտրոնացավ Չուրավայի մոտ:

Սինանին-կումի¹⁹ ուղարկված հետախույզների խումբը հասավ Ալթունթախթափասի, որտեղ և գիշերեց: Հակառակորդը ոչ մի տեղ չհայտնաբերվեց: [Հեռախոսային] մալուխը հասցվեց մինչև Մոլլա-Օսման: Ես հրամայեցի կապվել Չուրավայի հետ: Վաշտը և հետախույզների խումբը թողնվել էին Չուրավայում, և կարգադրված էր հետախույզությունը զգուշորեն կատարել մինչև Բայրակ-դար, իսկ մնացած ջոկատը, քանի որ չուներ ծածկ ունեցող շինություններ, վերադարձավ Մոլլա-Օսման, որտեղ նրան հրամայվեց մնալ մինչև հետախույզության ավարտը:

Ես հրամայեցի գնդապետ Օբրագովին, որ Չուրավայում գտնվող վաշտն ու հետախույզների խումբն ուղարկի Կեֆրիի և Բայրակ-դարի ուղղությամբ և աշխատի կապ հաստատել գեներալ Չիկովանիի հեծյալ հարյուրյակի հետ: Մնացած ջոկատին, որը գտնվում էր Մոլլա-Օսմանում, հրամայվեց ամեն պահի պատրաստ լինել առաջ շարժվելու:

Հունվարի 5-ին՝ առավոտյան ժամը 9-ին, կորպուսի շտաբից ստացվեց հեռագիր. «Գեներալ Չիկովանին հեռագրում է. «Հրամայում եմ պահակային զորամասին զբաղեցնել՝ Սաղիմանյան տեղամասին՝ Ֆերշաղ - Փինատուզ²⁰ գիծը, Քափանակ - Կիզյարդիգսկյան²¹ տեղամասից արևմուտք ընկած բարձունքները և ապա Կարադանիխի լանջերը, Տուրնա-գյուղից հյուսիս-արևմուտք և հարավ-արևմուտք գտնվող Կաբաղեշև-Դելիբաշի բարձունքները՝ ապահովելով իր ձախ թևը Բայրակ-դար տանող ճանապարհի ուղղությամբ գտնվող Խալիաս-թափասի կողմից»: Ֆերնակ ուղարկ-

17 **Չիկովանի Վիսարիոն Պավելի** (1856-?) - գեներալ-մայոր, Կովկասյան 2-րդ պետական աշխարհազորի բրիգադի պետ, օսեթական հետևակ բրիգադի հրամանատար (18.07.1916-1917):

18 1 արշինը հավասար է 71 սանտիմետրի:

19 **Սինանզոմ** - գյուղ Բաղնոցում կամ Մանազկերտում:

20 **Քինադուս** - գյուղ Բասենում (երգրումի վիլայեթ):

21 **Կզլարկալե** (?) - գյուղ Բասենում (երգրումի վիլայեթ):

ված հետախուզական ջոկատի հրամանատարին զգուշացրե՛ք, որ չգնդակոծի յուրայիններին: 433, Մոլիվանի²²»:

Այս հեռագրի բովանդակությունը ես հաղորդեցի Դերիկի ջոկատի ձախ տեղամասի պետին:

Փոխգնդապետ Գապոնովի հետախուզական ջոկատը, որը կազմված էր վաշտից, հետախույզների խմբից և կազակների կիսահարյուրյակից, հունվարի 5-ին՝ առավոտյան ժամը 6-ին, դուրս եկավ Չուրավայից երեք ուղղություններով. առաջինը շարժվեց Չուրավայից հյուսիս ընկած բարձունքները, երկրորդը՝ դեպի Ֆերնակ, և երրորդը՝ դեպի հարավ՝ Միրկա-հիլում գտնվող հարյուրյակի հետ կապ հաստատելու և ջոկատի ձախ թևը պաշտպանելու համար:

Հետախույզները զեկուցեցին, որ Ֆերնակի մոտ խրամատները դատարկ են, և Ֆերնակի շրջանում հակառակորդ չկա: Ջոկատը մեծ դժվարությամբ էր առաջանում՝ ճանապարհ բացելով խոր ձյան մեջ ժամում կես վերստ արագությամբ, բեռնակիր կենդանիներին դուրս բերելով ձյան միջից: Մարդիկ և կենդանիները սաստիկ ուժասպառ էին եղել: Ցերեկը՝ մոտ ժամը 12-ին, փոխգնդապետ Գապոնովի ջոկատը երկու գորայուներով առաջացավ Ֆերնակի ուղղությամբ գտնվող բարձունքները, իսկ ձախ գորայուները շարժվեց Կալուից արևմուտք: Ճանապարհը շատ դժվարին էր: Ջոկատը բարձրացավ Ֆերնակի բարձունքը և դիտարկեց Ալթունթախթ-թափասիի պահակակետերը:

6-րդ գնդի 3 գումարտակների հետ գնդապետ Միլիկովի հեռանալուց հետո նրա փոխարեն Դերիկի ջոկատի աջ տեղամասի պետ նշանակվեց Կովկասյան 2-րդ հրետանային դիվիզիոնի հրամանատար, փոխգնդապետ Նիկիֆորովը:

Հունվարի 5-ի երեկոյան ժամը 7-ին նրան [փոխգնդապետ Նիկիֆորովին], կորպուսից ստացված հրամանի համաձայն, կարգադրեցի իր մարտկոցով և շարժապահեստով անհապաղ Շեյխանից ուղևորվել Խանազոր, աջ տեղամասի հրամանատարությունը հանձնել 6-րդ գնդի գումարտակի հրամանատար կապիտան Բոգուսլավսկուն, իսկ մանրամասն առաջադրանքը նա կստանար Խանազորում:

Հունվարի 5-ի երեկոյան ժամը 11-ն անց 30 րոպեին ստացվեց գնդապետ Օբրագովի զեկուցագիրը. «Հետախուզական ջոկատը ցերեկը՝ ժամը երեքին, հասավ Կեֆրի գյուղ: Ֆերնակ գյուղն ամբողջությամբ քանդված է: Կեֆրի գյուղը հարմար է երման դրությամբ: Թիկունքի հետ կապ հաստատելը շատ դժվար է խոր ձյան պատճառով, որը հասնում է երկուսուկես արշինի: Մարդիկ և ձիերը խրվում են ձյան մեջ: Կեֆրիից դեպի Բայրակ-դար ուղարկվել է հեծելապարեկ՝ պարզելու համար, թե այն ում կողմից է գրավված: Հակառակորդը մինչև հիմա չի հայտնաբերվել: 221, Օբրագով»:

Այդ նույն օրը, համաձայն կորպուսի շտաբի կարգադրության, Խանազորում Կովկասյան 2-րդ հրետանային դիվիզիոնի հրամանատար, փոխգնդապետ Նիկիֆորովին հրամայվեց [հունվարի] 6-ի առավոտյան մեկ դասակով գնալ Դերիկ, իսկ մյուսն ուղարկել Դութախ՝ Մանջանի ջոկատի պետ Պենևի տրամադրության տակ:

Գիշերը՝ ժամը 11-ին, ես ձախ ջոկատի պետ, գնդապետ Օբրագովին հրամայեցի վաղը՝ հունվարի 6-ին, կազակների կիսահարյուրյակն ուղարկել հետախուզության

վե՛ր համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) Կարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

22 Մոլիվանի Զախարի Ասլանի (1867-1933) - գեներալ-լեյտենանտ, Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի շտաբի պետ (18.07.1915-20.03.1917):

Այլընտրանքային թափաստի շրջանը, Մոլլա-Օսմանից երկու թնդանոթ ուղարկել Մոլլա-Բեքիր, որտեղ կենտրոնացնել երկու գումարտակ, որոնք հունվարի 7-ին պետք է առաջանային Սինանին-կումի - Գամի²³ ուղղությամբ, փոխզնդապետ Գապոնովի հետախուզական ջոկատն ուժեղացնել մեկ վաշտով և ուղարկել Բայրակ-դար - Կեֆրիի շրջան: Չոկատը պետք է կապ հաստատեր առաջին կորպուսի զորամասերի հետ: Չոկատի մնացած զորամասերը պետք է կենտրոնանային Աբդուրահման - Չալո - Սեյդ շրջանում:

4-րդ կորպուսի շրջանում ուժեղացված հետախուզության ժամանակ Սարի-դամիչի ճակատում մարտերը մեծապես մեր օգտին էին ընթանում: Հունվարի 5-ին՝ ժամը 11-ն անց 5 թուպեին, կորպուսի շտաբից ստացվեցին հետևյալ հեռագրերը. «Բանակի շտաբից հեռագրում են, որ հունվարի 5-ի առավոտյան համառ մարտերից հետո թուրքերը լքեցին իրենց ռազմաճակատի բոլոր ամրությունները Թորթում գյուղից մինչև Խալյա - Սադադա՝ 150 վերստ երկայնքով՝ վերջապահներով պաշտպանելով Հասան Կալեի շրջանը, իրենց կազմալուծված զորքերի գլխավոր ուժերն ուղղելով Էրզրումի պաշտպանությանը: Կապիտան Կորիցկի»:

Կորպուսի շտաբից ժամը 12-ն անց 10 թուպեին. «Հունվարի 4, 2 վերստանոց քարտեզ, ռազմարշավայինի համար 20 վերստանոց: Գեներալ Լյախովի ջոկատի հետ փոխհրաձգություն: Թուրքեստանյան կորպուսում պլաստուններն առաջացել են դեպի հարավ և գրավել Գյուլի-Բադդատյան լեռնաշղթան (երկու վերստանոց քարտեզով 948-րդ բարձունքը): Դրանից հարավ մեր զորամասերը մարտերով գրավել են Այինկորի լեռնանցքը և Աբդուստից արևմուտք ընկած բարձունքները՝ վերցնելով որոշ քանակությամբ փամփուշտ և հանդերձանք:

Կարամանի գագաթը, որը պաշտպանվում էր [թուրքական] 34-րդ դիվիզիայի տարբեր գնդերի 6 գումարտակներով և 4 գնդացիներով, գրավելուց հետո թուրքերը նահանջեցին Նաջանսար: Մեր կորուստները չնչին են, ինչը բացատրվում է թուրքերի բարոյալքված վիճակով և գնդապետներ Տրեսկինի ու Վինգերի զորասյուների համաձայնեցված զործողություններով: Խազախարից երկու վերստ արևմուտք թուրքերից գրավված գետնափոր տնակների կայանը վկայում է ծայրահեղ հապշտապ նահանջի մասին: Թողնվել են սպայական իրեր, մեծաքանակ զենք, փամփուշտներ և հանդերձանք: Գեներալ Վոլոշինի զորասյունը, մարտերով առաջանալով, գրավել է Կարաչո լեռնանցքը և կենտրոնանում է Չերքագան լեռնանցքի շրջանում: Գերվել են 4 սպա և 91 ասքյար, գրավվել 1 գնդացի և 125 հրացան: Նահանջի ճանապարհին թափված են մեծ թվով հրետանային արկղեր արկերով: Կուզուչանի տակ կան 300-ից ավելի ասքյարների դիակներ:

Վորոբյովի զորայան զորամասերը, գիշերը հարձակվելով Քյոփրիքյոյի վրա, գրավեցին այն: Առաջին կորպուսի զորամասերը գիշերը՝ ժամը երկուսին, նույնպես մոտեցան Քյոփրիքյոյին: Գերվել են մեկ սպա և 117 ասքյար, գրավվել են մարտական հրացաններ, փամփուշտների արկղեր և ձեռքի նռնակներ: 4-րդ կորպուսի հետախուզական ջոկատը հասել է մինչև Խոթովա:

Վանում և Ուրմիայի շրջանում տեղի է ունեցել փոխհրաձգություն թուրքական հեծելապարկների հետ: Ուրմիայից հարավ մեր հեծյալ պարեկը բախում է ունեցել Թալագու գյուղի արևմտյան հատվածի քրդերի հետ և ետ շարտել նրանց դեպի հարավ:

23 Պատճ. կամ Խամե - գյուղ Խնուսի գավառում (Էրզրումի վիլայեթ):

Հունվարի 3-ի առավոտյան Կերիխնիլասյան ուղղությամբ հակառակորդը հրետանու աջակցությամբ անցել է հարձակման Տյան-Գավերը գրաված մեր զորամասերի դեմ: Այս մարտի ավարտի մասին զեկուցագրեր չեն ստացվել: Միրզա Կումիկ խանի ելուզակախմբերը ոչնչացնելու համար կազմակերպվել է ռազմարշավ, որի հետևանքով ելուզակախումբը շրջապատվել է Մոսուլի մոտ, և կռվից հետո այդ քաղաքը գրավվել է: Ավագակախումբը ցրվել է, իսկ պարագլուխները նախքան քաղաքի գրավումը փախել էին լեռները: Հետապնդումը շարունակվում է: Կապիտան Կոբլիցկի»:

Գիշերը՝ ժամը 12-ն անց 45 րոպեին, կորպուսի շտաբից. «Գնդապետ Տրեսկինի զորայունը շարունակում է հարձակումը և հակառակորդի՝ Վիբերգից Կոչ հարձակման պատճառով գրոհեց Կարամեկի գանգավածը: Գնդապետ Վիբերգի զորայունը, Պարտանուսից հարձակվելով, գրոհում է հարավ-արևելքում գտնվող բարձունքները՝ համագործակցելով գնդապետ Տրեսկինի զորայան հետ: Գեներալ Վոլոշինի մնացած զորամասերը շարունակում են հարձակումը դեպի Կարյազի թոփասի լեռնանցքը: Հունվարի 3-ի գիշերը՝ Կուզունչանի գրոհի ժամանակ, գերվել են 23 սպա և 188 սաքյար: Մեծ թիվ են կազմում սպանված թուրքերը: Գեներալ Վոլոշյովի զորայունը մարտերով առաջանում է Կարաբանիսից դեպի թուրքերի թիկունքը: Կարաբանիսում գրավվել են ռազմամթերք տեղափոխող մեկ սայլ, մոտ 70 հրացան և շուրջ 100 արկղ՝ հրետանային արկերով, մարտական հրացանների փամփուշտներ, 12 վրան, հացի փուռ և պաքսիմատի ու այլուրի մեծ պաշար: Գյուղում գերվել է 35 սաքյար:

1-ին կորպուսի շրջանում կուբանցիների գումարտակը գրավել է Ջիլյա-դեյլայի գագաթը և նրա հարավային լանջով քշում է թուրքերին: Արաքսի հյուսիսային ափին մեր զորամասերը, նեղելով թուրքերին, գրավել են Կալինդեր²⁴ գյուղը և թուրքերին ետ շարտել դեպի Նեդերվինց-Գերյան: Թուրքերը ցերեկը հրկիզել են իրենց պահեստները Կալինդերում: Երեկոյան [թուրքերի կողմից] լքվել է Պեդերվալիդ գյուղը: Արաքսի հարավային ափին մեր զորամասերը կատաղի մարտերից հետո գրավել են Կարիխ և Չիջերիկ գյուղերի բարձունքները: Աջ թևում մեր զորամասերը շարունակել են Դիք-դաղի գրոհը, երեկոյան հասել են Դիք-դաղի վերջին սանդղաձև խորշին: Ռազմաճակատի մնացած հատվածներում մարտական բախումներ տեղի չեն ունեցել: Կապիտան Կոբլիցկի»:

Ուժեղացված հետախուզությունից հետո, երբ պարզվեց, որ Դերիկի ջոկատի ձախ առաջապահի դիմաց գտնվող հակառակորդը նահանջել է իր ամրացված դիրքերը, կորպուսին հրաման տրվեց Սանջանի զորամասերի և Դերիկի ջոկատի ձախ թևի առաջանալու մասին: Այդ հրամանի հիման վրա ես Դերիկի ջոկատին տվեցի հետևյալ հրամանը. «Քարտեզը՝ թուրքական 5 վերստանոց, N 3: Գյուղ Դերիկ, 1916 թ. հունվարի 6, առավոտյան ժամը 10:

1. Մարիդամիչի ճակատում թուրքական բանակը նահանջում է Էրզրումի ֆորտերի²⁵ պաշտպանության տակ: Քյոփրիքյոյը գրավվել է մեր զորքերի կողմից: Մեզ մերձակա ձախ թևի գեներալ Չիկովանիի զորամասերը գրավել են Չաթալվերանը:
2. Մեր կորպուսի ճակատի հետախուզության համար հրամայված է.

24 **Կալենդեր** - Բաղնոցի գյուղերից (Էրզրումի վիլայեթ):

25 **Ֆորտ** (լատ. fortis - «ամուր, ուժեղ») - փակ կամ բաց դաշտային ռազմական ամրություն, որը մտնում է ամրոցային պաշտպանության ընդհանուր համակարգի մեջ և պաշտպանում է նրա մատուցները: Կարող է լինել ֆորտերի միասնական համակարգ:

ա) Աջ [գորասյանը], որը կազմված է Կովկասյան 7-րդ հրաձգային գնդի 2 գումարտակից, Կովկասյան 2-րդ հրաձգային հրետանային դիվիզիոնի 4 լեռնային թնդանոթներից, Չերնոմորյան կազակային գնդի 1 $\frac{1}{4}$ հարյուրյակից և Կարսի 2-րդ սակրավորական $\frac{1}{2}$ վաշտից, հունվարի 6-ին կենտրոնանալով Մամուտալ - Մոլլա-Բեքիր գյուղերի մոտ, հունվարի 7-ին զբաղեցնել Ալթունթախթ-թափասի - Գալշ ճակատը, որից հետո կատարել հետախուզություն Կեսա - Հասան - Յագիայի (Յահյա) ուղղությամբ՝ միաժամանակ ապահովելով Կամա-Կարա-գյոզի վրա հարձակվող ձախ գորասյան աջ թևը, և կապ հաստատել Կովկասյան առաջին բանակային կորպուսի հետ հետախուզական ջոկատի միջոցով, որը զբաղեցնում է Կեֆրի-Բայրակ-դար շրջանը:

բ) Չախ գորասյանը, որը կազմված է Կովկասյան 8-րդ հրաձգային գնդից, Կովկասյան 2-րդ հրաձգային գնդի հրետանային դիվիզիոնի 4 լեռնային թնդանոթներից, Լաբինսկյան կազակային գնդի 6 հարյուրյակներից և Կարսի 2-րդ սակրավորական $\frac{1}{2}$ վաշտից, հունվարի 6-ին կենտրոնանալով Կարա-Աղաջի և Բոստան-կայայի մոտ, առաջանալ դեպի Կամա-Կարա-գյոզ և հետախուզություն կատարել Խնուսի ուղղությամբ՝ պաշտպանվելով Կոփի և Ախլաթի կողմից, ինչի համար.

3) ա) Կապիտան Բոգոսլավսկու ջոկատին, որի կազմում են՝

Կովկասյան 6-րդ հրաձգային գնդի 1 գումարտակ, 2 գնդացիր,

Չերնոմորյան 1-ին կազակային գնդի $\frac{1}{2}$ հարյուրյակ,

Ընդամենը՝ 1 գումարտակ, 2 գնդացիր և $\frac{1}{2}$ հարյուրյակ,

շարունակել հսկել իրեն հատկացված տեղամասը և անընդհատ կապ պահպանել ջոկատի շտաբի հետ:

բ) Գնդապետ Օբրագցովի ջոկատին, որի կազմում են՝

Կովկասյան 7-րդ հրաձգային գնդի 4 գումարտակ,

Չերնոմորյան 1-ին կազակային գնդի $2\frac{1}{2}$ հարյուրյակ,

66-րդ հրետանային բրիգադի 6 թեթև թնդանոթ,

Կովկասյան 2-րդ հրաձգային գնդի հրետանային դիվիզիոնի 4 լեռնային թնդանոթ,

Ընդամենը՝ 4 $\frac{1}{4}$ գումարտակ, $2\frac{1}{2}$ հարյուրյակ, 6 թեթև թնդանոթ և լեռնային թնդանոթ,

ուղարկել երկու հետախուզական ջոկատ.

1) Աջը, որը կազմված է 2 վաշտից, հետախույզների խմբից և $\frac{1}{2}$ հարյուրյակից, [կենտրոնացնել] Կեֆրի - Բայրակ-դար շրջանում, որտեղից հետախուզել Կարա-Աղյալ - Կարատաշ-թափասի շրջանը և կապվել գեներալ Չիկովանիի գորամասերի հետ, որի ձախ թևը տեղակայված է Չաթալվերանում, իսկ հետախուզությունը կատարվում է Էկմալ-Տոփիջի ուղղությամբ, ապա՝ Չաքլի-կան-դարասի գետի հոսանքով:

2) Հետախուզական ձախ ջոկատը, որը կազմված է 2 գումարտակից, 4 լեռնային թնդանոթից, սակրավորների $\frac{1}{2}$ վաշտից և Չերնոմորյան 1-ին կազակային գնդի 1 $\frac{1}{4}$ հարյուրյակից, այսօր կենտրոնացնել Մոլլա-Բեքիրի շրջանում, ամբողջ հեծելագործ հետախուզության համար ուղարկելով Ալթունթախթ-թափասի - Գամիի շրջանը՝ վաղն անցնել Ալթունթախթ-թափասի - Գամիի շրջան, որտեղից հետախուզություն կատարել Յահիա - Բյոսա - Հասան ուղղությամբ:

3) Պահեստագործը, որը կազմված է 1 ½ գումարտակից, 6 թեթև թնդանոթներից և չերնոնորցիների ¾ հարյուրյակից, կենտրոնացնել Արդուրահման - Չալո շրջանում՝ ձախ գորսայան աջ թևի պաշտպանության և կապի համար Կարին գյուղի շրջան ուղարկելով մեկ վաշտ և չերնոնորցիների դասակ:

4) Կապի ապահովումը դրվում է հեռագրական վաշտի պրապորշչիկ²⁶ Ֆեդուլովի վրա, որը հունվարի 7-ի առավոտյան պետք է հեռախոսագիծ անցկացնի Սեյդ - Մամուտալ - Կեֆրի և Մամուտալ - Գյուլթափա ուղղություններով:

5) Հրետանային շարժապահեստներին՝ տեղակայվել հրետանային ջոկատի պետ, փոխգնդապետ Նիկիֆորովի հրամանի համաձայն: Հրազենի պաշարների միջանկյալ պահեստ կկառուցվի Սեյդում՝ կորպուսի հրետանային տեսուչի կարգադրությամբ:

6) Երկրորդ կարգի գումակները²⁷ տեղակայել զորամասերի պետերի կարգադրությունների համաձայն: Ջոկատի համբարակին՝ հոգալ, որ ջոկատի զորամասերը Դութախի պահեստից կանոնավոր կերպով պարեն ստանան:

7) Վիրակապման ջոկատին՝ տեղակայվել Սեյդում, որտեղ և սկսել գործողությունները հունվարի 7-ի երեկոյան: Վիրավորներին և հիվանդներին ուղարկել վիրակապման ջոկատ, որտեղից էլ վիրավորներին տարհանել Դութախով Յենիքոյ՝ դիվիզիոնային լագարեթ:

8) Մինչև իրադրության պարզվելը ջոկատի շտաբը գտնվելու է Դերիկում, ուր և ուղարկել շտապ զեկույցները:

9) Տեղակալներն են գնդապետ Օբրագովը, գնդապետ Կրեմենեցկին և փոխգնդապետ Նիկիֆորովը: Ջոկատի պետ՝ գեներալ-մայոր Նագարբեկով»:

Այսպիսով՝ 4-րդ կորպուսի հրամանատարը որոշեց Խնուսի վրա արշավել երկու զորապուներով: Աջի հրամանատարությունը դրվել էր իմ, իսկ ձախինը՝ գեներալ Պեննի վրա: Մեկուկես ամիս առաջնագծում գտնվելու ընթացքում մոտիկից ծանոթանալով իրադրությանը՝ ես գիտեի, թե ինչպիսի դժվարությունների է հանդիպելու Դերիկի ջոկատից առանձնացված աջ զորապուները: Ես իմ բարոյական պարտքը համարեցի այդ մասին զեկույցել կորպուսի հրամանատարին, ինչը և արեցի ուղիղ հեռախոսակապով՝ նախ և առաջ խոսելով կորպուսի շտաբի պետի, ապա՝ անձամբ կորպուսի հրամանատարի հետ: Տեղանքը, որով պետք է հարձակվեր գեներալ Պեննի զորապուները, չէր հարուցում այն խոչընդոտները, որոնք բաժին էին ընկել աջ զորապուները: Բացի այդ՝ անհրաժեշտ էր մանրակրկիտ նախապատրաստել այդ օպերացիան՝ ապահովելու համար պարենով և հրետանային գերատեսչության պաշարներով: Կորպուսի հրամանատարն առարկեց՝ ասելով, թե ինչու եմ բողոքում, այն դեպքում, երբ ո՛չ գեներալ Պեննից, ո՛չ էլ գեներալ Չիկովանիից բողոքներ չեն ստացվում: Դրան ես պատասխանեցի, որ ամեն ինչ կախված է տեղանքի ռելիեֆից և իշխող քամիներից: Հաճախ այնպես է լինում, որ մի տեղանքում քամին մաքրում է ամբողջ ձյունը, իսկ մեկ այլ վայրում քշված ամբողջ ձյունը կուտակվում է, և առաջանում են մի քանի արշինանոց կուտակումներ, ուստի առաջանալիս անհրաժեշտ է լինում [ձյան մեջ] մի-

26 Կրտսեր սպայական կոչում ռուսական բանակում, որը հավասարագոր է կրտսեր լեյտենանտի կոչմանը:
27 Ռուսական բանակում գումակները բաժանվում էին 2 կարգի: 1-ին կարգի գումակն առաջանում էր զորքի հետ և տեղափոխում էր անհրաժեշտ պարագաներ՝ վրաններ, զինամթերք, պարեն և այլն: 2-րդ կարգի գումակը սովորաբար տեղակայվում էր առաջնագծից 7-8 կմ հեռավորության վրա:

ջանցքներ բացել: Հետագայում նա և նրա շտաբի պետ Մդիվա- նին համոզվեցին, որ իմ փաստարկները հիմնավոր էին:

Այս խոսակցությունից հետո ես նույն օրը՝ ցերեկվա ժամը 5-ն անց 15 թոպեին, կորպուսի շտաբից ստացա հեռագիր. «Կորպուսի հրամանատարը հրամայել է Մամուտալ գյուղի մոտ կենտրոնացված աջ զորայունը դնել գեներալ Պեննի ենթակայության տակ, ինչի մասին նրան հաղորդվել է: 1625, Մդիվանի»:

Վերը շարադրված հեռագրի հիման վրա երեկոյան ժամը 6-ին ես հեռագրեցի Մեյդ՝ գնդապետ Օրբագովին. «№ 3 մարտական հրամանի փոփոխման համաձայն՝ Ձեր հրամանատարության տակ գտնվող աջ և ձախ հետախուզական ջոկատները ենթարկվում են գեներալ Պեննիին: Կորպուսի շտաբի հրամանի համաձայն՝ Դուք պետք է լինեք ձախ հետախուզական ջոկատում: Համաձայն գեներալ Պեննիի հրամանի՝ շտապ զեկույցներն ուղարկել իրեն և Դերիկի ջոկատի շտաբ: Պահեստագործ ենթարկվում է ինձ: Ցանկալի է գեներալ Պեննիի հետ կապ հաստատել հետախուզական ջոկատների ճակատով: 235, Նագարբեկով»:

Այսպիսով իմ ճշմարտացի զեկույցի պատճառով կորպուսի հրամանատարը, առանց անհարմար զգալու, ինձ հեռացրեց մարտական գործողությունների ժամանակ իմ դիվիզիայի զորամասերի ղեկավարումից և դրանք հանձնեց մեկ այլ գեներալի ենթակայությանը, որն առաջին անգամ էր մարտական առաջադրանք կատարում, իսկ իմ ենթակայության տակ թողեց իմ դիվիզիայից միայն երկու գումարտակ: Բհարկե, ինձ համար անչափ վիրավորական էր կորպուսի հրամանատարի նման վերաբերմունքը, առավել ևս, որ նա ինձ գրեթե չէր ճանաչում: Ես ենթադրում եմ, որ դա կորպուսի շտաբում ինչ-որ մեկի սադրանքն էր, որը ոչ բարեկամաբար էր վերաբերվում ինձ և նպաստել էր 1915 թ. Կոփի մարտերի համար ինձ գեներալ-լեյտենանտի կոչման ներկայացնելու զեկույցի անհետացմանը:

Հունվարի 6-ին ես կարգադրեցի Դերիկի ջոկատի աջ տեղամասի պետ, կապիտան Բոգոսլավսկուն, որ [հունվարի] 7-ին իրեն փոխարինելու է 293-րդ հետևակային դրուժինան, և հերթափոխից հետո նա պետք է տեղակայվի Չելկանիում, որտեղ պետք է մնա մինչև հատուկ կարգադրությունը: Այս կարգադրությանը հաջորդեց լրացուցիչ հրաման, որ նա պետք է մեկ վաշտ ժամանակավորապես թողնի դիրքերում, իսկ 3 վաշտերով գնա Չելկանի:

Հունվարի 7-ին՝ առավոտյան ժամը 8-ին, կորպուսի շտաբից ստացվեց հեռագիր. «Հունվարի 6-ի ցերեկը մեր զորքերը գրավեցին Հասան Կալեն: Մանրամասները հայտնի չեն: Մեր հետևակային զորամասերն առաջացել են Հասան Կալեից արևմուտք: Հեծելագործ կատարում է նահանջած հակառակորդի [զորամասերի] հետախուզություն, որոնք նահանջել են դեպի Էրզրումի ֆորտերը: Օլթիի [շրջանում] թուրքերը հեռացել են իրենց դիրքերից: Կապիտան Կորիցկի»:

Հունվարի 7-ին ձախ զորայունը (Մանջանի ջոկատ) սկսեց առաջանալ Կամա-Կարա-գյոզի ուղղությամբ: Երեկոյան մոտավորապես ժամը յոթին 8-րդ գնդի երկու գումարտակ 66-րդ հրետանային բրիգադի 4 թնդանոթներով մոտեցավ Նագիկ-Խարտիկ գծին: Նույն գնդի մնացած 6 վաշտերն օգնում էին գնդային գումակին, որն ուշանում էր խիստ ծանր ճանապարհի պատճառով: Գումակը կարող էր տեղ հասնել ոչ շուտ, քան գիշերվա ժամը մեկին: Կարա-Աղաջին մոտեցան երկրորդ հրաձգային հրետանային դիվիզիոնի երկու թնդանոթ, սակրավորների կիսավաշտ և հետախուսա-

Վեմ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) րարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

յին գույքը: Այդ նույն գորապայմանում պետք է լիներ Կարմիր խաչի առաջապահ ջուկատը, որը չէր հասցրել ժամանել:

Այս բոլոր գորամասերը հունվարի 8-ին՝ ժամը 4-ին, պետք է ուղևորվեին Նագիկ: Հաշվի առնելով բացառիկ դժվար պայմանները, առանց ճանապարհների առաջ շարժվելը՝ ենթադրվում էր միայն հասնել Կուպակ - Սևո գծին: Մառնամանիքը քանոտ եղանակին հասնում էր 20 աստիճանի:

Գնդապետ Օբրագովի աջ գորապայմանից զեկույցներ չէին ստացվում կապի բացակայության պատճառով: Կապ հաստատելը շատ դժվար էր: [Հունվարի] 7-ին Մեյդից պրապորշիկ Ֆեդուլովը, որին հանձնարարված էր կապի հաստատումը, զեկուցեց, որ հեռագրական հակերը մալուխներով ուղարկվել են Կեֆրի: Նա ինքը սպասում էր գումակի ժամանելուն, որը բերելու էր սարքավորումներ և հեռագրական մալուխներ, որից հետո կապ կանցկացվեր մինչև Գյուլ-թափասի՝ ջոկատի պետի տրամադրության տակ, սակայն ճանապարհների բացակայության պատճառով այդ ամենը պետք է արվեր ձեռքով, ուստի նշված պրապորշիկը խնդրում էր Նավասալուրի արահետներին լավ ծանոթ երկու կազակ ուղարկել իրեն հանդիման՝ Դայիխալո, որտեղից սկսվելու էր աշխատանքը:

Ֆերնակ ուղարկված հետախուզական ջոկատը գրավեց Բայրակ-դարը, որտեղ մնացել էին 85-րդ գնդից 23 ասքյարներ, որոնցից 135-ը հիվանդ էին:

Կեֆրիում և Բայրակ-դարում թուրքերը թողել էին 13 արկղ ու պարկեր փամփուշտներով և սանիտարական պայուսակներ: Գերիների խոսքերով՝ իբր Էրզրում են եկել գերմանական 10 գնդեր: Կոմիկ-թափասին զբաղեցրել է հակառակորդի հետևակային պահակային գորամասը:

Գիշերը՝ ժամը 1-ն անց 30 րոպեին, կորպուսի շտաբից ստացվեց հեռագիր. «[Հունվարի] 5-ին Սաիդմանի տեղամասի հետախույզները փոխհրաձգությունից հետո գրավեցին Խաչլին, որտեղ գերեցին 12 ասքյարի, հեռախոս, հանդերձանք և երկանիվ սայլակ: Դրանից շատ չանցած՝ Խաչլի եկավ դերբենդցիների գումարտակը, որն ուղևորվում էր դեպի Իշլի: Հետախույզներին ուղարկեցին դեպի Վալասուր, այնուհետև՝ դեպի հարավ-արևելք: Լրացուցիչ հայտնում են, որ երբ մեր հավաքական հարյուրյակը մոտենում էր Չաթալվերանին, թուրքերը նրանց դիմավորեցին համազարկերով: Մանջուրցիներն ու կազակները ձիերից իջան և գրոհեցին: Թուրքերը հեռացան լանջով, և կռիվը շարունակվեց գյուղում: Որպես արդյունք՝ թուրքերից սպանվեց 57 ասքյար, որոնց թվում էր մի ծանր վիրավորված կրտսեր սպա: Գերվել են 8 հոգի, իսկ մնացած 79-ին հաջողվեց փախչել: Վաշտի գերմանացի հրամանատարը ծանր վիրավոր էր և ճանապարհին մահացավ: Չաթալվերանում դիվիզիայի շտաբն էր, որը հրկիզվել էր: Դիվիզիայի հրամանատարի բնակարանը, որը եվրոպական կահավորանք ուներ, պահպանվել է: Գյուղում կան փամփուշտների և հանդերձանքի մեծ պահեստներ: Քափանակ գյուղը, որտեղ գնդի շտաբն էր, լավ էր հարմարեցված ապրելու համար: Կան շինություններ երեք վաշտի համար, չոր խոտ և վառելափայտ: Կապիտան Կորիլցկի»:

Կապիտան Բոգոպոլսկին 6-րդ գնդի իր գումարտակի երեք վաշտերով Շեյխանում դրուժինայի հետ հերթափոխվելուց հետո ցերեկը՝ ժամը 4-ին, ուղևորվեց Չեկանի: Քանի որ վաշտերը երկօրյա պահակային ծառայությունից հետո խիստ հոգնել էին, նշված կապիտանի խնդրանքով թույլատրեցի նրանց գիշերել Խանազիրում:

Վեյն համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) րարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

Այդ նույն երեկո ստացվեց Դերիկի ջոկատի ձախ տեղամասի պետի զեկուցագիրը. «Չեկուցում եմ առաջին՝ հունվարի 7-ին՝ ժամը 9-ն անց կեսին, ձախ ջոկատը 7-րդ գնդի երկու գումարտակներով և 2 լեռնային թնդանոթներով ուղևորվեց դեպի Նավալասուր՝ խոր ձյան միջով շարժվելով ժամում մոտ մեկ վերստ: Գտնվում եմ ջոկատում: Երկրորդ՝ [հունվարի] 7-ին Կեֆրիի մոտ գտնվող առաջին ջոկատից հետախուզական խումբ ուղարկեցի դեպի Կարա-Ադ-յալ և Խիտին-կումի - Ալմա-աղաջ: Առայժմ Կարա-յազը-դուզի վրա հակառակորդի նոր զորամասեր չեն հայտնաբերվել: Երրորդ՝ հակառակորդին հետապնդող 6-րդ հարյուրյակը շեղվել է ճանապարհից և հայտնվել Մերկե-հիլում, որտեղից [հունվարի] 7-ի առավոտյան ուղևորվել է Դալի-խալո: Չորրորդ՝ [հունվարի] 6-ին Սինահն-կումի ուղարկված չերնոմորցիների 6-րդ հարյուրյակը տեղ չի հասել, քանի որ ձիերը հոգնել էին, ինչպես նաև այն պատճառով, որ Ալթունթախթի և Կոժիկ-թափասիի - Սինահն-կումիի բարձունքները գրավված էին հակառակորդի հետևակային ուղեկալների կողմից: Այդ բարձունքների գրոհը հնարավոր չէ խոր ձյան և թեք լանջերի պատճառով: Հարյուրյակին հրամայեցի առաջանալ դեպի Գյուլ-թափասի և հետախուզել հակառակորդի ուժերը: Օրբագցով»:

Երեկոյան ժամը 6-ին նրանից ստացվեց հեռախոսագիր. «Ձախ ջոկատ, երեկոյան ժամը 5-ն անց 15 րոպե: Գիշերակացի մնացի Մոլլա-Բեքիրից 10 վերստ հեռավորության վրա և Նավալասուրից հյուսիս գտնվող հովիտում: Նման որոշում ընդունեցի՝ հիմնվելով Չերնոմորյան կազակային հարյուրյակի հետախուզության տվյալների վրա, որպեսզի հարձակման չենթարկվեմ ճակատից՝ հակառակորդի Կոժիկ-թափասիի ամրությունների կողմից, և Ալթունթախթի կողմից դուրս գամ [հակառակորդի] թևի վրա: [Հունվարի] 8-ի առավոտյան Նավալասուրից հարյուրյակը կանցնի Գյուլ-թափասի՝ ամրացված շրջանը հետախուզելու համար: Առաջխաղացումը չափազանց հոգնեցուցիչ է, քանի որ ճանապարհներ չկան, իսկ եղած արահետներն ամբողջությամբ ձյունածածկ են: Չյան խորությունը հասնում է մեկուկես արշինի: Խնդրում եմ՝ կարգադրեք, որ սեփական ուժերով պարենը հասցվի գոնե մինչև Մեյդ, քանի որ բացարձակապես հնարավոր չէ առկա միջոցներով այն Դուրթախից հասցնել Մեյդ, իսկ այստեղից մատակարարել բոլոր ջոկատներին: Հոգնեցուցիչ անցումները և ձյան վրա գիշերելը պահանջում են ուժեղացված սննդաբար ուտելիք, իսկ այժմ հնարավորություն չկա նույնիսկ տալու սահմանվածը: 104, գնդապետ Օրբագցով»:

Կովկասյան 6-րդ հրաձգային գնդի հրամանատար, գնդապետ Միլիկովը զեկուցեց, որ Կովկասյան 1-ին բանակային կորպուսի հրամանով մտել է գեներալ Չիկովանի ջոկատի կազմի մեջ:

Հունվարի 8-ին՝ ժամը 2-ն անց 12 րոպեին, ստացվեց գեներալ Պեննի՝ կորպուսի հրամանատարին ուղղված զեկուցագիրը. «Սանջան, ցերեկվա ժամը 12-ն անց 30 րոպե: Հունվարի 8-ին գնդապետ Նոսկովի ջոկատը դուրս եկավ Մանազկերտից՝ այնտեղ թողնելով սպայի գլխավորությամբ կազակների դասակ: Կոփի կողմից հակառակորդի առաջխաղացում չի նկատվել: Վերին Բոստան-կայա առաջ ուղարկեցի Հայկական դրուժինայի վաշտը: Պատնոսում գտնվում են 50 հայ հեծյալներ: [Հունվարի] 9-ին վաշտին կփոխարինի 287-րդ դրուժինայի վաշտը: 387-րդ դրուժինան միայն երեկոյան տեղ [Սանջան] կհասնի, որտեղ հրամայեցի թողնել երկու վաշտ, մեկ վաշտ ուղարկել Բոստան-կայա, երեք դասակ Բուրունբուլակ և մեկ դասակ Դուրթախ: 836, Պենն»:

Չեկուցագիր ստացվեց Կովկասյան 6-րդ հրաձգային գնդի 4-րդ գումարտակի հրամանատար, կապիտան Բոգոսլավսկուց. «Իմ կողմից դիրքում թողնված 15-րդ վաշտի հրամանատարը գեկուցեց, որ № 2 ուղեկալի № 2-րդ տեղամասում 4 հրաձիգներ, տեղավորվելով վրաններով ծածկված առաձին փոսում, թաղվել են ձյան տակ: Վրանը փլվել է և [ձյան տակ] թաղել քնած հրաձիգներին: Առավոտյան՝ անվանական-չի ժամանակ, սկսեցին փնտրել նրանց և երբ նրանց ձյան տակից դուրս բերեցին, պարզվեց, որ հրաձիգներ Գոշլաշվիլին և Գալուստյանը ցրտից մահացել են, իսկ մյուս երկուսի ձեռքերը թեթև ցրտահարվել են: Ապարդյուն էին սառցահարվածներին կենդանացնելու բոլոր միջոցները: 20, կապիտան Բոգոսլավսկի»:

Առավոտյան ժամը 7-ին Աբդուռահմանից [հաղորդեցին]. «Այսօր առավոտյան Կեֆրիից Կարա-Ադ-յալ, իսկ այնտեղից Թիջա ուղարկվեց հետախույզների խումբ, որպեսզի կապ հաստատվի 1-ին կորպուսի հետ: Ֆերնակ գյուղը քարուքանդ է արված թուրքերի կողմից: Հետախույզները և հեծելապարեկները Կեֆրիում գտել են հակառակորդի կողմից լքված փամփուշտներ և հանդերձանք: Բայրակ-դարում գտնվել են վատ մշակված կիսամուշտակներ: Հրամայել եմ ոչինչ չոչնչացնել: Երկու գումարտակներով, 2 լեռնային հրանոթներով, կազակների հարյուրյակով և սակրավորների կիսավաշտով ուղղվեցի դեպի Նավալասուր - Գյուլթափա գյուղերը: 92, գնդապետ Օբրագցով»:

Երեկոյան ժամը 7-ին Նավալասուրից. «Պրապորշչիկ Բորիսովի հրամանատարությամբ հետախույզական հեծելապարեկը հասավ Բեզիգ-խանե գյուղին: Ուրյադնիկ²⁸ Ունիվետուրայի հրամանատարությամբ հեծելապարեկախումբը և երկու այլ կազակներ, մոտենալով Բեզիգ-խանեին, նկատեցին փախչող թուրքերի: Թուրքերը թվով հինգն էին, բոլորն էլ՝ լիցքավորված հրացաններով: Չնայած խոր ձյանը՝ կազակները հարձակվեցին նրանց վրա՝ թույլ չտալով փախչել: Ալիբու-կումի գյուղի մոտ հետախույզները պրապորշչիկ Բորիսովի հրամանատարությամբ կրակոցներ լսեցին, սակայն ուշադրություն չդարձնելով դրան՝ մոտեցան գյուղին և տներից մեկին, որտեղ դիրքավորվել էին թուրքերը և թույլ չէին տալիս հրաձիգներին ներս մտնել: Երկու հոգի, ջարդելով դուռը, ներխուժեցին տուն և զինաթափեցին նրանց: Թուրքերի հրացանները լիցքավորված էին: Սենյակում կային տասնվեց թուրքեր, որոնցից մեկը չէր ցանկանում հանձնել հրացանը: Բոլորին՝ թվով քսանմեկ հոգի, գերեցին: Հրացանները տասնինն էին:

Ալիբու-կումի գյուղում մեր հետախույզները կապ հաստատեցին առաջին կորպուսի Սունժենյան-Վլադիկավկայան գնդի 3-րդ և մանջուրական առաջին հարյուրյակների հետ: Կորպուսի Սունժենյան-Վլադիկավկայան գնդի 3-րդ հարյուրյակի եսաով²⁹ Կեբիրովը խնդրեց ուղարկել հարյուր պահեստային ձիեր³⁰, պահեստից իրերը տեղափոխելու համար: Ձիեր չունենալու պատճառով մերժեցի: Վաղը՝ հունվարի 8-ին, կապ հաստատելու համար Չաթավերան կուղարկեմ իմ հեծելապարեկը: Ալիբու-կումիում գտնվել են դաշտային թեթև հրետանու հրանոթային արկեր՝ մոտ 80 արկ, յուրաքանչյուր արկում՝ 6-ական արկ, և 38 արկղերում՝ արկեր լեռնային հրետանու հա-

28 Կրտսեր սպայական կոչում կազակային հեծելազորում:

29 Կազակային զորքերում սպայական կոչում, որը հավասար է հետևակի կապիտանի կոչման:

30 Պահեստային (ռուս. заводные, заручные) ձիերը զորքերում նախատեսված էին տարբեր պատճառներով շարքից դուրս եկած ձիերի կազմը լրացնելու և դժվարանցանելի վայրերը հաղթահարելու համար:

մար: Արկերը 1912 թ. արտադրության են: Կան մեծ քանակությամբ այլուր, լոբի և թեյ: Այդ ամենը փոխադրամիջոցներ չունենալու պատճառով հնարավոր չէ տեղափոխել: Ճանապարհին մեծ քանակությամբ թուջե ժուներ են թափված: Բայրակ-դարում հետախույզները գրավել են սարքին վիճակում դահուկներ, իսկ հեռախոսները ջարդված են: Պրապորշչիկ Պչելինցևի հրամանատարությամբ Կարա-յազի-դուզի բնասահման ուղարկված խումբը հասել է Ասքրաշ³¹: Գյուղը կիսաքանդ է: Այնտեղից բերեցին 400 ժուսական մարտական հրացանների փամփուշտներ, այնտեղ գտնվել են նաև մոտ 2000 թուրքական մարտական հրացանների փամփուշտներ, որոնցից 500-ը՝ առանց վառողի:

Գերիների խոսքերով՝ տեղեկություն էր տարածված, որ Քյոփրիքյոյը գրավված է, և մեր ճակատի առջևում գտնվող ջոկատը փախուստի է դիմել՝ նույնիսկ չտեղեկացնելով իր նահանջի մասին պահակային զորամասին, որը գերվել էր մեր կողմից: 29-րդ դիվիզիայի պետը Ռաֆիկ բեյն է: Խաթի-կումի - Բայրակ-դար-բուրան գծի երկայնքով ուժեղ սառնամանիք է՝ մինչև -25°: Շարքայինները լիակատար մարտական պատրաստության մեջ են: Գնդապետ Օբրագով»:

Առավոտյան ժամը 8-ին զեկուցեցի կորպուսի հրամանատարին. «[Երեկ] երեկոյան լեռնային հրետանու դասակը ժամանեց Սեյդ: Ձիերը և մարդիկ սաստիկ հյուծված են և ի վիճակի չեն Սեյդից շարժվելու: Երեկ՝ երեկոյան ժամը 9-ին, բեռնակիր տրանսպորտը հասավ Սեյդ: Շեյխանի տեղամասում հրաձիգների գումարտակը հերթափոխվեց և երեկոյան ժամը 9-ին ժամանեց Խանազիր: Այսօր շարժվելու է Խանիկ - Սամանդ երթուղով: Մնացածն անփոփոխ է: Բամին ուժեղ է: Մշտապես ուժեղ սառնամանիքներ են: 250, Նազարբեկով»:

Առավոտյան 8-ն անց 35 թուպե, Կարա-Աղաջից [հաղորդում են]. «Հունվարի 7, առավոտյան ժամը 6-ն անց 40 թուպե: Գնդապետ Նոսկովը մոտ ժամը 3-ին հասավ հարյուրից ավելի քրդերի կողմից գրավված Կասիմի: Ստիպված էր նրանց դուրս մղել տներից, որի ընթացքում գոհվեց մեկ կազակ, և ծանր վիրավորվեցին դասակի ուրյադնիկն ու մեկ կազակ: Սուլթանլին նույնպես գրավված էր 100-ից ավելի քրդերի կողմից, որոնք համառ դիմադրություն ցույց տվեցին, ինչի հետևանքով ստիպված էին ձիերից իջեցնել երկու հարյուրյակ և գրոհել: Երեկոյան ժամը 8-ին Սուլթանլին գրավվեց: Քրդերը փախան դեպի Կոփ:

Կարճ ճանապարհը շատ ծանր է: Ձյան բարձրությունը մեկ արշինից ավել է, տեղ-տեղ քարացած: Մարդիկ թաղվում են ձյան մեջ և վնասում ոտքերը: Հանափ ստիպված ենք եղել հետիոտն առաջանալ, արագությունը ժամում երկու վերստից ավել չէ: Օրվա վերջում ուժասպառ էինք: [Հունվարի] 8-ին գնդապետ Նոսկովը շարունակում է առաջխաղացումը դեպի Տիրվան-շեյխ: [Հունվարի] 8-ին՝ առավոտյան ժամը 8-ին, գնդապետ Չալպինսկու զորապետը կսկսի առաջանալ: Գիշերվա ընթացքում նա ընդհարումներ չի ունեցել: Գնդապետներ Օբրագովից և Գապոնովից առայժմ զեկուցեցին չեն ստացել: Պադնոսի ուղղությամբ՝ լեռնանցքում, մեր հեծելապարեկը զեկուցագրեր է փոխանակել Արճեշի ջոկատի հետ: Կոփի ուղղությամբ հակառակորդ կողմի շարժում չի նկատվել: 845, Պենն»:

Վեյն համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) Կոփրի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

31 Հասարաշ - գյուղ Սանազկերտի գավառում (Բիթլիսի վիլայեթ):

Տեսնելով, որ ողջ ընթացքում կապը գնդապետներ Օբրագովի ու Գապոնովի ջոկատների հետ չի կարգավորվում, և դա համարելով ոչ նորմալ՝ ես հետևյալ կարգադրություններն արեցի, ուղարկվել էին հետևյալ հեռախոսագրերը.

[1] [Հունվարի] 8-ին՝ առափոյան ժամը 9-ն անց 30 րոպեին, Մեյդում գտնվող պահեստագործի պետ, փոխգնդապետ Ալեքսանդերին. «Ձեզ հանձնարարում եմ հաստատել ու պահպանել կապը Գապոնովի և Օբրագովի ջոկատների հետ: Հեռագրական վաշտի հրամանատար, պրապորշչիկ Ֆեդուլովին դնում եմ Ձեր ենթակայության տակ և առաջարկում եմ նրան հնարավոր աջակցություն ցույց տալ՝ կարճ ժամանակում կապ հաստատելու համար: Կատարման մասին զեկուցել ինձ: Եթե մալուխները չբավականացնեն, ապա պետք է վերականգնել թռուցիկ փոստը, որոնք, իհարկե, անհրաժեշտ է հաճախակի փոխել: 252, Նազարբեկով»:

2) Ցերեկը ժամը 12-ին կորպուսի ճարտարագետին. «Կիլիչ Գյաղուկով անցնող ճանապարհին անմխիթար վիճակում է: Գումակները տեղ են հասնում երկու և ավելի օրերի ընթացքում, ինչի հետևանքով ձիերն ու ուղտերը սատկում են: Իսնդրում եմ ձեռնարկել համապատասխան միջոցներ և ճանապարհները կարգի բերել: 252, Նազարբեկով»:

3) Կապիտան Իվանովին. «Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեք, որպեսզի Դերիկ - Մեյդ ճանապարհով հնարավոր լինի անվավոր գումակների երթևեկությունը: Որպես բանվորական ուժ կարող եք օգտագործել 7-րդ գնդի 16-րդ վաշտի մարդկանց մի մասին և Մեյդից բանվորներ խնդրել պահեստագործի պետ, փոխգնդապետ Ալեքսանդերից: 253, Նազարբեկով»:

Կորպուսի շտաբի պետի կարգադրությամբ [հունվարի] 8-ին՝ ցերեկվա ժամը 12-ին, Մեյդի իմ պահեստագործի կազմից առաջապահ ջոկատ ուղարկվեց Չերնոմոյան 3-րդ գնդի կիսավաշտ և ժամը 3-ին Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիոնի 2-րդ մարտկոց: Կիսահարյուրյակը միայն երեկոյան հասավ Դալի-Խալո գյուղ, սակայն շարունակել ճանապարհը չկարողացավ, քանի որ ձիերն այն աստիճան էին ուժասպառ եղել, որ չէին կարողանում առաջանալ:

Դերիկի ձախ ջոկատի առաջապահ զորամասերի ճնշման տակ մարտից հետո հակառակորդը հապճեպ նահանջում էր՝ քանդելով իր դիրքերը, երբ ջոկատի գլխավոր ուժերը գտնվում էին Ալթունթախթի և Կոժիկ-թափասիի բարձունքներից 5-6 վերստ հեռավորության վրա: [Հունվարի] 8-ի երեկոյան ձախ ջոկատն իր առաջապահ զորամասերով գրավեց Գամին - Սինանին-կումին, իսկ գլխավոր ուժերով՝ Գյուլթափան: Գյուլթափան և Սինանին-կումին անվնաս էին մնացել: Բոլոր տեղերում էլ շինությունները լավ էին կահավորված:

[Հունվարի] 9-ին հրամայվեց առաջանալ դեպի Յահյա՝ նպատակ ունենալով շփման մեջ մտնելու հակառակորդի հետ և պարզելու նրա նահանջի ուղղությունը, իսկ գլխավոր ուժերով տեղափոխվել Սինանին-կումին: Գնդապետ Գապոնովի ջոկատին հրամայվեց 49 կազակներով, որոնք նրա մոտ էին եկել Մեյդից, շարունակել հետախուզությունը:

Վերջապես արտակարգ և ծանր անցումներից հետո հաջողվեց կապ հաստատել Կեֆրի - Գյուլթափայի և Ասբրաշի հետ: Ջոկատի պետի զեկուցմամբ մարդկանց տրամադրությունը լավ է:

Բնության դեմ պայքարից հետո ամենաձանրը պարենի հարցն էր: Ջոկատները դժվարությամբ էին ապահովվում պարենով, քանի որ տրանսպորտները տանելի արահետների և ճանապարհների, ինչպես նաև կենդանիների կերի բացակայության պատճառով միշտ ուշանում էին, նույնիսկ ավելի, քան մեկ օր: Անձեռնմխելի պաշարը վաղուց օգտագործվել էր, իսկ դրա լրացման մասին մտածել անգամ չէր կարելի: Մեզ համար մեծ ուրախություն էր այն, որ առաջացող ջոկատները բնակիչների և հակառակորդի կողմից լքված գյուղերում գտնում էին նրանց կողմից թողնված շատ թե քիչ քանակությամբ պարեն, որի չիներու դեպքում ջոկատները դատապարտված էին կործանման: Այս առաջխաղացումը ցույց տվեց բարձրագույն ղեկավարության անփույթ վերաբերմունքը նախատեսված օպերացիաների նախապատրաստման գործում: Ամեն ինչ որոշվում էր գրասենյակներում քարտեզներով՝ չմտածելով այլ բանի մասին: Նույնիսկ առաջապահ պարենային պահեստները չունեին անհրաժեշտ քանակությամբ պարեն ոչ միայն իրականացվող օպերացիաների, այլև նույնիսկ դիրքերում գտնվելու ժամանակ:

Կովկասյան 2-րդ հրետանային դիվիզիոնի 2-րդ դասակը և 8-րդ գնդի հեռախոսային գույքը, որոնք դուրս էին եկել Կարա-Աղաջից [հունվարի] 8-ին՝ առավոտյան ժամը 3-ին, միայն 12 ժամ անց հասան Նազի, իսկ սակրավորական կիսավաշտը դեռևս ճանապարհին էր: Այդ ամենի հետևանքով Չապլինսկու ջոկատի առաջխաղացումը ձգձգվեց:

Աջ զորայունը Ալուջարից շարժվեց ցերեկվա ժամը 11-ին, իսկ ձախն ուղևորվեց դեպի Վուշկան ցերեկվա ժամը 12-ին: Հեռախոսակապը տանում էին աջ զորայան ետևից: Վուշկանը գրավվեց մեր առաջապահ վաշտի կողմից գիշերվա ժամը 3-ին: Որոշ տներում դիրքավորվել էին քրդեր, որոնք կրակում էին ու չէին ցանկանում հանձնվել, և որպեսզի առաջխաղացումը չձգձգվեր, հրամայվեց ոչնչացնել այն շինությունները, որտեղ նրանք դիրքավորվել էին, ինչը և կատարվեց:

Նկատի ունենալով անիվներով առաջ շարժվելու բացարձակ անհնարինությունը՝ 8-րդ գնդի ողջ գումակը Նազիից վերադարձավ Կարախաս: Գումակին անհրաժեշտ բեռների մի մասը տեղափոխվեց հակերով: Որոշվեց բեռները և պարենը ուղարկել ուղտերով:

[Հունվարի] 9-ի առավոտյան 4 վաշտերից կազմված ջոկատը (պահեստագործ՝ փոխգնդապետ Ալեքսանդերի հրամանատարությամբ) Մեյդից շարժվեց դեպի Կեֆրի՝ փոխգնդապետ Գապոնովի ջոկատին միանալու համար:

Մեյդում գնդի շտաբին կից, դաշտային հրետանու մարտկոցը, գնդի դրամարկող պաշտպաններու և պահակային ծառայություն կատարելու համար թողնվեց մեկ վաշտ:

Փոխգնդապետ Ալեքսանդերին առաջադրանքը տրվել էր կորպուսի շտաբից: Ինչպես ասվել է վերևում, նա անցնում էր փոխգնդապետ Գապոնովի ենթակայության տակ, պետք է արագ երթով գնար Կեֆրի, ապա՝ Յահյա³²: Փոխգնդապետ Գապոնովի առաջադրանքն այն էր, որ ջոկատի ուժեղացումից հետո նրա ջոկատը պետք է դուրս գար թուրքական գործերի թիկունքը, որոնք նահանջում էին դեպի արևմուտք Ալթունթախթ և Կոժիկ-թափասի լեռներից:

Վեյ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) Գարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

32 Յահյա - գյուղ Խնուսի գավառում (երգրումի վիլայեթ):

Միաժամանակ գնդապետ Օբրագցովն իր ջոկատով պետք է հարձակվեր Գալիից և արշալույսին ողջ ջոկատով շարունակեր հարձակումը Յահյայի վրա: Փոխգնդապետ Գապոնովը գնդապետ Օբրագցովի հետ միաժամանակ դեպի Յահյա առաջանալիս պետք է մի փոքր առաջակալ ստորաբաժանում ուղարկեր Թիջու գյուղի ուղղությամբ: Ջոկատների առաջ շարժման նպատակն էր կտրել նահանջող հակառակորդին Կոժիկից և Ալթունթախթա-թափասիից: Հրամայեցի գնդապետ Օբրագցովին հեռախոսային մալուխն իր ետևից անցկացնել որքան հնարավոր է, ապա կապվել թռուցիկ փոստով:

Կորպուսի հրամանատարի կարգադրության համաձայն՝ 293-րդ հետևակային դրուժինայի երեք վաշտեր պետք է Շեյխանից առաջանային որպես կորպուսային պահեստագոր: Մեկ վաշտ թողնվեց լեռնանցքում՝ պահակային ծառայության համար:

Սեյդում փոխգնդապետ Ալեքսանդերը գնդի գույքը հսկելու, մարտկոցը պաշտպանելու և ճանապարհները մաքրելու համար թողել էր մեկ վաշտ:

Հունվարի 8-ին գնդապետ Չապլինսկու³³ ճակատում կազակները գրավեցին Ալուջար գյուղը, որտեղ հակառակորդի գորք չկար, ապա գրավեցին Կիշի-խանը, որտեղ կային զինված քրդեր, որոնք փախան Կուպակ: Կալիշանում [Կիշի-խանում] գտնվեցին ցորենի ձողտի դեզեր, և հափշտակվեցին ոչ մեծ թվով անասուններ: Մոտ ժամը 2-ին կապիտան Բաբենկոյի Սանջանի ջոկատի ձախ գորսայունը գլխավոր ուժերով անցավ Չաքրեշը:

Թուրքական լեռնային և դաշտային արկերը տեղափոխելու համար ես հրամայեցի նշանակել երկու հրետանավորների, որոնք փոխադրումը պետք է կատարեին վերադարձող գրաստներով, քանի որ այլ միջոցներ չկային:

Ես չէի հասցնում նույնիսկ պարենով և անասնակերով ապահովել առանց հանգստի ու օրակացի առաջացող բոլոր ջոկատներին, բացի այդ՝ Դութախի³⁴ համբարակային պահեստը չափազանց հեռու էր տեղակայված: Ձիերը սաստիկ նիհարել էին և այն աստիճան ուժասպառ եղել, որ կարողանում էին միայն աննշան բեռ բարձրացնել:

Քանի որ հունվարի 10-ին նախատեսվում էր Կուպակ գյուղի մոտ գտնվող բարձունքի գրոհը, ուստի կորպուսի հրամանատարը կարգադրեց [հունվարի] 10-ի լուսաբացին Սամանդից 6-րդ գնդի գումարտակն ուղարկել Կարա-Աղաջ:

Երեկոյան 8-ն անց 15 ժամին Կեֆրիից ստացվեց գնդապետ Գապոնովի զեկուցագիրը. «Այսօր հետախույզները շրջապատույտ կատարեցին Ասրբաշ - Բեքիր-կումի - Ալամգաչ ուղղությամբ: Այդ շրջանում հակառակորդի մասին տեղեկություններ չկային: Հեծելապարեկն ուղարկվեց դեպի Բայրակ-դար - Ալիբու-կումի - Թափա-

33 Գնդապետ Չապլինսկու վերը նշված ռազմական գործողությունների ընթացքի մասին զեկուցագիրը տես Ռուսաստանի պետական պատմա-զինվորական արխիվում «Реляции о действиях правой колонны отряда полковника Чаплинского под командой полковника 8-го Кавказского стрелкового полка Егунова», Российский государственный военно-исторический архив, ф. № 3304, 8-й Кавказский стрелковый полк, оп. № 1, 8-й Кавказский стрелковый полк, д. № 49, Реляции боевых действий 8-го Кавказского стрелкового полка л. 1-6, <https://gwar.mil.ru/documents/view/?id=51546623> (մուտք 06.04.2020):

34 Դութախ - գյուղ Անթաբի գավառում (երզրումի վիլայեթ):

կումի և Բեզիգ-խան: Հեծելապարեկը Թափա-կումի տանող ճանապարհին նկատեց բեռնակիր տրանսպորտ, որը շարժվում էր դեպի Բայրա: Պարեկը, արագացնելով ընթացքը, անցավ Թափա-կումին, ապա լեռնաշղթայով շարժվեց դեպի Բայրա և զնդակոծվեց երկու համազարկով, ապա՝ հատ-հատ կրակոցներով: Հեծելապարեկը հետևեց բեռնակիր տրանսպորտին, սակայն մթնշաղի պատճառով վերադարձավ Բազիգ-խան: Ճանապարհին նա բռնեց դեպի Բայրա փախչող թուրքի: Բազիգ-խանում պարեկը գտավ Կաղզվանի և Բայրակ-գյուղի շրջանների երկու վերստանոց մեծ մասշտաբի 6 և այլ քարտեզներ: Քարտեզները վաղը գումակի հետ կուղարկեմ: Վաղը կհետախուզեմ Թափա-կումի - Բայրա ուղղությամբ: Ալիբու-կումիում կան շատ հրետանային արկեր: Դրանց տեղափոխման համար անհրաժեշտ են հարյուրից ավելի հակեր: Կեֆրիում գտնվել են մարտական հրացանի մոտ 2000 թաղված փամփուշտներ, որոնք Բայրակ-դարից տեղափոխելու համար անհրաժեշտ են առնվազն 50 հակեր: Գնդապետ Գապոնով»:

Հունվարի 9-ին՝ ժամը 11-ն անց 50 թուրքերին, Յահյա-Մոլլայից ուղարկված ջոկատն իր առաջապահ ստորաբաժանումներով գրավեց Եկմալը՝ այնտեղից դուրս մղելով սուվարիի հեծելավաշտը և զինված բնակիչներին: Հակառակորդն ունեցավ 10 զոհ: Մենք կորուստներ չունեցանք:

Կամա-Կարա-գյոզի վրա հարձակվող ջոկատը թուրքերին դուրս քշեց Կուպակից: Հակառակորդը՝ մեկ հետևակ գունդ՝ 4-6 թնդանոթներով, և քրդական 3 գնդեր, ամրացավ Գյոզալ-Բաբա-դաղից հինգ վերստ հեռավորության վրա գտնվող դիրքերում:

Քանի որ բանակի հրամանատարը հրամայել էր անհապաղ ձեռնարկել ամենավճռական միջոցները՝ ռազմավարային արկերը, փամփուշտները և հակառակորդի կողմից թողնված այլ ռազմական պաշարները [թիկունք] տեղափոխելու համար, ուստի ես, համաձայն կորպուսի շտաբից ստացված հրամանի, դա հանձնարարեցի 66-րդ հրետանային բրիգադի 3-րդ մարտկոցի հրամանատարին: Նրան կարգադրված էր նշանակել սպա հետախույզների հետ և ուղարկել նրանց Կեֆրի - Բայրակ-դար - Ալիբու-կումի ուղղությամբ, որպեսզի տեղափոխեն թուրքերի կողմից լքված սպառազինության հրետանային տարրեր պաշարները և հանդերձանքը:

Հունվարի 10-ին՝ ժամը 10-ն անց 30 թուրքերին, կորպուսի շտաբից ստացվեց հեռագիր. «Ռազմագերի թուրքերի ցուցմունքների համաձայն՝ Չելլիից արևմուտք և հարավ-արևմուտք ընկած գյուղերում կան տիֆով հիվանդների հոսպիտալներ, ինչի պատճառով այդ գյուղերը վարակված են: Փեյ-Վերանում գտնվել են 80 բժավոր տիֆով հիվանդներ: Գեներալ Չիկովանիի ջոկատից դեպի Ունիկ ուղևորվել է 589-րդ դրուժինան, որին հանձնարարված է հետախույզել արևմտյան ուղղությամբ մինչև հակառակորդի հետ շփման մեջ մտնելը: Վերը շարադրվածի մասին կորպուսի հրամանատարը հրամայել է հաղորդել Ձեզ ենթակա գորամասերին և նախագգուշական միջոցներ ձեռնարկել տիֆով վարակված թուրքական գյուղերով անցնելիս: 1630, Մոլլականի»:

Այդ մասին ես տեղեկացրի բոլոր ջոկատներին, որպեսզի համապատասխան միջոցներ ձեռնարկեն չվարակվելու համար:

Փոխգնդապետ Գապոնովի ջոկատը հետախույզների հետ Բայրային մոտենալիս հանդիպում է քրդերի դիմադրությանը: Փոխհրաձգությունից հետո քրդերը դուրս

մղվեցին դիրքերից և փախան Չաուշի ուղղությամբ: Սպանվել էր 5 և վիրավորվել 3 քուրդ: Հետախույզների մոտ վիրավորվել էր 2 ձի:

Մոտ ժամը 12-ին Բայրան գրավվեց: Տարվել են 10 եղջերավոր անասուններ: Մի փոքր հանգստից հետո ջոկատը շարունակում է իր առաջխաղացումը:

Կազբիլ-կումիի կողմից երևացել են հակառակորդի հեծելապարեկները՝ մեկը՝ 10, իսկ մյուսը՝ 20 հեծյալներից: Առաջխաղացումը կասեցվեց մինչև իրադրության պարզվելը: Այն բանից հետո, երբ պարզվեց, որ դրանք թուրքական հեծելապարեկներ էին, ջոկատը, որը կազմված էր 14-րդ և 15-րդ վաշտերից, հետախույզների ստորաբաժանումից և Չերնոմորյան 1-ին գնդի կազակների կիսահարյուրյակից, շարունակեց իր ճանապարհը և երեկոյան մոտ ժամը 6-ին հասավ Յահյա: Այսպիսով՝ ջոկատն Ալիբու-կումիից արագ երթով, սարսափելի ճանապարհով 8 ժամվա ընթացքում անցավ մոտ 35 վերստ: Անցումը խիստ դժվար էր և հոգնեցուցիչ: Անկասկած ուժասպառ էին եղել սպաները, զինվորները և կենդանիները:

Բայրայում գտել էին 80 հատ հաց, 60 փութ պաքսիմասի բլիթներ, 150 փութ գարի և հաց թխելու 2 վառարան: Միայն շնորհիվ գտնված պաշարների՝ ջոկատը կարողացավ պահպանել իր գոյությունը և շարունակել առաջխաղացումը: Պարեն հասցնող բոլոր տրանսպորտները և զորակազմն ուժեղացնելու համար ուղարկված զորամասերն իրենց նպատակին չէին հասնում. զորամասերն ի գորու չէին հասնելու առջևից գնացող գորքերին, իսկ տրանսպորտները, որպեսզի սովամահ չլինեին, իրենք էին ուտում ջոկատների համար նախատեսվածը: Բացարձակապես կազմակերպված չէր այդ գործը [համբարակային մատակարարումը և գորքերի համալրումը], և միայն բախտն էր փրկում այն զորամասերին, որոնք առաջ էին շարժվում առանց հանգստի: Այս տեսանկյունից Դերիկի ջոկատի փոխգնդապետ Գապոնովի զորայունն ավելի բախտավոր էր: Իր բախտից այն գյուղերով անցնելիս ավելի շատ պարեն և կենսական անհրաժեշտ պաշարներ էր գտնում: Չախ գորսայունն այդ տեսանկյունից պակաս բախտավոր էր. այն ծանր զրկանքներ էր կրում պարենի պակասի պատճառով:

Քրդերը մշտապես հետևում էին մեր ջոկատների տեղաշարժին: Սա դադարեցնելու համար ջոկատների պետերը 15-20 հեծյալ պարեկներ ուղարկեցին դեպի Կազբիլ³⁵ և լեռնանցք: Քրդերն այդտեղ ունեին դիտակետեր: Մեր հեծելապարեկների մոտենալու ժամանակ քրդերը մի քանի համազարկ տվեցին նրանց ուղղությամբ: Դա պայմանական նշան էր, որ պետք է գյուղերից փախչել: Այդ համազարկերից հետո քրդերը փախան իրենց գյուղերից և հավանաբար թողեցին մեծ թվով ընտանի կենդանիներ:

Առավոտյան ժամը 8-ից անընդհատ շարժման մեջ գտնվելով՝ առաջապահ զորամասերը հետախույզեցին Քեշիշ - Մոլլա-Բեքիր - Ռահատ - Դանից - Եկմալ գյուղերը: Պարզվեց, որ Քեշիշ գյուղը հակառակորդի ձեռքում է, այդ գյուղից հարավ ընկած բարձունքն ամրացված է, և այնտեղ գտնվում են թուրքեր: Այդ ուղղությամբ հեծելապարեկը գնդակոծվեց հակառակորդի կողմից: Մոլլա-Բեքիրում և Խաչանիում հակառակորդ չկար: Հակառակորդի դիրքերին չհասած՝ ուղեկալից դուրս շարտվեց հակառակորդը՝ մոտ 25 հոգի, որոնք ցերեկվա ժամը մեկին փախան դեպի [Մոլլա-]Բեքիր: Ցերեկը նկատվեց շր-

վել համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) փարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

35 Պատմ. Գազբոյլ(ք) - լեռնապար ԽՆՈՍԻ գավառի հյուսիս-արևելքում:

ջակա բնակիչների շարժում Եկմալ գյուղից հյուսիս- արևմուտք ընկած լեռան լանջով, իսկ Դոնիզ - Եկմալից հարավ երևում էր [թուրքական] հետևակը:

Հաջորդ օրը, այսինքն՝ հունվարի 11-ին, փոխգնդապետ Գապոնովը ցանկանում էր գրավել Յահյա - Չինու ճակատը: Երեկոյան ժամը 8-ին Դերիկի ջոկատի ձախ զորասյունը գնդապետ Օբրագովի հրամանատարությամբ հասավ Սինանին-կումի գյուղ: Ռազմագերի քրդից ստացվեցին տեղեկություններ, որ այդ գյուղում կա թուրքերի հետևակի գումարտակ՝ փոխգնդապետի հրամանատարությամբ, որի ազգանունը չգիտեր, ինչպես նաև չգիտեր, թե որ գորամասին են պատկանում: Անասնակերի բացակայության պատճառով այդ ջոկատում հեծելագոր չկար, որը տեղափոխվել էր թիկունք: Ալթունթախթից և Կոժիկ-թափասիից հակառակորդը նահանջել էր, սակայն թե ուր, քուրդը չգիտեր, քանի որ թուրքերը, ինչպես նաև քրդերը գաղտնի էին պահում իրենց տեղաշարժերը անվստահելի բնակիչներից:

Ձախ զորայունից գնդացիները վերադարձվեցին, քանի որ ձիերն անասնակերի բացակայության պատճառով չէին ցանկանում տեղից շարժվել:

Հրամայվեց հանգստից և անասնակեր ստանալուց հետո անհապաղ հասնել ջոկատին, քանի որ [հունվարի] 9-ի երեկոյան անասնակերը բերվել էր Մեյդ: Այդ ջոկատին շտապ ավելացվեցին պորուչիկ Սոպովի լեռնային հրետանու դասակը և սակրավորներ: Նրանք հասան մինչև Գյուլթափա:

Առավոտյան Սինանին-կումի ուղարկված հետախույզները, բարձրանալով Սինանին-կումի, Եկմալ, Հաջի, Ատաշան-կումի գյուղերի միջև ընկած՝ հակառակորդի կողմից ձյան մեջ բացված լեռնային արահետով, պարզեցին, որ Ատաշանից, Եկմալից, Հաջիից և Ատաշան-կումիից արևմուտք ընկած բարձունքները զբաղեցված են հակառակորդի կողմից: Վերջինս սկսեց հապշտապ նահանջել դեպի Շեքիր գյուղը և ցանցառ շղթաներով զբաղեցրեց Եկմալ - Շեքիր ձորի երկու կողմերի բարձունքները: Հետախույզների առաջին շարքերում հակառակորդի հետքերով ընթացող չերնոմորցիների 6-րդ հարյուրյակը կանգ առավ հակառակորդի կրակից և որպեսզի չգնդակոծվի, իջավ հովիտ: Հետախույզները սկսեցին շրջառել հակառակորդի դիրքերի ձախ թևը: Այս շարժումը ստիպեց կրակի տակ գտնվող հակառակորդին կուտակվել Շեքիր գյուղում, որտեղ գրավեց նեղ անցատեղը, որպեսզի արգելի հարյուրյակին դուրս գալ հովտից և կանգնեցնի հետախույզներին: Ցերեկվա մոտ ժամը 3-ին մոտեցավ մեր հրետանին և ուժգին կրակ բացեց Շեքիրի ու հակառակորդի դիրքերի ուղղությամբ: Շեքիրից դեպի արևմուտք նահանջող հակառակորդի գորքի մի մասը, որը գնդակոծվում էր մեր կողմից, փախուստի դիմեց և շուտով անհետացավ մեր տեսադաշտից: Երեկոյան մոտ ժամը 5-ին, երբ հետախույզները մոտ երեք վերստ մոտեցան Շեքիրին, հակառակորդը սկսեց աստիճանաբար նահանջել դեպի լեռները, և մթնշաղի հետևանքով դադարեցրին հրաձգությունը:

Շեքիրը գրավելու և հակառակորդին հետապնդելու համար ջոկատի պետի կողմից առաջ ուղարկվեցին հետախույզները: Հակառակորդի կորուստները մնացին անհայտ:

Ցերեկվա ժամը 4-ին գնդապետ Օբրագովն անձամբ հսկում էր Դարման-դաղի հյուսիսային լանջերով խմբերի շարժումը: Նա հեռու լինելու պատճառով չկարողացավ պարզել՝ դրանք հակառակորդի զորամասերն էին, թե՛ բնակիչներ, քանի որ գորայան առաջխաղացումը հնարավոր էր միայն հակառակորդի կողմից ձյունից

վե՛ր համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) Գարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

մաքրված արահետով: Հակառակորդն այնքան արագ էր նահանջում, որ նրան չկարողացավ հասնել նույնիսկ հեծելագործը:

Ձախ զորայան առաջխաղացումը հարկադրում է շտապ հեռանալ այն շրջանը, որտեղ նախատեսվում էր փոխզնդապետ Գապոնովի ջոկատով կտրել նրա նահանջի ճանապարհը:

Ջոկատը գիշերեց Եկմայի շրջանում: Տեղի բնակիչների հայտնած տեղեկությունների համաձայն՝ Շեքիրում կար մոտ 300 հոգի, որոնք հեռացել էին Հաջի - Ատաշի-կումի ուղղությամբ: Մեր հարձակման հետևանքով անմիջապես լեռներ ուղղվեցին ոչ քիչ թվով բնակիչներ:

[Հունվարի] 11-ին ջոկատը պետք է շարժվեր դեպի Շեքիր և ավելի հեռու: Հնարավոր չէր կտրել հակառակորդի նահանջի ճանապարհը Հաջի - Ատաշի-կումի ուղղությամբ բացված արահետների բացակայության պատճառով, իսկ հակառակորդը նահանջում էր հին արահետներով:

[Հունվարի] 10-ին Սինանին-կումիից ստացա գնդապետ Օբրագոնովի հեռագիրը. «Ձախ ջոկատը Սեյդից գնում է չորս անցումներով: Ոչ մի մատակարարող տրանսպորտ ջոկատի արագացված երթի ժամանակ չի կարող հասնել նրան: Նույն դրության մեջ է փոխզնդապետ Գապոնովի ջոկատը: Կապիտան Սոբեսկու հաղորդման համաձայն՝ տրանսպորտը Սեյդ է հասել միայն [հունվարի] 9-ի երեկոյան: [Հունվարի] 10-ից Սեյդից մինչ ջոկատներ հասնելու համար հարկավոր է չորս անցում, իսկ ջոկատներին հրամայված է արագացված երթով շարժվել: Այդպիսի մատակարարման դեպքում մարդիկ և ձիերը սոված կմնան: Վիրակապման ջոկատն անհրաժեշտ է առաջ մղել, քանի որ ծանրաբեռնված ենք հիվանդներով և հատկապես ցրտահարվածներով: Ո՛չ սակրավորական վաշտը, ո՛չ էլ կապիտան Սոպովի հրետանային դասակը չեն հասել ձախ ջոկատին: Հրամանատարներից ստացվել են գեկուցագրեր, որ մարդիկ և ձիերն առանց պարենի չեն կարող շարժվել, քանի որ ձախ ջոկատն այսօր առանց պարենի է: 135, 148, գնդապետ Օբրագոնով»:

Փոխզնդապետ Ալեքսանդերի՝ 4 վաշտից կազմված ջոկատը նույնպես ոչ մի կերպ չէր կարողանում հասնել փոխզնդապետ Գապոնովի ջոկատին: Այսպիսով Սեյդի, Սինանին-կումիի և Յահյայի միջև ցրվել էին ջոկատներ, որոնք պետք է ուժեղացնեին առաջապահ ջոկատները և տրանսպորտները: Նրանք բոլորն էլ դժվարությամբ էին առաջանում, սոված էին, ունենում էին մեծ թվով ցրտահարվածներ և չէին հասնում իրենց նպատակակետին: Հատկապես ծանր դրության մեջ էին հիվանդները և ցրտահարվածները, որոնց մեջ քիչ չէին վիրակապման միջոցների բացակայության պատճառով մահացողները:

8-րդ գունդը հունվարի 9-ին երկու զորայուներից աջով կտրվով գրավեց Կուլպակ գյուղը, իսկ ձախով առանց մարտի՝ Խևո գյուղը: Կամա-Կարա-գյոզ ուղղությամբ զորայուների հետագա առաջխաղացումը հանդիպեց հակառակորդի ուժեղ դիմադրությանը, և աջ զորայունը ստիպված էր գիշերել՝ չհասած Գազան-Բարա-դաղի լեռնանցքի բարձունքներին: Գիշերային հետախուզությամբ պարզվեց, որ հակառակորդի դիրքերը հիմնովին ամրացված են երկու հարկաշարք խրամատներով, և նա դիրքերը չի լքել: Այնժամ կապիտան Բաբենկոյի ձախ ջոկատին հրամայվեց գործել հակառակորդի աջ թևի վրա՝ Խիրտիկ գյուղի ուղղությամբ, քանի որ ճակատային

վե՛ր համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) փարի. թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

գրոհը հակառակորդի դիրքերի վրա խոր ձյան պայմաններում մեծ թվով զոհեր կարժենար:

Հաշվի առնելով, որ հակառակորդն ունի 6 թնդանոթ, նրա դիրքերը զբաղեցնում են 5 վերստ, և նրա առջևում գտնվող տեղանքը գնդակոծվում է հրետանու խաչաձև կրակով, ինչպես նաև հակառակորդի կանոնավոր հետևակը գնդից մեծաթիվ է, և 8-րդ գունդը պարենի առումով գտնվում է ճգնաժամային վիճակում, ընդ որում, դրա մատակարարման ոչ մի հույս չկա, հարձակումը ժամանակավորապես դադարեցվեց:

Հունվարի 11-ին՝ առավոտյան ժամը 6-ին, ձախ ջոկատի հեծելագործը և հետախույզները Շեքերից, իսկ գլխավոր ուժերը Եկմալից շարժվեցին դեպի Մախմունինկումի: Գնալով արագացված երթով և մի կողմ շարտելով նահանջող հակառակորդի զորքից ետ մնացածներին՝ ջոկատը, երեք ժամվա ընթացքում անցնելով Մախմունինկումի, Թափր-կումի, Սանջակդար-կումի գյուղերը, մոտեցավ Կազիանիին: Հետախույզներին ուղարկելով Յահյա և Չինի՝ գնդապետ Օբրագովը փոխգնդապետ Գապոնովից ստացավ զեկուցագիր, որում ասվում էր, որ նա հունվարի 11-ի լուսաբացին գրավել է Յահյա - Չինի ճակատը և կկատարի ձախ ջոկատի ճնշման տակ նահանջող հակառակորդին: Շրջակա բոլոր գյուղերի քրդերը փախչում էին Խնուս՝ իրենց հետ վերցնելով որոշ իրեր, իսկ մնացածը թողնելով տեղում: Մեծ թվով անասուններ լքված էին մնացել Խսան և Բայրա գյուղերում: Ցանկանալով թեթևացնել քրդերի դրույթունը՝ վստահելի անձի միջոցով դիմեցի նրանց՝ առաջարկելով վերադառնալ իրենց գյուղերը, սակայն հաջողություն չունեցավ:

Ռազմագերի 14 թուրքերին ուղարկեցի թիկունք՝ Ալիբու-կումի:

Փոմա Իվանի Նազարբեկով [ստորագրություն]
ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 8, թ. 1-48: Բնագիր: Ձեռագիր:

Տեսք 8

4 սեպտեմբերի 1929 թ.
Թիֆլիս

Թուրքերը նահանջելիս ամբողջությամբ քարուքանդ էին արել Շեքիր գյուղը: Չախ զորայունը Շեքիրում հավիշտակվել էր 10 գլուխ անասուն, երկու փուլ թափալած միս, հացի փուռ, իսկ գյուղից երկու վերստ արևմուտք՝ ձորում, հայտնաբերվել էին հետևակի 7 գումարտակների գետնափոր տնակներ: Հակառակորդի կորուստը՝ 19 սպանված: Վիրավորներին թողել էին ճանապարհին: Նրանց մեծ մասը ցրտից մահացել էր: Կային մեծ թվով սատկած կենդանիներ, որոնց մեծ մասամբ կերել էին գայլերը: Մարդիկ առանց հանգստի, անընդհատ մարտերի ու երթերի հետևանքով սաստիկ հյուծվել էին: Շատերը նույնիսկ քայլելիս քնում էին, ստիպված էին լինում նրանց արթնացնել:

Կազիանիին ջոկատը մոտեցավ երեկոյան ժամը 5-ին: Գիշերեցին այդ գյուղում: Ուժեղացված հետախուզական խմբեր ուղարկվեցին դեպի Ակ-Թափախ և Թարբին:

Վէմ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) րարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

Գնդապետ Չապլինսկու զորայունը երկու առաջապահներով ցերեկվա ժամը 1-ն անց 45 թուպեին գրավեց Կամա-Կարա-գյոզը: Ողջ զորայունը տեղ հասավ ցերեկվա ժամը 4-ին: Չափ զորայունը մեկ ժամ ավելի ուշ հասավ: Գյուղի զորանոցները, համբարակային պահեստները և կրպակները հրդեհվել էին, իսկ բնակիչները փախել էին: Գերվել էր 5 ասքյար, որոնք հայտնեցին, որ Կամա-Կարա-գյոզում կային հետևակ, հեծելագոր և հրետանի: Նրանց ցուցմունքներն անորոշ էին: Հակառակորդը նահանջել էր Խնուսի ուղղությամբ: Համբարակային պահեստից հաջողվեց փրկել 100 փութ այուր, որը բաժանվեց շարքայիններին հաց չլինելու պատճառով:

Գեներալ Պեննի կողմից հրաման տրվեց գնդապետ Չապլինսկուն [հունվարի] 11-ին 1 գումարտակից, 2 գնդացիներից, 2 լեռնային թնդանոթներից և գնդացիներով կազակների 2 հարյուրյակներից կազմված հետախուզական ջոկատ ուղարկելու Դադա-վերան, Կարամեջ³⁶, Կարա-Քյոփրի ճակատը հետախուզելու համար և կապ հաստատելու գնդապետ Նոսկովի հետ, իսկ անհրաժեշտության դեպքում նրան աջակցելու:

Գնդապետ Նոսկովին հրամայվել էր ողջ Լաբինսկյան գնդով, գնդացիներով և Հայկական [2-րդ] դրուժինայով վերցնելով իր հետ հեռագրակայանը, շարունակել հարձակումը և գրավել Խնուսը: Առաջապահ ջոկատը մնալու էր Դադա-վերան - Կարա-Քյոփրի շրջանում գտնվող՝ Խնուս տանող գլխավոր ճանապարհի վրա: Գնդապետ Չապլինսկու գլխավոր ուժերին կարգադրված էր մնալ Կամա-Կարա-գյոզում մինչև իրադրության պարզվելը: Նույն գեներալի կողմից միջոցներ էին ձեռնարկվել՝ հսկելու գրավված պարեները և անասնակերը: Խնուսի ջոկատի պետն իր տեղակայման վայրը Կարա-Աղաջից տեղափոխել էր Նագի գյուղ:

Համաձայն գեներալ Պեննիի հունվարի 10-ի երեկոյան ժամը 8-ի հրամանի՝ [հունվարի] 11-ի առավոտյան առաջ շարժվեց հետախուզական ջոկատը, որը կազմված էր 1 գումարտակից, 2 գնդացիներից, 2 թնդանոթից և կազակների 2 հարյուրյակից՝ 4 կազակային գնդացիներով³⁷, և գործող հեռագրակայանից, Կամա-Կարա-գյոզից դեպի Կարա-Քյոփրի: Յոնջալի գյուղի մոտ ցերեկվա ժամը 2-ին ջոկատը մարտի մեջ մտավ հակառակորդի հետ և պարզեց, որ հակառակորդը Դադա-վերան - Նաջալի³⁸ - Կարա-Քյոփրի ճակատում ունի 6 վաշտ, 4 թնդանոթ և մեկ հեծելավաշտ: Այդ զորամասերը նշված ճակատ էին եկել երեք զորայուններով Խնուսի կողմից: Այդ ժամանակ գնդապետ Օբրագցովին հրամայվեց ջոկատով անմիջապես շարժվել դեպի Չինա - Հայրեթ և ապա Խնուս, իսկ փոխգնդապետ Գապոնովին՝ Ավվերան - Հայրեթ լեռնանցքը՝ հանձնարարելով արգելել Խնուսից հակառակորդի հարձակումը լեռնանցքի վրա:

Գիշերվա ժամը 11-ին շտաբի կորպուսից ստացա օպերատիվ հեռագիր. «Հունվարի 10: Թուրքական 10 վերստանոց քարտեզ: Գեներալ Լյախովի տեղամասում թուրքերը գնդակոծել են Պրիմորսկյան ջոկատի առաջապահ զորամասերը և փորձել են Արխավա գետի ափին խրամատներ փորել: Արդվինի ճակատում հակառակորդը հեռացել է Բդուգոր և Չելչին գյուղերից: Թուրքեստանյան երկրորդ կորպուսի ճակատում մինչև Թուր-

36 Կարամեջ կամ Խամմեջ - Խնուսի գավառի գյուղերից (Երզրումի վիլայեթ):

37 Դրանք ծեռքի գնդացիներ էին և արտադրվում էին դանիական «Dansk Rekytriffel Syndikat» ֆիրմայի կողմից (1890-1950-ական թթ.) և հայտնի էին «Մադսեն» (Madsen) անունով, որոնցով սպառազինում էին հեծելազորը և կազակային ստորաբաժանումները: Գնդացիի հեղինակն է դանիական բանակի մայր փլիեյվ Մադսենը:

38 Յոնջալի - Խնուսի գավառի գյուղերից (Երզրումի վիլայեթ):

թում գետի ձախ ավին ընկած ամբողջ շրջանն ազատվել է հակառակորդից, բացառությամբ Վիսիկի-նիսի գյուղի շրջանի, որտեղ հակառակորդը շարունակում է իր ձեռքում պահել Թորթումի աջ ափը: Մեր առաջապահ զորամասերը Խան - Դև - Յահայի գյուղերից առաջանում են Թորթումի աջ ափով դեպի Կիզիլ-քիլիսա գյուղը, այնուհետև՝ դեպի Ցակրա գյուղը, որը մեր կողմից գրավված է, և իրականացվում է հակառակորդի կրաուտբենսկյան դիրքերի հետախուզություն: Գեներալ Վոլոչինի զորայունում և Կովկասյան առաջին կորպուսի ողջ ճակատով շարունակվում է հետախուզությունը: Մեր օդաչուները Կորբուզի ճակատում գնդակոծվել են հրետանային կրակով, իսկ Ուլնու - Ահմեդի երկու ֆորտերից՝ հրացաններից: Բանակային շրջանում հարձակումը շարունակվում է:

Հունվարի 10-ին հետախուզական հարյուրյակը հակառակորդի գերակշիռ ուժերի ճնշման տակ մարտերով նահանջեց Կենդյակի լեռնանցքից դեպի Էնգիքենդ գյուղը, որտեղ Համադանից օգնություն ուղարկվեց: Արդեբիլի շրջանում իրավիճակը հանգիստ է: Կասիխան Կորիցկի»:

Համաձայն կորպուսի հրամանատարի կարգադրության՝ ես հրամայեցի 66-րդ հրետանային բրիգադի 3-րդ մարտկոցի հրամանատարին, որ ժամանակավորապես դադարեցնի թուրքական հրետանային մարտական գույքի տեղափոխումը և ստանձնի Մամուտալից Սեյդ հրետանային պահեստի տեղափոխումը, փամփուշտներն ու արկերն ընդունի Սեյդում գտնվող 7-րդ գնդի տնտեսական մասի պետից և այս կարգադրության կատարման մասին զեկուցի ինձ:

Չէր հաջողվում կանոնավոր կերպով ստանալ զեկուցագրեր գնդապետ Օբրագովից և փոխգնդապետ Գապոնովից կապի պետի՝ հեռագրական վաշտի հրամանատար, պրապորշչիկ³⁹ Ֆեդուլովի ոչ հմուտ ղեկավարման պատճառով, ուստի ես այդ գործը հանձնարարեցի 2-րդ հրաձգային դիվիզիայի կապի պետ, պորուչիկ Վլադովին: Միաժամանակ պորուչիկ Վլադովին կարգադրեցի հեռախոսակապ հաստատել Դերիկի և գնդապետ Օբրագովի շտաբի միջև, ինչպես նաև իր տնօրինության տակ առնել Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի շտաբի և 7-րդ գնդի ու պրապորշչիկ Ֆեդուլովի հեռագրական վաշտի բոլոր [կապի] միջոցները, Մամուտալ - Կեֆրի հեռախոսագիծը հանել և մեկ միասնական գիծ հաստատել Սեյդ - Մամուտալ - Գյոկ-թափա - Սինանին-կումի - Շեքիր - Յահյա, ապա՝ գնդապետ Օբրագովի շարժման ուղղությամբ: Պորուչիկ Վլադովը պետք է այդ մասին տեղեկացներ պրապորշչիկ Ֆեդուլովին ու 7-րդ գնդի կապի պետին և հայտներ, որ նրանք անցնում են իր ենթակայության տակ:

Գեներալ Պենևի կարգադրության համաձայն՝ գնդապետ Օբրագովը [հունվարի] 12-ին շարժվել էր Խնուսի ուղղությամբ: Նա այդ օրն իր ջոկատով Կազիանի գյուղում միացել էր փոխգնդապետ Գապոնովի և Ալեքսանդրի ջոկատներին:

Մոտ ժամը 4-ին գնդապետ Օբրագովի զլխավոր ուժերը մոտեցան Չինին և Դունդարին⁴⁰: Կեսժամյա հանգստից հետո ջոկատը շարժվեց դեպի Ալ-դաղից հարավ

39 Կրտսեր սպայական առաջին կոչումը ռուսական բանակում, որը տրվում էր ռազմական ուսումնարանների շրջանավարտներին: Սակայն Առաջին աշխարհամարտի տարիներին սպայական կազմի մեծ կորուստները ստիպեցին կազմակերպել 8-ամսյա արագացված դասընթացներ, որոնց շրջանավարտներին շնորհվում էր պրապորշչիկի աստիճան: Թ. Նազարբեկյանի դժգոհությունից երևում է, որ Ֆեդուլովն ավարտել էր նշված արագացված դասընթացը:

40 **Չեյնո, Դունդար** - Խնուսի գավառի գյուղեր (Էրզրումի վիլայեթ):

ընկած լեռնանցքը: Հետախուզության տվյալներով այդ ուղղությամբ էին փախել բնակիչներն իրենց ընտանի կենդանիներով: Հունվարի 12-ի առավոտյան հետախուզական ջոկատ ուղարկվեց Տախտար-Ակ-դաղ լեռը, որը գրավված էր քրդերի ու հակառակորդի դիտորդների կողմից: Մահմեդ-Այա-կումի գյուղից դուրս գալիս ստիպված էին բախերով իրենց համար ճանապարհ բացել խոր ձյան միջով: Լարվում էին բոլոր ուժերը, և բոլոր հնարավոր միջոցներն էին ձեռնարկվում առաջ շարժվելու համար: Գիշերը [մթությունը] էլ ավելի էր դժվարացնում այդ աշխատանքը. երեկոյից սկսած՝ հաջողվեց միայն երկու վերստ արահետ բացել մինչև լեռնանցքը: Հայտնի չէ, թե ջոկատը երբ կկարողանա հասնել լեռնանցքին:

Կորպուսի հրամանատարը հանդիմանեց գնդապետ Օբրագովին իր և փոխգնդապետ Գապոնովի ջոկատների դանդաղ ընթացքի համար: Այդ հանդիմանությունը գնդապետ Օբրագովը պատասխանեց Կազիանիից հունվարի 12-ին՝ ժամը 12-ն անց 20 թուպին. «Դանդաղ շարժվելու հանդիմանության կապակցությամբ գեկուցում եմ. առաջին՝ դեպի Սինանին-կումի ջոկատն առաջանում էր առանց արահետների ու ճանապարհի, ճեղքելով խոր ձյունը, որը որոշ տեղերում գոտկատեղից էլ բարձր էր: Հեծելագորն ընդհանրապես չէր կարողանում շարժվել, քանի որ ձյունը ձիերի փորից էլ բարձր էր, և ճանապարհը բացում էին հրաձիգները, որոնք շալակած տանում էին թնդանոթները: Երկրորդ՝ փոխգնդապետ Գապոնովի ողջ ջոկատը Մամուտայից մինչև Կեֆրի երեք օր շարունակ ճեղքելով անցել էր ձյան միջով: Չափ ջոկատը, որը փոխգնդապետ Գապոնովի ջոկատին գերազանցում էր չորս անգամ, թնդանոթներով և գիշերում էր ձյան վրա, ավելի արագ էր շարժվում, քան այսպիսի փոքրիկ ջոկատը: Կեֆրիից Գապոնովը գնում էր հակառակորդի բացած արահետներով: [Հունվարի] 11-ին այդպիսի արահետներով էր գնում ձախ ջոկատը՝ չնայած իր թվական գերակշռությանը այդ ջոկատի նկատմամբ, որը, [հունվարի] 11-ին ետ մղելով քրդերին, ընթանում էր համեմատաբար արագացված երթով: Չորրորդ՝ թե որն է տարբերությունը առանց ճանապարհների և դրանց առկայությամբ առաջ շարժումների, ցույց է տալիս փոխգնդապետ Ալեքսանդերի շարժումը, որը Գապոնովի ջոկատին հասավ միայն [հունվարի] 11-ին: Հինգերորդ՝ թե ինչպիսի ծանր անցումներ է կատարել ջոկատը, կարելի է դատել այն բանով, որ [հունվարի] 7-ից մինչև 11-ը ներառյալ ձախ ջոկատը կորցրել է հիվանդ և ցրտահարված 300-ից ավելի մարդ, 2 գումարտակների կազմից սատկել են 20-ից ավելի զրաստներ: Սակիյարիի լեռնային [հրետանու] դասակում 20 ձիերի մեջքերը հարված են: Վեցերորդ՝ բոլոր անցումների ժամանակ ստացվել է միայն մեկ պարենային մատակարարում՝ երկօրյա հացով: Մյուս տրանսպորտները, ընթանալով ջոկատի հետքերով, չեն կարողանում հասնել նրան, և ջոկատն առաջանում է առանց հացի: [Հունվարի] 12-ին տրանսպորտները դեռ չէին հասել Սինանին-կումի: Յոթերորդ՝ ջոկատի համար նախատեսված երթուղով Յահյայից 25 վերստ հեռավորության վրա չկան բնակավայրեր, ուստի նախատեսվում է շարժվել առանց հանգստի՝ անկախ շարժման տևողությունից, նաև փոքր է հույսը, որ հնարավոր է ուտելիք հայթայթել, ենթադրվում է, որ կլինեն մեծ թվով հիվանդներ, ետ մնացածներ և ցրտահարվածներ: 211, գնդապետ Օբրագով:»

Կորպուսի հրամանատարի անհիմն կշտամբանքն ինձ համար շատ և շատ տհաճ էր: Կորպուսի հրամանատարն իր կարճատև հրամանատարության ընթացքում անձամբ չէր ճանաչում գործառնների պետերին, և ես կարծում եմ, որ մինչև գնդապետ

Վեբ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) փարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

Օրբագցովին հանդիմանելը նա պետք է տեղեկանար իրեն մոտիկ պետից, թե գնդապետ Օրբագցովի գործողություններն արժանի՞ են արդյոք այդ կշտամբանքին: Գնդապետ Օրբագցովի ծառայությանը խաղաղ ժամանակ ես ծանոթ չեի, սակայն պատերազմի ժամանակ, երբ ես մարտական առաջադրանքներ էի կատարում, լավ ճանաչեցի և նրան իր մարտական հատկություններով համարում էի դիվիզիայի լավագույն հրամանատարը: Եվ եթե նրա ջոկատի առաջխաղացումը, չնայած նրան բաժին ընկած դժվարություններին՝ պայքար բնության, դժվարանցանելի տեղանքի դեմ ու գրեթե առանց պարենի, հաջողությամբ ավարտվեց, ապա ջոկատն ամբողջությամբ պարտական էր նրան: Նա ինքը միշտ գնում էր ջոկատի գորապան առջևից և օրինակ էր տալիս ենթականերին իրենց այն պարտքի առումով, որը վիճակված էր նրա ջոկատին տվյալ իրադրությունում: Բնական է, որ ես ստիպված էի պաշտպանել նրան կորպուսի հրամանատարի առջև:

Գնդապետ Օրբագցովի ջոկատը, անընդհատ աշխատելով մինչև գիշերվա ժամը 2-ը, հունվարի 13-ին այդպես էլ չկարողացավ ճեղքելով հասնել Ալ-դադի լեռնանցքը: Ջյան վերին շերտը դիմանում էր միայն մեկ մարդու և ձիու, էլ չենք խոսում հակերի մասին, որոնք ընդհանրապես չէին կարողանում գնալ: Ջյան վերին շերտը հասնում էր մինչև մարդու կուրծքը: Գումարտակաների ու վաշտերի հրամանատարների, հրետանու և հեծելագործի պետերի հետ ունեցած խորհրդակցության ժամանակ հետևյալ որոշումն ընդունվեց. քանի որ ձյան վերին շերտով առաջ կարող է շարժվել միայն հետևակը, իսկ հրետանին, հեծելագործը, բեռները և գումակը բացարձակապես չեն կարող անցնել, և մինչև կուրծքը հասնող ձյան միջով ճանապարհի անցկացումը առանց ուտելիքի և վառելիքի չի կարող ավարտվել մինչև [հունվարի] 13-ի երեկոյան, որոշվեց 8-րդ գնդին աջակցելու համար ուղարկել առանց բեռների ու գումակի հրաձիգների մեկ գումարտակ հետախույզների ստորաբաժանման հետ, իսկ մնացած ջոկատը պետք է նահանջեր դեպի Չինա, որտեղից հանգստից ու քնից հետո շարժվեր դեպի Պատրակ-Արտաքոյ՝ ջոկատի վրա դրված առաջադրանքը կատարելու: Այս որոշման համաձայն՝ կապիտան Լոմակինի գլխավորությամբ 3-րդ գումարտակն ուղևորվեց Դադա-վերան, իսկ մնացած ջոկատը գիշերվա ժամը 3-ին սկսեց իջնել դեպի Չինա-Ներյակ, որտեղից գեներալ Պեննը գնդապետ Օրբագցովի ջոկատն ուղարկեց դեպի Չաուրմա գյուղ և Խնուս:

Հունվարի 13-ին՝ ցերեկվա ժամը 5-ն անց 5 րոպեին, կորպուսի շտաբից ստացվեց օպերատիվ հեռագիր. «Հունվարի 12-ին բանակի ճակատում տեղի են ունեցել [հետևյալ իրադարձությունները]. Սևրիչայի ուղղությամբ թուրքերն ամրացնում են Դումլուդաղը: Բարի շրջանում փոփոխություններ չկան: Հունվարի 12-ին Էրզրումի ուղղությամբ հակառակորդը 2 հետևակ գնդերով անցավ հարձակման Չիֆթլիկ - Բերթակ ճակատում: Այդ հարձակմանն աջակցել են Ուզլին-գյոզ - Ուզուն-Ամնեդ ֆորտերի դաշտային և Կորուրգ ու Արթոյք ֆորտերի ծանր հրետանիները: Բերդակի վրա և նրանից հյուսիս հարձակվող հակառակորդը երեկոյան ետ շարտվեց: Միաժամանակ մեր զորամասերը, հարձակվելով խճուղուց հարավ, ստիպել են թուրքերին նահանջել և գրավել են Փուշ-Դարին: Մենք վերցրել ենք գերիներ, որոնց թվում է հավաքական գնդի հրամանատարը: Գունդը կազմավորվել է 52-րդ Բաղդատյան գնդից, որը մեծ կորուստներ է կրել: Կապիտան Կորիցկի»:

Երկու օր շարունակ 8-րդ գունդը մարտեր էր մղում Քյոփրիքյոյի ուղղությամբ, որոնք ի վերջո ավարտվեցին հաջողությամբ:

Նագիից գեներալ Պեննը գեկուցում էր կորպուսի հրամանատարին. «Հունվարի 13, Նագի, գիշերվա ժամը 9: Հայտնում եմ հունվարի 12-ի մարտի մանրամասները: Ժամը 2-ին նշանակվել էր գնդապետ Նոսկովի գորսայան թիկնանցումը: Գնդապետ Չապլինսկու ուժեղ ճնշմամբ և հակառակորդի թիկունք Նոսկովի հեծելագործի դուրս գալու շնորհիվ [հունվարի] 11-ի առավոտվանից մինչև 12-ի ցերեկվա մոտ ժամը 4-ը տևած հակառակորդի համառ դիմադրությունը վերջնականապես կտրվեց, և հակառակորդը սկսեց անկանոն նահանջել Խնուսի ուղղությամբ:

Դեռևս [հունվարի] 12-ի գիշերը գնդապետ Նոսկովը, իր ջոկատին միացնելով Հայկական [2-րդ] դրուժինան, Չեռնակից սկսեց հարձակումը Շիրվանշեյխի կողմից ամբողջությամբ ձնածածկ արահետով: Մեկ գորսայուն դարձած ջոկատով հաղթահարելով անչափ մեծ դժվարություններ, նեղելով իր առջև գտնվող և գնդակոծող քրդերին՝ ցերեկվա ժամը 4-ին դուրս եկավ Կարա-Քյոփրիից արևմուտք: Առաջապահ հարյուրյակն անմիջապես գրոհեց իր առջև գտնվող թուրքերի վրա: Որպես արդյունք՝ գերվել են հակառակորդի 7 սպա, 156 ասքյար, 182 հրացան, 15 հակային փամփուշտի արկղ և հրացանի 18000 փամփուշտ: Հեծյալ ջոկատից սպանվել է 2 կազակ, վիրավորվել է 2 կազակ, և սպանվել է 8 ձի: Այդ նույն ժամանակ գնդապետ Չապլինսկու ճակատում գերվել են 10 սպա, 118 ասքյար, 220 հրացան, 18 հակային փամփուշտի արկղ և հրացանի 8000 փամփուշտ: Դիրքերում թողնվել են տասնյակ հազարավոր փամփուշտներ, մեծ քանակությամբ հանդերձանք և հրացաններ, որոնք գնդապետ Չապլինսկին վերցնելու նույնիսկ հնարավորություն չունի: Թուրքերի մոտ դրանց անհավատալի առատությունը և բացառապես անընդմեջ հրաձգությունը, ինչպես նաև մարտից հետո լքվածի քանակությունը, գերիների ցուցմունքների համաձայն, բացատրվում են Խնուսի իրենց պահեստի մոտիկությամբ:

Գնդապետ Չապլինսկու ջոկատում մեր ունեցած կորուստները՝ սպանվել է 1, վիրավորվել 2 սպա, շարքայիններից զոհվել են 14-ը, վիրավորվել 127-ը: Մութն ընկնելուն պես հետապնդումը դադարեցվեց: Մեր հեծելապարեկները ողջ գիշերվա ընթացքում հետևում էին նահանջող հակառակորդին:

[Հունվարի] 13-ի առավոտյան գնդապետ Նոսկովի ջոկատը՝ Լաբինցինների հինգ հարյուրյակ՝ կազակային 7 գնդացիներով, Հայկական [2-րդ] դրուժինան, վերսկսեցին հարձակումը՝ նեղելով հակառակորդին: [Հակառակորդի] վերջապահ գորաշղթաները դիմադրելով նահանջում են դեպի Խնուս: Հաշվի առնելով 8-րդ գնդի անընդհատ շարժումը ճանապարհներից զուրկ լեռնային ձնածածկ վայրերով, 20 աստիճանից ցածր սառնամանիքի պայմաններում, պարենի մատակարարման հնարավորությունը, 2-օրյա համառ մարտը և մարտում ծախսված փամփուշտներն ու արկերը լրացնելու համար գնդապետ Չապլինսկին հարկադրված էր [հունվարի] 13-ին կանգ առնել և միայն արևածագին սկսել հարձակումը Խնուսի վրա: Իմ պարտքն եմ համարում Ձերոց Գերագանցությանը գեկուցել պարոնայք սպաների և շարքայինների՝ հրաձիգների, կազակների ու հրետանավորների բացառիկ [մարտական] որակների և քաջության մասին, որոնք մարտի ժամանակ իրենց գերազանց դրսևորեցին և կռվում էին ինչպես առյուծներ: Գնդապետ Չապլինսկին գեկուցում է, որ գնդապետ Օբրագովի միայն մեկ գումարտակ առանց բեռի իջավ և այսօր գիշերելու է Դաղա-վերանում: Վաղը կմաս-

Վեյն համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) Գարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

նակցի հարձակմանը: Ինքը՝ գնդապետ Օրբագցովը, մնացած ջոկատով մեծագույն դժվարությամբ հաղթահարում է Կազգան-Թափասի լեռնանցքը և շարժվում է դեպի Պարտակ: 915, Պենն»:

Գնդապետ Նոսկովի հեծյալ ջոկատը Հայկական [2-րդ] դրուժինայի հետ, որին աջակցում էին 8-րդ գնդի առաջապահ զորամասերը, շարունակում էր հակառակորդի հետապնդումը Խնուսի ուղղությամբ: Շիրվանշեյխից դեպի Կարա-Քյոփրի առաջանալիս Չերնակի լեռնանցքից նկատվեց Լիբի⁴¹ ուղղությամբ հակառակորդի զորապան՝ հետևակի մեկ գումարտակի և 3 հեծելավաշտի շարժում: Հետևակը Եփրատն անցել էր Շեյխան-Քյոփրիսի կամրջով, իսկ հեծելազորը հասել էր Ադիլին-կումի և Տանի, որտեղ կանգ առավ, խարույկներ վառեց և երեկոյան ժամը 7-ին վերադարձավ: Խնուսի վրա հարձակվող ջոկատն այդ կողմից պաշտպանելու համար հրամայվեց գնդապետ Չապլինսկու ջոկատից Չերնակի լեռնանցք ուղարկել 2 վաշտ՝ 2 լեռնային թնդանոթներով, և կազակների 1/2 հարյուրյակ: Կամա-Կարա-գյոզից 6-րդ գումարտակից Խուրի-կումի ուղարկվեց վաշտ, իսկ Սուլթանլի՝ սպայի գլխավորությամբ հեծյալ ուղեկալ՝ հսկելու համար Լիբ և Կոփ տանող ուղիները:

Կարա-Քյոփրիում գերվածները պատկանում էին 106-րդ, 107-րդ, 124-րդ և աշիրեթական 1-ին գնդերին: Մինչև մարտը 106-րդ գունդը տեղակայված էր Կամա-Կարա-գյոզում, 107-րդ գնդի մեկ գումարտակ Լիբում (Լիզ) էր, իսկ մյուսը տեղակայված էր Բիթլիսի ուղղությամբ: 108-րդ գունդը տեղափոխվել էր Էրզրումից:

Հունվարի 13-ին՝ երեկոյան ժամը յոթին՝ մարտերից հետո, Խնուսը գրավեց գնդապետ Նոսկովի հեծելազորի և Դոռլի Հայկական դրուժինայի կողմից: Ջախջախված հակառակորդի մնացորդները անդադրում հետապնդվում էին հեծելազորի ու Հայկական դրուժինայի կողմից և նահանջում էին դեպի հարավ՝ Մուշ: Ցերեկվա ժամը 2-ից մինչև երեկո վերջապահների միջև ընթանում էին մարտեր: Խնուս տանող ճանապարհին և բոլոր գյուղերում հանդիպում էին ասքյարների ոչ մեծ խմբեր, որոնք փախել էին Քյոփրիքյոյի մարտից հետո: Ռազմագերիների վկայությամբ՝ հակառակորդը [հունվարի] 11-ի և 12-ի մարտերի ժամանակ մեծ կորուստներ է ունեցել: Խնուսում հրդեհվել էին հրացանի և արկերի պահեստները: Իրենց նահանջի ճանապարհին թուրքերն ամեն ինչ հրդեհում էին:

Խնուսում մեծ թվով բնակիչներ և պաշարներ էին մնացել: Գեներալ Պեննը հրամայել էր գնդապետ Նոսկովին շարունակել հակառակորդի հետապնդումը Մուշի ուղղությամբ և կապ հաստատել 1-ին կորպուսի ու գնդապետ Օրբագցովի ջոկատի հետ:

Հունվարի 14-ին գնդապետ Չապլինսկու ջոկատը շարունակում էր հարձակումը Խնուսի վրա: Ցերեկվա ժամը 12-ին Չիվիրմա⁴² գյուղում նրան միացավ 7-րդ գնդի գումարտակը՝ հետախույզների հետ՝ փոխգնդապետ Ալեքսանդրի հրամանատարությամբ:

Հունվարի 14-ին՝ առավոտյան ժամը 9-ին, գնդապետ Օրբագցովը Ակ-դաղից հայտնում էր, որ ջոկատը [հունվարի] 13-ին՝ երեկոյան ժամը 9-ին, մոտեցել էր Թափաթար-Գեղիկ⁴³ լեռնանցքի գառիվերին՝ ողջ ընթացքում գտնվելով անդադար շարժման մեջ: Առաջ շարժվելն անչափ ծանր էր, քանի որ անհրաժեշտ էր ողջ ընթացքում քարշ տալ հրետանին: Հարկադրված էին առաջանալ լեռների՝ ձյունից ազատ գագաթներով, քանի որ

41 Լիզ - գյուղ Բուլանուխի գավառում (Բիթլիսի վիլայեթ):

42 Չաուրմա կամ Չևիրմե - գյուղ Խնուսի գավառում:

43 Նաև Դեղթափ (պատմ. Տողոտափ) լեռ:

ձյան միջով անհնար էր առաջ շարժվել, և օրական անցնում էին վեցից ութ վերստ: Քարտեզի վրա նշված ճանապարհներն այդ ժամանակ գոյություն չունեին, քանի որ ծածկվել էին անանցանելի ձյունով: Փոխզնդապետներ Ալեքսանդերի և Գապոնովի թեթև լեռնավորված ջոկատներն անցան երկու խմբով՝ բեռներն իջեցնելով զագաթից պարաններով: Բեռնավորված ձախ ջոկատը հիմնականում առաջանում էր գագաթներով, քանի որ հրետանին առանց պաշտպանության չէր կարելի թողնել, որովհետև լեռներ քշված հակառակորդը և քրդերը մշտապես գնդակոծում էին, բացի այդ՝ հնարավոր չէր հրետանու առաջխաղացումը առանց հրաձիգների օգնության:

Փոխզնդապետներ Գապոնովի և Ալեքսանդերի ջոկատներն առաջանում էին հրետանիով, իսկ անձնակազմի մոտ կեսը հիվանդ էր ու ցրտահարված: Չախ ջոկատն առաջանալիս հրետանու երկու դասակներում և հրետանային շարժապահեստի դասակն ունեին հարված մեջքերով 30 ձի, սատկել էին երկուսը: Հաց մատակարարող վերջին տրանսպորտը ջոկատ էր եկել հունվարի 10-ին: Երկրորդ օրն էր առանց հացի: Բացի անասուններից և որոշ տեղերում ծղոտից՝ այլ միջոցներ չկային: Այն ճանապարհներով, որոնցով տեղաշարժվում էր ջոկատը, դժվար թե տրանսպորտ կարողանար անցնել այն եղանակով, ինչպես գնում էր հրետանին հրաձիգների օգնությամբ, և դժվար թե առանց նրանց օգնության [հրետանին] կարողանար առաջանալ: Նման դրության մեջ կլինեի նաև փամփուշտների մատակարարումը: Աննշան ձնամրրիկի կամ էլ հյուսիսային ուժեղ քամու ժամանակ առաջացած փոխզնդապետ Ալեքսանդերի ջոկատի բացած արահետները ծածկվում էին ձյունով: Չոկատի վրա դրված առաջադրանքը՝ փակել հակառակորդի նահանջի ճանապարհը, շտապ կատարելու համար սպաները, ինչպես նաև շարքայինները բառացիորեն գերմարդկային ճիգեր էին գործադրում:

[Հունվարի] 13-ին ջոկատն անցավ մոտ 40 վերստ, ներառյալ նաև դեպի Դաբավերան տեղաշարժը: Հեռախոսակապը մալուխ ստանալու դեպքում Եկմալից կձգվի մինչև Ազիանի: Թռուցիկ փոստերը գտնվում են Շեքիրում, Սանջարում⁴⁴, Յանանինդադում⁴⁵ և Օկդաշում⁴⁶, որոնցով անցնում է գորաայունային ուղին (249, գնդապետ Օբրագցով):

Հունվարի 13-ին Չերնակի լեռնանցքի կողմից կատարված հետախուզությունը Լիրի (Լիզ) ուղղությամբ հակառակորդի չհայտնաբերեց: Նագիից հարավ՝ Կական և Մատու ուղարկված հեծելապարեկը, որին հանձնարարված էր դիտարկել Շերվանտախուի մոտ գտնվող հովիտը և Եփրատը, նույնպես չհայտնաբերեց հակառակորդին: Գնդապետ Չապլինսկու ջոկատը չթուլացնելու նպատակով գեներալ Պեննեը Կարա-Ջյոփրիում թողեց միայն 6-րդ գնդի մեկ վաշտ կազակների դասակի հետ: 6-րդ գունդը Կամա-Կարա-գյոզ էր եկել [հունվարի] 12-ին, և հունվարի 14-ին մեկ վաշտ ուղարկվեց դեպի Դորի-Կոմի գյուղը: Գնդապետ Չապլինսկու գեկուցագրի համաձայն՝ մինչև Խնուս տանող ճանապարհին ընկած շրջանում պարեն և անասնակեր չկային: Ամեն ինչ ոչնչացված էր, մի մասն էլ՝ հրկիզված: Թուրքերի վկայությամբ՝ իրենք էլ էին քաղցած մնացել, սնվում էին Խնուսից բերվածով:

44 Սանջակդար - Խնուսի գավառի գյուղերից:

45 Յահայի լեռ:

46 Ակդաղ (՝) - Խնուսի գավառի գյուղերից:

Հունվարի 14-ի առավոտյան գեներալ Պեննը մտադրիր էր գնալ Խնուս, ուր ենթադրում էր, որ կհասներ երեկոյան: Այսպիսով Խնուսը վերջնականապես գրավվեց հունվարի 14-ին, ավելի ստույգ՝ 13-ին Լաբինսկյան 1-ին կազակային գնդի սրբնթաց զրոհով, որին աջակցում էին 8-րդ հրաձգային գնդի զումարտակը և Դրոյի Հայկական 2-րդ դրուժինան, հետախույզների ստորաբաժանումը: Չնայած որ հակառակորդը ջախջախվել էր և ետ շարտվել իր դիրքերից, սակայն չէր ոչնչացվել և բավականաչափ թուլացած չէր: Նա նահանջեց Խնուսից դեպի հարավ՝ Մուշի ուղղությամբ, և, գրավելով գերիշխող դիրքեր, սկսեց ամրություններ կառուցել և վերականգնել իր ուժերը, որից հետո արդեն սկսեց սպառնալ Խնուսին:

Խնուսի օպերացիան տևեց ավելի քան 2 շաբաթ: Այդ գործողությունն իրականացվեց առանց որևէ պլանի և պատրաստության: Առաջանում էին խարխափելով: Բոլոր կարգադրությունները, նույնիսկ ամենայն մանրամասնությամբ, ներառյալ վաշտերի տեղաշարժը, ստացվում էին կորպուսի շտաբից: Հակառակորդի շրջապատումը չհաջողվեց, որովհետև համաձայնեցված չէին Դերիկի ջոկատի և նախկին Սանջանի ջոկատի զորասյուների գործողությունները: Լավ իմանալով, որ Դերիկի ջոկատի աջ և ձախ զորասյուներն առաջանալիս մեծ դժվարություններ էին հաղթահարում առատ ձյան պատճառով, քան Սանջանի ջոկատի ձախ զորասյունը, անհրաժեշտ էր այդ զորասյուների վճռական գործողությունները նախաձեռնել այն ժամանակ, երբ նախկին Դերիկի ջոկատի զորասյուներն արդեն դուրս եկած կլինեին հակառակորդի թիկունքը:

Օպերացիան բացարձակապես նախապատրաստված չէր պարենային և սանիտարական առումներով: Մարդիկ, չնայած այն հանգամանքին, որ որոշ քանակությամբ պարեն էին գտնում հակառակորդի ու բնակչության կողմից լքված գյուղերում, այնուամենայնիվ, պարենի մեծ կարիք ունեին: Գրաստները բացարձակապես բավարար չէին: Այդպիսի ջոկատի ապահովման համար անհրաժեշտ էր 1000-ից ավելի գրաստ, սակայն կար մոտավորապես 200-300 գրաստ: Տրանսպորտները, անցնելով մի քանի օրվա ճանապարհ, մեծ դժվարությամբ էին հասնում առանց հանգստի ընթացող առջևի ջոկատներին, և հենց իրենք էին սպառում բեռի զգալի մասը: Գլխավոր պարենային պահեստը չափազանց հեռու էր գտնվում օպերացիայի վայրերից: Ավելի դյուրին էր կազմակերպել միջանկյալ պահեստներ, ինչը զգալիորեն կթեթևացներ տրանսպորտների դժվարին աշխատանքը: Սանիտարական առումով նույնպես գործը վատ էր կազմակերպված, քանի որ չկային վիրակապման բավականաչափ միջոցներ և փոխադրամիջոցներ՝ վիրավորներին ու հիվանդներին, հատկապես մեծ թիվ կազմող ցրտահարվածներին տարհանելու համար: Ողջ օպերացիայի ընթացքում վիրավորներն այնքան էլ շատ չէին՝ 300-400 հոգի, իսկ հիվանդները և ցրտահարվածները 1000 հոգուց ավելի էին: Ժամանակին օգնություն չստանալու հետևանքով զգալի մասը մահանում էր, իսկ շատերը ողջ կյանքում հաշմանդամ էին մնում: Իսկ եթե օպերացիայի նախօրյակին այս բոլոր հանգամանքները հաշվի առնեին, սպա, անկասկած, զոհերը քիչ կլինեին, և հաջողության արդյունքները՝ ավելի նշանակալից:

Ականատեսների պատմածով Խնուսը, ցավոք սրտի, կողոպտվել էր, իսկ բնակիչների նկատմամբ բռնություններ էին գործադրվել քաղաք մտած կազակների և Հայկական դրուժինայի կողմից: Ըստ կազակների պատմածների՝ հիմնականում ամենաշատ բռնություններ կատարել էին հայերը: Նրանց մեղադրում էին, որ Խնուսի գրավումից հետո ներխուժել են հոսպիտալ, որտեղ եղել են հիվանդ, ցրտահարված ու վ-

իրավոր ասքյարներ, և հասցրել են նրանցից մի քանիսին գազանաբար սպանել: Եվ ի վերջո ձեռնարկված միջոցառումների շնորհիվ հնարավոր եղավ դադարեցնել այդ անսանձ գազանությունները:

Քանի դեռ ընթանում էր Խնուսի օպերացիան, Կովկասյան 5-րդ հրաձգային գունդը Այաշկերտի հովտից տեղափոխվեց Բասեն, և, ինչպես այդ մասին ասվել է վերևում, Սարիդամիշի ճակատում դեկտեմբերի վերջից ընթանում էին կատաղի մարտեր, և որոշվում էր Էրզրումի ճակատագիրը:

Գունդը Չեկանիից Դելի-Բաբա առաջացավ 2-ական գումարտակներով: Այդ գումարտակներից երկուսը լրացրին Կովկասյան 1-ին բանակային կորպուսի պահեստագործը, իսկ 2 գումարտակ մնաց Աշի-Իյաս⁴⁷ գյուղ տանող ճանապարհին: Դելի-Բաբայից գումարտակը տեղափոխվեց Վերին Թայիաջի⁴⁸ գյուղը: Դերբենդյան գնդի հրամանատար, գնդապետ Նիժերաձեն, որի ենթակայության տակ անցան գումարտակները, գումարտակների և վաշտերի հրամանատարներին մանրամասն ծանոթացրեց իրավիճակին: Կանգ չառնելով Վերին Թայիաջի գյուղում՝ գումարտակներն առաջ շարժվեցին և գիշերվա ժամը 4-ին հասան Վերին Թայիաջի գյուղի մոտ գտնվող Դերբենդյան գնդի գետնափոր տնակներին: Այստեղ նրանք ուժեղ սառնամանիքի պայմաններում կանգնած մնացին բաց երկնքի տակ՝ սպասելով հետագա կարգադրությունների: Հունվարի 4-ի առավոտյան ժամը 7-ին հրամայեցին առաջ շարժվել՝ հետևելով առաջապահ զորամասերին: Իրավիճակը պարզվեց հունվարի 3-ի լույս 4-ի գիշերը. գիշերը թուրքերն ավելի շուտ էին նահանջել, քան մերոնք իմացել էին: Թուրքերը նահանջել էին գիշերը՝ ժամը 10-ին, իսկ մերոնք հարձակման էին անցել առավոտյան ժամը 4-ին: Հետապնդումը թույլ էր, քանի որ թուրքերը հասցրել էին բավականին հեռանալ: Թուրքերն այն աստիճան արագ էին նահանջում, որ մեր զորքերը նույնիսկ չէին հասցնում նրանց հետապնդել: Այսպիսով՝ հակառակորդի թիկունք և նահանջի ճանապարհ դուրս գալու միջոցով թուրքերի՝ Էրզրումի ջոկատի զորամասերի շրջապատումը չհաջողվեց: Թուրքերը նույնիսկ հապշտապ հեռացան Դևե-Բոյնուի մի մասից, ուր մտան մեր հեծելապարեկները:

5-րդ գնդի 1-ին և 2-րդ գումարտակները դեռևս մարտերին չեն մասնակցել: Ողջ ընթացքում գտնվելով 1-ին կորպուսի պահեստագործում՝ 3-րդ և 4-րդ գումարտակները հունվարի 3-ին և 7-ին բախումներ էին ունեցել հակառակորդի հետ: 2-րդ գումարտակը դուրս եկավ Դելի-Բաբայից հունվարի 3-ին՝ երեկոյան ժամը 9-ին, և այդ պահից սկսած՝ 1-ին կորպուսի [հրամանատարության] հրամանով տեղից տեղ էր տեղափոխվում: Գումարտակը եղավ Վերին և Ներքին Թայիաջիներում, Յուզվերանում, Չեմիրլիում⁴⁹ և վերադարձավ Յուզվերան, Մեշկի⁵⁰, որտեղ մնաց երեք օր, ապա՝ Արզն⁵¹, իսկ հետո Յուզվերանում միացավ գնդին, որտեղից գունդը տեղափոխվեց Բադիչվան⁵² գյուղ: Բադիչվանում գունդն ունեցավ օրակաց և ապա անցավ Հասան Կալե: Նախատեսվում էր գրոհել Դևե-Բոյնուի դիրքերը, սակայն կորպուսի հրամանատարը հայտարարեց, որ

47 **Էշակ-էլիաս** - գյուղ Բասենի գավառում (Էրզրումի վիլայեթ):
48 **Վ. Թայիսոջա** կամ **Տարիսոջա** - գյուղ Բասենի գավառում (Էրզրումի վիլայեթ):
49 **Յուզվերան, Չամրու** - գյուղեր Բասենի գավառում (Էրզրումի վիլայեթ):
50 **Մեշկի** - գյուղ Բասենի գավառում (Էրզրումի վիլայեթ):
51 Թերևս **Արջի** կամ **Արջա** - գյուղ Բասենի գավառում (Էրզրումի վիլայեթ):
52 **Պատիժվան** - գյուղ Բասենի գավառում (Էրզրումի վիլայեթ):

գրոհը հետաձգվում է: Գնդին կարգադրվեց գիշերել Հասան Կալեում, ապա այնտեղ տեղակայեցին 4-րդ և 3-րդ գումարտակները, իսկ 1-ին և 2-րդ գումարտակներն ուղարկեցին Բեկբաղ⁵³: Որոշ ժամանակ անց ստացվեց կարգադրություն՝ պատրաստ լինել առաջ շարժվելու Չակմակ գյուղում 39-րդ հետևակային դիվիզիայի գնդերից մեկին փոխարինելու համար: Խիստ անբավարար էին փոխադրամիջոցները, գնդի գումակի մի մասը Չելկանից դուրս եկող ճանապարհին թաղվել էր ձյան մեջ: Այդ պատճառով գունդը հաճախ գուրկ էր մնում հացից, մսից և այլ պարենամթերքներից: Ընդհանրապես այլ կորպուսներից տեղափոխվածները 1-ին կորպուսի համար խորթ զավակներ էին համարվում, ուստի օգնություն սպասել հնարավոր չէր:

Թուրքերի կողմից լքված քաղաքներն ու գյուղերը, հատկապես լավագույն շինությունները հրդեհվում և քարուքանդ էին արվում: Գունդը գիշերները ուժեղ սառնամանիքից և ձնամրրիկներից պաշտպանվելու համար թաքնվում էր մարագներում, ախոռներում և այլ շինություններում:

Հունվարի 3-ին, ինչպես ասվել է վերևում, Կովկասյան 6-րդ հրաձգային գունդը, մեկ մարտկոցով դուրս գալով Ալաշկերտի հովտի Ծեյխան, Խանազիր, Խանիկ և Չելկանի գյուղերից, բանակի հրամանատարի կարգադրության համաձայն, անցավ նրա ենթակայության տակ: Նրան տրվեց հետևյալ երթուղին. հունվարի 3-ին Ծեյխանում տեղակայված գումարտակը պետք է անցներ Ռեմկան գյուղ, Խանազիրում տեղակայված գումարտակը՝ Ռեմկան գյուղ, Խանիկում և Չելկանիում տեղակայված գումարտակն ու մարտկոցը՝ Խանազիր: Հունվարի 4-ին Ռեմկանից և Ռեդկանից գումարտակները պետք է անցնեին Թագիր գյուղ, գումարտակը և մարտկոցը՝ Խանազիրից Քյուրդան (Քյուրդ-օղլի): Հունվարի 5-ին բոլոր երեք գումարտակները պետք է կենտրոնանային Աշի-Իլյասում: Գիշերելու վայրերի մասին գնդապետ Միլիկովը պետք է զեկուցեր Սոլակրի 1-ին կորպուսի հրամանատարին և 4-րդ կորպուսի շտաբին:

Այսպիսով հունվարի 3-ին Կովկասյան 6-րդ հրաձգային կորպուսը (3 գումարտակ), մեկ մարտկոցով անցնելով Դրամ-դաղի լեռնանցքը, գրեթե 5-րդ գնդի ճանապարհով, տեղափոխվեց Բասենի դաշտ: Տեղաշարժը կատարվեց ծայրահեղ ծանր պայմաններում՝ խոր ձյան միջով և առանց ճանապարհների: Դժվարմատչելի տեղերում լեռնային հրետանուն օգնելու համար գումարտակները հերթով առաջ էին ուղարկվում՝ ձյունը մաքրելու, և այդպես ջոկատն անցնում էր լեռնանցքները: Գումակը գնդին չէր կարող հետևել, ուստի ուղարկվեց շրջանցիկ ճանապարհով՝ Սարիդամիշով: Գումարտակներն ու մարտկոցը սպահովված էին երեք օրվա հացով և պահածոներով:

Քուրդ-դալիից (Քուրդ-անի) հունվարի 4-ին՝ ցերեկվա ժամը 10-ն անց 6 թուրքեր, ստացվեց հեռագիր. «3 գումարտակից և 1 մարտկոցից կազմված 6-րդ գունդը գիշերում է Քուրդ-դալիում: Մեծ քանակությամբ ձյան և ուժեղ ձնամրրիկի պատճառով չկարողացանք հասնել մինչև Դայար: Վաղը՝ [հունվարի] 5-ին, նախատեսում են հասնել Աշի-Իլյաս: Գնդապետ Միլիկով»:

Խանիկում գտնվող 6-րդ գնդի գումարտակի հրամանատարը հունվարի 4-ին՝ գիշերվա ժամը 3-ն անց 10 թուրքերին, հաղորդում է. «Այսօր՝ առավոտյան ժամը 7-ին, գումարտակի հետ դուրս են գալու՝ անցնելով Խանազիրով: Գիշերելու ենք Քուրդ-դալի

53 Էգեպաստ - գյուղ Բասենի գավառում (երգրումի վիլայեթ):

գյուղում: [Հունվարի] 3-ին գումակը գնացել է Չելկանի՝ պարենի, իսկ Չելկանիից, գնդապետ Սիլիկովի հրամանով, ուղղվելու է Խանազիր: Խանիկում մնում են սպաների իրերը և պարեն, որոնց պահպանությունը հանձնարարել են պրապորշչիկ Կադկովին: Կապիտան Ապակիդձե»:

Հունվարի 5-ին՝ ցերեկվա ժամը 2-ն անց 45 թույլին, Դայարից հաղորդում են. «Ցերեկվա ժամը 1-ին հասա Դայար և շարունակում են առաջ շարժվել: Այսօր կլինեն Աշի-Իյասում: Գումակը լեռնանցքով չի անցնի: Կաշխատեն հակերով փամփուշտներ տեղափոխել և կանեն, ինչ հնարավոր է: Գումակի մի մասը վերադառնում է: Գումակին օգնելու համար ուղարկել են բանվորներ, սակայն հույս չունեն, որ գումակը կանցնի: 10, գնդապետ Սիլիկով»:

Հունվարի 5-ին Աշի-Իյասից. «Չեկուցում են, որ հանձնարարությունը կատարել են և Քյուրդ-դալիից հասել են Աշի-Իլիյաս: Փամփուշտ տեղափոխող երկանիվ սայլակները⁵⁴ և խոհանոցն ուղարկել են Դայար: Տվել են բանվորներ և սակրավորական զործիքներ, սակայն առանց հրացանների, որպեսզի մաքրեն ճանապարհները: Այնուամենայնիվ, կասկածում են, որ գումակը կկարողանա անցնել անչափ խոր ձյունով ծածկված լեռնանցքը, ուստի այդ ուղղությամբ զորամասերը կարելի է ուղարկել միայն բեռնակիր գումակներով: 14, գնդապետ Սիլիկով»: Քանի որ գումակը, չնայած ճանապարհները ձյունից մաքրելու փորձին և բանվորների օգնությանը, չկարողացավ հետևել գնդին, այդ իսկ պատճառով գնդի հրամանատարը նրան ուղարկեց շրջանցիկ ճանապարհով՝ դեպի Սարիդամիշ:

Հունվարի 7-ին 1-ին կորպուսի հրամանատարի կարգադրությամբ 6-րդ գումաղը մտավ գեներալ Չիկովանիի ջոկատի կազմի մեջ: Հունվարի 10-ին՝ գիշերվա ժամը 3-ն անց 10 թույլին, ստացվեց հեռագիր. «Գեներալ Չիկովանիի հրամանով առաջին մարտկոցի դասակը շարժապահեստի դասակի հետ առաջ է քաշվել դեպի Քափանաք գյուղը, որտեղից էլ կուղղվի դիրքեր: 6-րդ գնդի 3 գումարտակները մնում են իրենց տեղերում: Պաշարները լրացված են: 57, Սիլիկով, Աշի-Իյաս»:

Սարիդամիշի ճակատից 6-րդ գնդի 3 գումարտակների հեռանալուց հետո այդ գնդի 4-րդ գումարտակը մնաց Շեյխան գյուղում՝ Սիրկամիրի լեռնանցքը հսկելու և պահակային ծառայություն կատարելու համար:

Հունվարի 5-ին հեռագիր ուղարկեցի այդ գումարտակի հրամանատարին, որ, համաձայն կորպուսի հրամանատարի կարգադրության, այդ գումարտակը կփոխարինվի հետևակ դրուժինայով, իսկ ինքը հերթափոխից հետո պետք է ուղևորվի Կարա-Աղաջ գյուղ՝ անցնելով Խնուսի ջոկատի պետ, գեներալ Պաննի ենթակայության տակ:

Հունվարի 6-ին ժամանում է հերթափոխի համար նախատեսված դրուժինան: Խոր ձյան և ձնամրրիկի հետևանքով պահակային պահպանության հանձնումն ավարտվեց միայն ուշ գիշերին, և միայն գիշերվա ժամը 11-ին գումարտակը (ավելի ստույգ՝ երեք վաշտեր, քանի որ մեկ վաշտ գտնվում էր դիրքերում) շարժվեց Շեյխան գյուղից դեպի Խանազիր գյուղ, որտեղ մնացել էր գնդի շտաբը: Հունվարի 7-ին լրացնելով պարենի ու փամփուշտների պաշարները և վերցնելով անվավոր գումակը՝

54 Ուսական բանակում տարբեր նպատակներով օգտագործում էին երկանիվ սայլակներ: Տվյալ դեպքում գինամթերք տեղափոխող երկանիվները, կախված այն բանից, թե որ թվականին էին պատրաստված, կարող էին տեղափոխել 7200 (1883 և 1888 թթ.) և 14400 (1895 թ.) փամփուշտ:

Չեկանի գյուղով ուղևորվեց դեպի Խսանիկ գյուղ: Խսանիկ գյուղում մեծ թվով մարդիկ կային և անասուններ: Բոլոր շինությունները, ցավոք, քիչ էին, գյուղը փոքր էր, ինչպես նաև լցված էր կիրգիզական վաչկավրաններով, որոնք գտնվում էին այդ գյուղի մոտ: Ստիպված էին որոշ վաչկավրաններում խցկել մեկուկես վաշտ, իսկ գումարտակի մյուս մասը պետք է սառնամանիքին սպասեր իր հերթին: Գիշերը շատ ցուրտ էր, և ուժեղ քամի էր փչում:

Հունվարի 8-ի առավոտյան գումարտակը Խսանիկ գյուղից շարժվեց դեպի Սպովար և Դուրթախ գյուղեր: Դուրթախի համբարակային պահեստից գումարտակը լրացրեց իր պաշարները՝ ստանալով շաքար, թեյ, հաց ու պարենամթերք, և հասավ Մամաղ գյուղ, որտեղ էլ մնաց գիշերելու:

Գիշերը ստացվեց գեներալ Պենևի հեռախոսագիրը: Նա հրամայում էր հունվարի 9-ի առավոտյան մտնել ոչ թե Կարա-Աղաջ, այլ Կանխալի գյուղ և սպասել հետագա կարգադրություններին: Հունվարի 9-ին գումարտակը հասավ Կանխալի գյուղ: Երեկոյան գումարտակի համար նվերներով եկավ Մոսկվայի լիագոր ներկայացուցիչը: Գիշերը գեներալ Պենևից ստացվեց հեռախոսագիր. «[Հունվարի] 10-ի առավոտյան շարժվել Նագի գյուղ»:

[Հունվարի] 10-ի առավոտյան գումարտակին բաժանեցին նվերները, և գումարտակը շարժվեց դեպի Նագի, ուր հասավ կեսօրից հետո: Որոշ ժամանակ անց գեներալ Պենևից ստացվեց կարգադրություն. «Անհապաղ գնալ Չաքրեշ գյուղ և անցնել 8-րդ գնդի հրամանատարի ենթակայության տակ»: 8-րդ գունդն այդ ժամանակ մարտ էր մղում Կուպակ, Տուրխաշ և Կուշկան գյուղերի գծով: Այդ ժամանակ 8-րդ հրաձգային գնդի աջ կողմում հարձակվում էր Հայկական 2-րդ դրուժինան, իսկ նրանից աջ՝ Մամուտալ գյուղի կողմից՝ Կովկասյան 7-րդ հրաձգային գունդը: Հասնելով Չաքրեշ⁵⁵ գյուղ՝ գումարտակի հրամանատարը զեկուցեց 8-րդ գնդի հրամանատարին իր ժամանման մասին: Վերջինս հրամայեց նրան մնալ գյուղում և սպասել իր կարգադրությանը: Գիշերը նա [գումարտակի հրամանատարը] ստացավ 8-րդ գնդի հրամանատարի հրամանը՝ [հունվարի] 11-ին ուղևորվել Վուշկան գյուղ, կսպ հաստատել 8-րդ գնդի ձախ թևի հետ և Վուշկանով հարձակվել Սևո գյուղի վրա՝ Խնուսի վրա մեր հարձակմանը նպաստելու նպատակով գրոհելու Կուպակ - Սևո և մինչև Խնուս-չայ բնագիծը զբաղեցրած հակառակորդի վրա:

[Հունվարի] 11-ի առավոտյան գումարտակը հարձակվեց Վուշկանի վրա, որը պաշտպանվում էր հակառակորդի ուղեկալի կողմից, որը կազմված էր մեկ դասակից: Գումարտակի առջևից գնացող հետախույզներն արագ դուրս մղեցին հակառակորդին գյուղից, և գումարտակը շարունակեց շարժվել դեպի Սևո գյուղ: Մեկ վերստ անցնելուց հետո գումարտակը հրետանակոծվեց, հավանաբար 2 լեռնային թնդանոթներից: Հետախույզները զեկուցեցին, որ բարձունքները զբաղեցված են հակառակորդի հետևակի 2-3 վաշտերի կողմից, որոնք և անկակոն կրակ բացեցին: Գումարտակը, ևս մեկ վերստ անցնելով, գրեթե առանց կորստի, ունենալով 5-6 թեթև վիրավոր հրաձիգներ, նկատեց, որ կրակը թուլացավ, և թուրքերը խմբերով սկսեցին նահանջել: Գումարտակն սկսեց առանց դադարի առաջ շարժվել: Խոր ձյան պատճառով առաջանում էին դանդաղ և երբ ավելի վերև բարձրացան, փչեց սառը քամին, ու սկսվեց ձնամրրիկ: Սևո գյու-

55 Չաքրեշ կամ Ծողրաշեն - գյուղ Խնուսի գավառում (Էրզրումի վիլայեթ):

ւղից լսվեց ուժեղ, արագահար հրաձգություն, սակայն գումարտակը շարունակեց իր հարձակումը Կարա-Դերե գյուղի վրա, որը նույնպես լքվեց հակառակորդի կողմից: Կարա-Դերե գյուղը գրավելուց հետո գումարտակին հանգիստ տրվեց:

Այդ ժամանակ 8-րդ գունդը համառ մարտ էր մղում Կուլակ գյուղի համար: Գնդի ձախ թևում⁵⁶ Խորտիկ գյուղի և Իսնու-չայ գետի միջև, երևաց հարձակվող հակառակորդի նոսր շղթան: Այս հարձակումը ետ մղելու համար պահեստագործից վաշտ ուղարկվեց: Այդ նույն ժամանակ ջոկատի շտաբի պետը հրամայեց գումարտակին հարձակվել № 2350 բարձունքի վրա: Հարձակումը վերսկսվեց: № 235 բարձունքի գրավումը գումարտակի հրամանատարը հանձնարարեց 13-րդ վաշտին, իսկ 14-րդին հրամայեց հարձակվել Խորտիկ գյուղի վրա, որից ձախ հարձակվում էր 16-րդ վաշտը, իսկ 15-րդը մնաց պահեստագործում: 13-րդ վաշտից աջ հարձակվում էին հետախույզները: Երկյուղելով, որ կարող են կտրվել դեպի Իսնուս տանող ճանապարհից, թուրքերը լքեցին Կուլակ գյուղը և ողջ ճակատով նահանջեցին: Նրանք նահանջում էին առանց կանգ առնելու: Գրեթե առանց կրակոցի գումարտակը գրավեց Խորտիկ, Կարիմ-կայա⁵⁶ և Կարա-Զյոփրի գյուղերը: Արդեն գիշեր էր, երբ հրամայվեց գումարտակին մնալ Կամա-Կարա-գյոգ գյուղում՝ մեկ վաշտ տեղակայելով Գյուլվանդիկ⁵⁷ գյուղում:

[Հունվարի] 12-ի առավոտյան 8-րդ գունդը հարձակվեց Կարա-Զյոփրի գյուղի վրա: Կարճատև մարտից հետո թուրքերը նահանջեցին դեպի Իսնուս, իսկ [հունվարի] 13-ին, ինչպես արդեն վերն ասվել է, հեծելագործ 8-րդ գնդի մեկ գումարտակի և Հայկական [2-րդ] դրուժինայի աջակցությամբ գրավեց Իսնուս քաղաքը:

Իսնուսի ջոկատի [հրամանատարի] հրամանով 6-րդ գնդի գումարտակի հրամանատար, կապիտան Բոգոսլավսկին նշանակվեց Կամա-Կարա-գյոգ գյուղի կայագործի պետ:

Քողարկված փոսերում մարդիկ գտան գարի և ցորեն: Գտնվեցին մարդիկ, որոնք արագ գործարկեցին Իսնու-չայի ջրաղացները և սկսեցին այլուր աղալ: Գյուղում կային թուրքերի կողմից լքված, բավականին լավ զինվորական վառարաններ, որոնց մի մասը անսարք էր: Ընդհանուր առմամբ բոլոր վառարանները կարող էին օրական մինչև 600-700 փութ հաց թխել, ուստի գումարտակն անմիջապես սկսեց հաց թխել, շինություններ նախապատրաստեց սննդակայանի, վիրակայանի և ռազմահանգրվանային ուղեկալի համար: [Հունվարի] 14-ին Իսնուսից ժամանեցին գերիների առաջին խմբերը: Նրանց տեսքը վատ էր, նրանք հյուծված էին և վատ հագնված:

Գիշերները սկսվեցին Խուրի-Կամիից Լեկ-Բուդակ և Կուլի-Մակսար⁵⁸ գյուղերի վրա հեծյալ քրդերի հարձակումները: Լաբինսկյան գնդից ուղարկված հետախույզական խումբը պարզեց, որ Շիրվանշեյխի շրջակայքում կենտրոնացել է զգալի քանակությամբ քրդական հեծելագործ: Իսնուսի ջոկատի պետ, գեներալ Պեննը կարգադրեց 6-րդ գնդի գումարտակի հրամանատարին, որ Խուրի-Կամիի մոտ գտնվող և թուրքերի կողմից լքված պետական աղագործարան ուղարկի մեկ վաշտ՝ պաշտպանելու ձախ թևը քրդական հարձակումներից: Այնտեղ ուղարկվեց 14-րդ վաշտը:

56 **Խորմիսայա** - գյուղ Իսնուսի գավառում (Երզրումի վիլայեթ):

57 **Գովանդուկ** - գյուղ Իսնուսի գավառում (Երզրումի վիլայեթ):

58 **Լաքբուդաղ** և **Գոլիմախսուղ** - գյուղեր Իսնուսի գավառում (Երզրումի վիլայեթ):

Հունվարի 16-ին արձակուրդից վերադարձան Մոսկվա և այլ քաղաքներ մեկնած իմ օգնականը (բրիգադային հրամանատար⁵⁹), գնդապետ Դրիդենսկին և դիվիզիոնի բժիշկ Պանկևիչը: Նրանց հաղորդած մանրամասն տեղեկությունները Արևմտյան ռազմաճակատում մեր անհաջողությունների մասին մեզ բոլորիս խիստ վշտացրին:

Ես խիստ անհանգստանում էի գնդապետ Օբրագովի ջոկատի համար: Նրանից մի քանի օր ոչ մի զեկույց չէր ստացվել: Անհանգստանում էր նաև կորպուսի շտաբը, ինչը երևում էր գրեթե ամեն ժամ կատարվող հարցումից՝ կա՞րոյոք տեղեկություն այդ ջոկատի մասին: Վերջապես ստացվեց գնդապետ Օբրագովի զեկույցը, որ նա ջոկատի հետ անցել է Դիք-դաղը: Այդ լուրը մեզ քիչ թե շատ հանգստացրեց: Հարցն այն էր, թե նա ինչպես էր ապահովում պարենամթերքը, քանի որ գումակները չէին հասնում նրան: Կարելի է ենթադրել, որ բավականանում էին տեղական միջոցներով, ինչը և հաստատվեց հետագայում:

Շտապ կորպուսի շտաբ կանչեցին իմ շտաբի պետ գնդապետ Պոլտավցևին⁶⁰: Նախ և առաջ ցանկանում էին ինձ կանչել, սակայն խղճացին որպես ծերուկի: Դերաբիի (կորպուսի շտաբի տեղակայման վայրը) և Դերնիկի (դիվիզիայի շտաբի տեղակայման վայրը) միջև հեռավորությունը մոտ 50 վերստ է մի ուղղությամբ: Անհրաժեշտ էր ձի հեծած գնալ, քանի որ Ղիչ-Գյադուկի լեռնանցքն անհաղթահարելի էր անվավոր տրանսպորտի համար: Լուր տարածվեց, որ նախատեսվում է, որ ես իմ շտաբի հետ տեղափոխվելու եմ Խնուս, և գեներալ Պեննի փոխարեն ինձ են նշանակել Խնուսի ջոկատի պետ: Տարօրինակ էր և ոչ նորմալ, որ մարտի ժամանակ իմ զորամասերը տնօրինում էր այլ գեներալ, իսկ օպերացիայից հետո ես պետք է կրկին ղեկավարեի իմ զորամասերը: Դրանից հետևում էր, որ ես իբր չէի կարող ղեկավարել մարտը:

Հունվարի 17-ին կորպուսի շտաբից վերադարձավ իմ շտաբի պետը, որը երկու օրվա ընթացքում անցել էր մոտ 100 վերստ: Կորպուսի շտաբում նրան հայտնել էին, որ, համաձայն բանակի զորադասավորման, ես իմ դիվիզիայով (7-րդ և 8-րդ գնդերով) պետք է սկսեմ հարձակվել Խնուսից, որպեսզի դուրս գամ Էրզրումի թիկունք և Տրապիզոն տանող ճանապարհ: Այդ գործողության համար նա [գնդապետ Պոլտավցևը] կորպուսի շտաբից ստացել էր այդ շրջանի քարտեզները: Հարձակումն իրականացվելու էր դժվար ճանապարհներով ոչ միայն ձմռանը, այլև նույնիսկ ամռանը Բինգյոլ-դաղի, Միգենուտ-թափասիի⁶¹, Չիարեթ-թափասիի, Դյուզ-յուրդիի լեռնանյութավորումներով և Յայլա-դարասի ու Կիրքիտ-դարասի գետերի ձորերով դեպի Իլիջա: Նման տեղաշարժն անհնար էր ձմռանը դժվարմատչելի տեղանքով: Բացի այդ՝ լուծված չէր պարենով, արկերով և փամփուշտներով ջոկատի մատակարարման հարցը: Նախատեսվող առաջխաղացման վայրը բնակեցված էր մեր նկատմամբ թշնամաբար տրամադրված քրդերով: Նման առաջխաղացումը կարող էր որակվել որպես դիվերսիա [սպառնալիք]՝ իրենց շարժումներով գրոհի ժամանակ Էրզրումի ֆորտերից թշնամու ուժերի ուշադրությունը շեղելու համար: Ես և առնվազն իմ շտաբի պետը այդ կերպ հասկացանք

59 Բրիգադային հրամանատարի պարտականությունն էր վերահսկել դիվիզիայի շարային, վարչական և տնտեսական հարցերը:

60 Գնդապետ Վ. Ն. Պոլտավցևի անձնական գործը տես https://gwar.mil.ru/heroes/document/50501220/?page_id=50516535 (մուտք 18.04.2020):

61 Մահմուդ թափա:

հրամանի իմաստը: Բացի այդ՝ իմ բրիգադի⁶² հեռանալուց հետո Մուշի ճակատում գործ չէր մնում, իսկ թշնամին դեռևս ոչնչացված չէր: Նա համալրում էր ստացել և սպառնում էր Խնուսին: Ինձ հրամայվեց շտաբի հետ տեղափոխվել Խնուս:

Հունվարի 19-ին՝ ժամը 2-ին, ես իմ շտաբի և բեռնակի գումակի հետ դուրս եկա Դերիկից: Դութախ հասանք ցերեկվա մոտ ժամը 4-ին: Դութախի համբարակային պահեստից լրացրինք պարենի պաշարները: Տաքացանք Չեմստվոյի միության սննդատու կետում: Այդ կետը տնօրինում էր շատ աշխույժ մի կին՝ Նատալյա Ալեքսանդրի Սոլովյովան: Նա մեզ փոքր-ինչ կերակրեց:

Դութախից ճանապարհ ընկանք ժամը 5-ին: Ճանապարհին հանդիպեցինք տեղափոխվող հոսպիտալին: Ձիերը վատ կերի պատճառով խիստ հյուծվել էին և դժվարությամբ էին տեղափոխում նույնիսկ աննշան բեռը, հատկապես գառիվերներին, որտեղ խիստ տանջվում էին մարդիկ, որոնք օգնում էին ձիերին, իսկ ձիերի մասին խոսք անգամ չկա: Ձիերը սայթաքում էին, ընկնում և ուժասպառ լինում: Ճանապարհին կային մեծ թվով սատկած ձիեր, մի խոսքով՝ դա ոչ թե տեղաշարժ էր, այլ, բառիս բուն իմաստով, միայն տանջանք ինչպես մարդկանց, այնպես էլ ձիերի համար: Սամանդ գյուղ հասանք երեկոյան ժամը 7-ին: Այստեղ կուտակվել էին փոքր անձնակազմով մեծաթիվ զորամասեր: Բնական է, որ բոլորը ցանկանում էին ծածկի տակ լինել, ինչի համար քիչ պայքար չէր ընթանում. քչերին էր հաջողվում, քանի որ գյուղի շատ շինություններ ամբողջությամբ ավերված էին, իսկ սառնամանիքը բավականին զգալի էր՝ 15 աստիճան, և քամի էր:

Ինձ և իմ շտաբի պետին իր մոտ հյուրընկալեց 255-րդ հետևակային դրուժինայի հրամանատար, գնդապետ Մուրաշկինը մի փոքրիկ սենյակում: Այդ սենյակում 7 հոգի էինք, ներառյալ նաև տանտերը: Գնդապետ Մուրաշկինը մեզ հյուրասիրեց թեյով: Աստված էր ուղարկել:

Այշել կարելի էր նման անկանոն երթուղուց, որը կազմվել էր տարբեր զորամասերի, հիմնարկությունների և գումակների համար, որոնք շարժվում էին այդ ուղղությամբ: Չորսահանգրվանային կետեր, հոսպիտալներ, վաշտեր, դիվիզիայի շտաբներ և տարբեր տրանսպորտներ՝ այս բոլորն ուղարկվել էին միաժամանակ և գիշերելու էին մնացել ավերված գյուղերում:

Հունվարի 20-ին Սամանդից բոլոր զորամասերը, տարբեր ստորաբաժանումները և հիմնարկությունները շարժվեցին դեպի Նազի գյուղ: Քարտեզով հաշվված էր 25 վերստ, իսկ իրականում մոտ 35 վերստ էր: Ճանապարհը շատ ծանր էր: Ես Նազի ժամանեցի երեկոյան մոտ ժամը 6-ին: Ինձ ընդունեց գեներալ Պեննը և ինձ ու շտաբի պետին առաջարկեց մնալ իր մոտ: Գեներալ Պեննն իր շտաբի պետի, Գլխավոր շտաբի կապիտան Գոտովցևի հետ տեղավորվել էր գետնափոր տնակներում: Չնչին բացառությամբ՝ գրեթե բոլոր շինություններն ավերվել էին, և դրանցից մնացած շինանյութերից կառուցել էին գետնափոր տնակներ: Կային նաև կիրգիզական վաչկավրաններ:

62 Թ. Նազարբեկյանն արդեն երկրորդ անգամ է իր զորամիավորումը անվանում բրիգադ՝ չնայած այն հանգամանքին, որ այն 1915 թ. վերջից վերածվել էր դիվիզիայի: Հավանաբար նկատի ունի այն իրավիճակը, որը ստեղծվել էր, երբ նրա դիվիզիայից այլ ջրկատներ տեղափոխվեցին իր ենթակայության տակ գտնվող մի շարք զորամասեր, ինչպես, օրինակ, գնդապետ Մ. Սիլիկյանի 6-րդ հետևակային գունդը:

Գիշերը գեներալ Պեննը կորպուսի շտաբից ստացավ կորպուսի հրամանատարի հեռագիրը, որում նա իր գարմանքն էր հայտնում, թե ինչու Խնուսի մոտ հակառակորդը եռանդուն չի հետապնդվել: Այդ ժամանակ, որպես [կոչումով] ավագ, Խնուսի ջոկատը գլխավորում էր 7-րդ գնդի հրամանատար Օրրագցովը, որը հենց նոր էր հաղթահարել Գիք-դադի լեռնանցքը և նույնիսկ չէր հասցրել ծանոթանալ իրավիճակին: Կորպուսի հրամանատարը պահանջում էր նրան նույնիսկ հեռացնել գնդի հրամանատարությունից, սակայն ես վճռականորեն դեմ արտահայտվեցի՝ լավ իմանալով այդ գնդապետի մարտական կարողությունները: Այս հարցում գեներալ Պեննն ինձ գորավիզ եղավ: Այդ նույն գիշեր նա պահանջեց, որ ես հաջորդ օրը գնամ Խնուս՝ թողնելով, որ իմ շտաբը հետևի ինձ: Նազիից մինչև Խնուս 100 վերստ էր, իսկ ճանապարհը՝ անտանելի: Ես դեռևս չէի գլխավորել Խնուսի ջոկատը: Դեռևս նրա պետ էր համարվում գեներալ Պեննը, ուստի ես նրան առաջարկեցի միասին գնալ Խնուս: Նա կտրականապես հայտարարեց, որ մեկ օրվա ընթացքում ոչ մի դեպքում չի կարող տեղ հասնել: Նրան, իհարկե, հավատացին որպես Գլխավոր շտաբի սպայի: Այդ փութությունն իրադրությամբ չէր պայմանավորված, ինչը և հաստատվեց հետագայում, երբ գեներալ Պեննը եկավ Խնուս: Խնուսի ջոկատը դեռևս շարունակում էր զբաղեցնել միայն Խնուսից հարավ ընտրված դիրքերը, և գեներալ Պեննը ոչինչ չնախաձեռնեց մինչև իմ՝ Խնուս գալը:

Նագիում կար փոքրիկ համբարակային պահեստ, և արդեն ոչ մեծ քանակությամբ հաց էին թխում: Խնուսի գրավումից հետո անցավ մեկ շաբաթ, սակայն ոչ մի բան չարվեց կարևոր կետերում պարեն կենտրոնացնելու համար, որի կարիքը, իհարկե, զորքն ուներ: Ի միջի այլոց, հետագայում նախատեսվում էին նոր օպերացիաներ:

Այդպիսով մի ամբողջ գիշեր ստիպված էի անցկացնել ընդունարանում և ուղարկել հեռախոսագրեր շտաբի կորպուս, մինչդեռ իրականում էական ոչինչ չկար:

Հունվարի 21-ի առավոտյան ես իմ շտաբի հետ մեկնեցի, իսկ գեներալ Պեննը մեկնեց Կարմիր խաչի առաջնագծի ջոկատ և ուրիշ այլ հաստատություններ: Ճանապարհը մաքրում էին բանվորները: Այդպիսի ճանապարհով անցանք 5 վերստ, որից հետո գնացինք զինվորների ու կենդանիների՝ ձյունից մաքրած արահետով: Ճանապարհը ծանր էր, քանի որ կային մեծ թվով ձնակույտեր: Այուջա գյուղից գեներալ Պեննն առաջ շարժվեց: Մենք դժվարությամբ հասանք Քափանաք գյուղ, որտեղ էլ գիշերեցինք: Մեզ հանդիպած բոլոր գյուղերն ավերված էին: Այդ գյուղերում բնակիչներ չկային, և, իհարկե, ոչինչ չկար՝ բացառությամբ դարմանի: Տեղավորվեցինք կանգուն մնացած, սակայն առանց կտուրի հյուղակում: Քանի որ ուժեղ սառնամանիք էր, ուստի վառեցինք թոնիրը՝ ուշադրություն չդարձնելով ուժեղ ծխին: Վառելափայտն առատ էր քանդված տների շնորհիվ: Գիշերը վերևի անցքը ծածկեցինք վրաններով: Ծինության մուտքն այն աստիճան փոքր էր, որ ես կռանալով մեծ դժվարությամբ ներս մտա: Ծնորհիվ այն հանգամանքի, որ մեզ հետ էր բեռնակիր ձիերով տրանսպորտը, մեր ձիերը քիչ թե շատ ապահովված էին կերով:

Հունվարի 22-ին իմ շտաբի հետ ճանապարհ ընկա: Մեզ հետ էին Կարմիր խաչի առաջապահ ջոկատը 7-րդ գնդի վաշտի հետ, որը գալիս էր Մեյդից՝ գնդին միանալու համար, և բեռնակիր ձիերով տրանսպորտը: Կրկին ճանապարհ չկար. կար միայն արահետ, որը տեղ-տեղ ձնածածկ էր: Միայն Կամա-Կարա-գյոզ գյուղի մոտ ճանապարհը մաքրում էր 6-րդ գնդի վաշտը: Այս ողջ ընթացքում մարդիկ բացարձակապես

կորցրել էին զինվորական տեսքը: Գերծանարբեռնվածությունից, իսկ ամենակարևորը՝ թերսնունդից նրանց դեմքերը հյուծված էին: Սնվում էին բացառապես տեղում եղած միջոցներով: Երբ գտնում էին այլուր կամ ցորեն, թխում էին բլիթներ:

Կամա-Կարա-գյոզը մեծ գյուղ է և, ըստ երևույթին, հարուստ էր եղել, իսկ այժմ քարուքանդ էր արված նահանջող թուրքերի ու քրդերի կողմից: Գյուղում կային ջարդից փրկված փոքրաթիվ հայեր: Մի զգվելի սենյակ գտանք, որտեղ երեքով տեղավորվեցինք: Ճաշով մեզ հյուրասիրեցին Կամա-Կարա-գյոզում տեղակայված 6-րդ գնդի 4-րդ գումարտակի սպաները:

Գիշերը ես ստացա կորպուսի հրամանատարի կարգադրությունն այն մասին, որ բրիգադի հրամանատար, գնդապետ Տրիդենակին նշանակվում է ջոկատի հրամանատար, որը կազմված էր 6-րդ գնդի գումարտակից, 2 լեռնային թնդանոթներից և Չերնոմոյան կազակային գնդից, իսկ այդ ջոկատի շտաբի պետ է նշանակվում Գլխավոր շտաբի կապիտան Գոտովցևը⁶³: Այդ ջոկատը ենթարկվում էր գեներալ-լեյտենանտ Աբացիևին, որն իր տեղակայման վայր էր ընտրել Նազի գյուղը: Գեներալ-մայոր Յուրկևիչի⁶⁴ ջոկատը, որը բաղկացած էր 2 հետևակ դրուժինաներից, 66-րդ հրետանային բրիգադի 2 թեթև թնդանոթներից և Վոլգյան կազակային գնդից, տեղակայվել էր Մանակերտում: Այդ ջոկատը ևս ենթարկվում էր գեներալ Աբացիևին:

Իմ ջոկատը, որի կազմում են Կովկասյան 7-րդ և 8-րդ հրաձգային գնդերը, Լաբինսկյան 1-ին կազակային գունդը, Հայկական 2-րդ դրուժինան, Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիոնի 2-րդ լեռնային մարտկոցը և Կարսի 2-րդ ամրոցային գումարտակի 1 վաշտ, տեղակայված է Հարամիից մինչև Խնուս: Կարմիր խաչը մնաց Կամա-Կարա-գյոզ գյուղում: Գիշերը կրկին չհաջողվեց քնել, քանի որ այդ բոլոր հրամանները տրվում էին գիշերը:

Հունվարի 23-ին ես, դիվիզիայի շտաբը, 7-րդ գնդի 13-րդ վաշտը և բեռնակիր տրանսպորտը դուրս եկանք Կամա-Կարա-գյոզից: Ուժեղ մառախուղ էր և շատ ցուրտ: Գարնանը հավանաբար այս ճանապարհին անանցանելի կղառնա, քանի որ կան մեծ թվով գետակներ, և ջուրն առատ է: Ճանապարհին ընկած էին մեծ թվով կենդանիների՝ ձիերի, բեռնակիր ձիերի, ուղտերի և եղջերավոր անասունների դիակներ: Մակրավորները գետակների վրա կամուրջներ էին կառուցում:

Ցերեկվա ժամը 2-ին հասանք Կարա-Քյոփրի մեծ գյուղը: Այդ գյուղը հայկական էր: Ծինությունների մեծ մասը քանդված էր: Հնարավոր էր գտնել միայն հարդ: Այստեղ գտնվում էին 8-րդ գնդի երկու վաշտեր: Մարդիկ անտանելի պայմաններում էին: Երևում է, որ դեկավարությունը նրանց մասին չէր հոգում: Նրանք ևս չէին ուսումնասիրել մոտակա տեղանքը և միջոցներ չէին ձեռնարկել, եթե հակառակորդի հարձակում լիներ: Վաշտերի հրամանատարներից ավագն էր կապիտան Տուգուշովը, որը շատ անհասկացող սպա էր:

Դժվարությամբ գտանք շինություն, որտեղ հինգ հոգով տեղավորվեցինք: Գիշերը եկավ 7-րդ գնդի 13-րդ վաշտը:

63 Գոտովցև Ալեքսեյ Իվանի (1883-1969) - ռուսական և խորհրդային ռազմական գործիչ, գեներալ-լեյտենանտ (1943), պրոֆեսոր, ռազմական գիտությունների դոկտոր:

64 Յուրկևիչ Պյոտր Սիմոնի (1854-?) - ցարական բանակի գեներալ-լեյտենանտ (1916):

Հունվարի 24-ին՝ առավոտյան, սաստիկ ձյուն տեղաց, և շուրջբոլորը մառախուղ էր:

Առավոտյան ժամ 9-ին շարժվեցինք, սակայն ճանապարհին մոլորվեցինք, ուստի վերադարձանք և գնացինք այլ ճանապարհով: Ճանապարհին ընկած էին մեծ թվով սատկած կենդանիներ: Հանդիպեցինք սպանված քրդերի և թուրքերի կողմից մորթված հայերի:

Չամուրիի գյուղում ինձ դիմավորեց 8-րդ գնդի գումարտակի հրամանատար, կապիտան Բաբենկոն, որը ներկայացրեց իրադրությունը և իր գումարտակի դասավորությունը: Փոքր-ինչ հանգստանալուց հետո շարունակեցինք ճանապարհը: Իսնուս հասանք ժամը 4-ի կողմերը: Լավ քաղաք էր, կային մեծ շինություններ, գորանոցներ, հոսպիտալ և փաշայի տունը: Ամենուրեք մեր անհիմն ավերածությունների կնիքն էր ու ցեխը: Իսնուս-չայ գետը քաղաքը բաժանում էր երկու մասի: Գետի վրա կառուցվել էր մեկ կամուրջ և ս: Չնայած ավերածություններին՝ այնուամենայնիվ կային շատ լավ և մեծ տներ:

Ինձ դիմավորեց Լաբինսկյան գնդի հրամանատար, գնդապետ Նոսկովը, իսկ երբ ես տեղավորվեցի, եկավ նաև գեներալ Պեննը: Ես և շտաբը տեղավորվեցինք երկրորդ հարկի երեք սենյակներում: Սենյակները չէր կարելի լավ անվանել: Այդ սենյակների առանձնահատկությունը պատուհանների առատությունն էր: Սենյակների հակադրությունը կահույքն էր, որը պատված էր փափուկ թավիշով: Ճաշով մեզ հյուրասիրեց 7-րդ գնդի գումարտակի հրամանատար, փոխգնդապետ Ալեքսանդերը:

Հունվարի 25-ին ես ստանձնեցի ջոկատի հրամանատարությունը: Մինչև ճաշ ստիպված էի ընդունել զեկույցներ և անել կարգադրություններ: Ինձ անհանգստացնում էր հացի և այլուրի լիակատար բացակայությունը: Ժամը 3-ին այցելեցի հոսպիտալում գտնվող վիրավոր և հիվանդ թուրքերին: Թուրքերն աղաչում էին իրենց հաց տալ: Նրանց բացատրեցի, որ մենք ինքներս աղետալի վիճակում ենք, սակայն խոստացա հայթայթել ու նրանց ուղարկել փոքր քանակությամբ հաց, և շուտով հացի պակաս չի լինի: Ծանր էր նայել ցրտահարվածներին, որոնք մեծ թիվ էին կազմում թուրքերի մոտ: Մի թուրք հայտարարեց, որ հոսպիտալում իրեն թրով հարվածել էր մի կազակ և ոչ միայն իրեն, այլև շատերին, իսկ ոմանց նույնիսկ սպանել էր: Այս փաստից հետևում է, որ ոչ միայն հայերն են անկարգություններ արել հիվանդ և վիրավոր թուրքերի նկատմամբ, ինչպես վկայում էին լուրերը, այլև կազակները, որ հետ չէին մնում նրանցից:

Ժամը 5-ին հավաքեցի բոլոր զորամասերի պետերին և կարգադրեցի ըստ զորադասավորման վերախմբավորվել: Հավանաբար գնդապետ Նոսկովն իր նշանակումից դժգոհ մնաց: Երևում է, որ չէր ցանկանում քաղաքից դուրս գալ: Երկար ժամանակ զրուցեցի զորամասերի պետերի հետ՝ ցույց տալով այն խախտումները, որոնք, ցավոք, կատարում էին ոչ միայն շարքայիները, այլև բարձր հրամանատարական կազմը: Իսնդիրն այն էր, որ յուրաքանչյուրը ձգտում էր պաշտպանելու միայն իր շահերը՝ անտեսելով զորքի շահերը:

«Հրաման գեներալ Նազարբեկովի ջոկատին: Քարտեզը՝ թուրքական, 5 վերստանոց:

Քաղաք Իսնուս, № 1, 25 հունվարի 1916 թ., ցերեկվա ժամը 1:

Վեյս համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) փարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

1) Կարա-Քյոփրիից և Խնուսից ետ շարտված հակառակորդը նահանջել է դեպի հարավ, ստացել համալրում ու հանդերձանք և դիրքավորվել 2500-2000 մ բարձրությամբ հյուսիսային բարձունքների միջև: Հակառակորդի պահակակետերը տեղակայված են Խարաբա - Կորդի - Մամշիկ - Շուկրինի-կում - Ամասիա - Խամիլ - Չովուտ - Կոնգոր⁶⁵ գյուղերի երկայնքով:

Ուազմագերիներից ստացված տեղեկությունների համաձայն՝ հակառակորդի ուժերը կազմում են 36-րդ դիվիզիայի (106-րդ, 107-րդ և 108-րդ հետևակային գնդեր) 5-6 գումարտակներ՝ մի քանի գնդացիներով և 4 թնդանոթներով, համարված 1-ին և 3-րդ պահեստային գնդերի 1-3 գումարտակներով և հեծելազորի 21-րդ, 24-րդ և 33-րդ գնդերի մի քանի հեծելավաշտերով (հաստատված է 21-րդ գնդի 5-րդ հեծելավաշտի, 24-րդ գնդի 4-րդ հեծելավաշտի և 33-րդ գնդի 4-րդ հեծելավաշտի ներկայությունը):

2) Մեզանից աջ գտնվող գեներալ Չիկովանիի ջոկատը տեղակայված է Կելլիում⁶⁶, ձախ կողմում գտնվող գեներալ Աբացիևի ջոկատն ապահովում է մեր հաղորդակցությունը Հարամիից⁶⁷ Ղարաքիլիսայի հետ:

3) Իմ ջոկատին հանձնարարված է եռանդուն կերպով հարձակվել Մուշի վրա ու ետ շարտել հակառակորդին Խեյրի-Իզ-կալա-թափասի լեռ - Խան-Շարաֆ-դաղի գծից այն կողմ, առաջապահ ուժերով զբաղեցնել Կյում-կյում-վաղիկ⁶⁸ և Մոլլա-Հալի գյուղերից հարավ ընկած լեռնանցքը և հետախուզել Մուշի, իսկ հյուսիս-արևմուտքում՝ դեպի Էրզրում տանող ուղիները՝ կապ պահպանելով գեներալներ Չիկովանիի և Աբացիևի ջոկատների հետ: Միաժամանակ գեներալ Աբացիևի ջոկատն ուժեղացված հետախուզություն է կատարելու Լիբի (Լիզ) ուղղությամբ:

Առաջադրանքը կատարել հատուկ հրաման ստանալուց հետո:

1) Առայժմ իմ ենթակայության տակ գտնվող ջոկատին հրամայում եմ.

ա) Գնդապետ Օբրագցովի ջոկատին՝

Կովկասյան 7-րդ հրաձգային գնդի 1 ¼ գումարտակ, 4 գնդացի,

Լաբինսկյան 1-ին կազակային գնդի 1 ½ հարյուրյակ,

Ընդամենը՝ 1 ¼ գումարտակ, 4 գնդացի, 1 ½ հարյուրյակ,

ա) Տեղակայվել Խնուս-Ալագոզ շրջանում, պաշտպանել ու ապահովել Խնուսը հարավ-արևմուտքից և հյուսիս-արևմուտքից, մարտական պահպանություն տեղակայել Մամաշ գյուղից մինչև Կարա-Մոլլա գյուղը ներառյալ և հսկել Շեյթան-Կոլին, Բաշքոյը ու Ակվիրան-Կեզեկի լեռնանցքը⁶⁹, ինչի համար տեղակայել ուժեղացված ուղեկայներ Օրթաքոյի և Ակ-Բիրանի⁷⁰ մոտ: Կատարել հետախուզություն պահպանության առջևում և կապ պահպանել գեներալ Չիկովանիի ջոկատի հետ:

բ) Գնդապետ Չապլինսկու ջոկատին՝

Կովկասյան 7-րդ հրաձգային գնդի ½ գումարտակ,

Կովկասյան 8-րդ հրաձգային գնդի 2 գումարտակ, 6 գնդացի,

Կովկասյան 2-րդ հրաձգային հրետանային դիվիզիոնի 4 թնդանոթ,

65 Խաբե (Խարաբա), Կորդի (Խուրդի), Մամաշ (Մամեշիզոմ), Շուքրիզոմ, Ամասիա (Ամար), Խամլեբեր, Գոնդուր (Խոնդուր) - գյուղեր և ագարակներ Խնուսի գավառի հարավում Բյուրակնյան լեռնաշղթայի շրջանում:

66 Քյուլի - գյուղ Խնուսի գավառում:

67 Հարամիկ - գյուղ Խնուսի գավառում:

68 Գյումգյում - Կարդոյի գավառի կենտրոնը (Բիթլիսի վիլայեթ):

69 Աղվերան-գեղիկ - լեռնանցք:

70 Օրթաքոյ, Աղվերան - գյուղեր Խնուսի գավառում (Էրզրումի վիլայեթ):

Լաբինսկյան կազակային գնդի ½ հարյուրյակ,
Ընդամենը՝ 2 ½ գումարտակ, 6 գնդացի, 4 թնդանոթ և ½ հարյուրյակ,
բ) Տեղակայվել Խնուսի հարավում, ինչի համար պահակային զորախումբ տեղա-
կայել Կարա-Մոլլա գյուղից № 1950 բարձունքով մինչև Արուս⁷¹ գյուղը ներառյալ:

գ) Գնդապետ Նոսկովի ջոկատին՝

Կովկասյան 7-րդ հրաձգային գնդի 1 գումարտակ, 2 գնդացի,

Կովկասյան 8-րդ հրաձգային գնդի 1 ½ գումարտակ, 2 գնդացի,

Հայկական 2-րդ դրուժինայի ½ գումարտակ

66-րդ հրետանային բրիգադի 2 թնդանոթ,

Լաբինսկյան կազակային գնդի 3 հարյուրյակ,

Ընդամենը՝ 3 գումարտակ, 4 գնդացի, 2 թնդանոթ և 3 հարյուրյակ,

զ) Տեղակայվել Չևերմա - Խարամ⁷² շրջանում՝ պաշտպանելով Խնուսը հարավ-
արևելքից, ինչի համար պահակային զորախումբը տեղակայել Արուս - Անիս - Կախ-
կախ - Չիարեթ-թափասի լեռ գծով: Կարա-Զյոփրիում մինչև հատուկ կարգադրու-
թյունը թողնել 2 վաշտ, որոնք ապահովելու են Չերմակի ուղղությունը: Կապ պահ-
պանել գեներալ Աբացիևի մոտակա զորամասերի հետ:

2) Ընդհանուր պահեստագործ գտնվում է Կովկասյան 7-րդ հրաձգային գումար-
տակի ենթակայության տակ՝ 1 գումարտակ, 2 գնդացի,

Կովկասյան 2-րդ հրաձգային հրետանային դիվիզիոնի 2 թնդանոթ,

Լաբինսկյան կազակային գնդի 1 հարյուրյակ,

Կարսի 2-րդ ամրոցային սակրավորական վաշտի ¼ հարյուրյակ,

Ընդամենը՝ 1 գումարտակ, 2 գնդացի և սակրավորների ¼ գումարտակ,

դ) Տեղակայվել Խնուսում:

5) Հրետանային շարժապահեստները գտնվելու են իրենց մարտկոցներին կից:
Հրետանու պետին՝ արկերի և փամփուշտների պահեստը տեղակայել Խնուսում,
Չևիրմեում և Հարամիում:

6) Վիրակապման ջոկատը և լազարեթները տեղակայել ջոկատի բժշկի ցուցումով:

7) Գնդային գումակները տեղակայել առանձին զորամասերի պետերի ցուցումով:

8) Ջոկատների պետերին՝ հեռախոսակապ հաստատել գլխավոր կայանի հետ
Խնուսում շտաբի պետի հրամանով:

9) Գնդապետներ Օբրագցովին, Չապլինսկուն և Նոսկովին՝ ընտրել ու ամրացնել
դիրքեր՝ հակառակորդի հնարավոր հարձակմանը հակազդելու համար:

10) Ջոկատների հրամանատարներին՝ հետևել հակառակորդին դիտակետերից և
կատարել հետիոտն ու հեծելազորային հետախուզություն:

11) Ներկա հրամանում նշված դիրքերը զբաղեցնել հունվարի 26-ի լույս 27-ի
գիշերը՝ ժամը 12-ին, տեղակայումը թաքցնել հակառակորդից՝ օգտվելով մթնոլորտից
կամ առավոտյան մառախուղից:

Ջոկատների հրամանատարներին՝ պայմանավորվել միմյանց հետ, որպեսզի խու-
սափեն ավելորդ տեղաշարժերից: Հունվարի 27-ին՝ առավոտյան ժամը 9-ին, ինձ ներ-

71 Արոս - գյուղ Խնուսի գավառում (Էրզրումի վիլայեթ):

72 Չաուրմա, Հարամիկ - գյուղեր Խնուսի գավառում (Էրզրումի վիլայեթ):

կայացնել ջոկատներում տրված հրամանները և տեղակայման սխեմաները: Գումար-տակների կազմակերպումը հնարավորության դեպքում վերականգնել:

12) Գնդապետներ Օբրազցովին, Չապլինսկուն և Նոսկովին՝ շտապ գեկուցագրերը հասցնել միայն առավոտյան ժամը 11-ն անց 30 րոպեին, ցերեկը՝ ժամը 5-ն անց 30 րոպեին, երեկոյան ժամը 9-ն անց 30 րոպեին և գիշերը՝ 4-ն անց 30 րոպեին:

13) Չոկատներին՝ միմյանց հետ հաստատել կայուն կապ:

14) Տեղակալներն են գնդապետ Օբրազցովը և գնդապետ Չապլինսկին:

Բնագիրը ստորագրել է ջոկատի հրամանատար, գեներալ-մայոր Նազարբեկովը:

Ստորագրությունը վավերացրել է շտաբի պետ, Գլխավոր շտաբի գնդապետ Պոլ-տավցևը:

Ուղարկվել է 1916 թ. հունվարի 25-ին՝ երեկոյան ժամը 7-ն անց 30 րոպեին»:

[Հունվարի] 26-ի առավոտյան մեկնեց գեներալ Պեննը: Հրամայեցի շտաբի պետին գտնել ուղեկցողներ, եթե նախատեսվի առաջանալ դեպի Էրզրում:

Խնուսում գործերի վերախմբավորման ժամանակ մորթել էին մի քրդական ընտանիք, իսկ կնոջը՝ բռնաբարել: Կասկածն ընկավ Հայկական դրուժինայի և հրետա-նային շարժապահեստի հրետանավորների վրա: Կիսամեռ մնացած կինը նկարագրել է մարդասպաններին և բռնաբարողներին, որոնք մեծ փափախներով էին և դաշույններով էին կատարել այդ անմարդկային ջարդը: Ցավոք սրտի, Դրոն այդ ժամանակ հիվանդության պատճառով բացակայում էր: Նա մեկնել էր Երևան, իսկ նրա տեղա-կալը, չնայած որ շատ լավ ու ազնիվ մարդ էր, սակայն այնքան էլ վճռական չէր: Կարելի է ենթադրել, որ այդ բռնությունը կատարվել էր թուրքահայերի կողմից՝ վրեժից դ-րդված, քանի որ կողոպուտ չէր եղել: Հրամայեցի անհապաղ հետաքննություն սկսել՝ դա հանձնարարելով փորձառու սպայի:

Ցավոք սրտի, ամենուրեք տեղի էին ունենում կողոպուտներ ու բռնություններ, հատկապես կազակների կողմից: Դրա գլխավոր պատճառը պարենի բացակայու-թյունն էր:

100 օրվա ընթացքում բերել էին մի քիչ պաքսիմատ, յուրաքանչյուր մարդուն՝ մեկական ֆունտ, և դա էր պատճառը, որ տեղական ղեկավարությունը մատների արանքով էր նայում մարդկանց կողմից պարենի որոնմանը, ինչը ժամանակ առ ժամա-նակ ուղեկցվում էր բռնություններով:

Քանի որ նախատեսվում էր հարձակում, ուստի կարգադրվեց արագ ավարտել վերախմբավորումը: Հունվարի 27-ին կորպուսի շտաբից կարգադրություն ստացա, որ հարձակման կարող եմ անցնել իմ հայեցողությամբ: Այս առիթով զորամասերի պետերին հրավիրեցի խորհրդակցության և հրամայեցի, որ պատրաստ լինեն հուն-վարի 29-30-ին անցնելու հարձակման, խնդրեցի, որ հնարավորության դեպքում սպահովեն մարդկանց գոնե բլիթներով, քանի որ հետագա առաջխաղացման ժա-մանակ կարող են հույս դնել միայն լքված գյուղերում ինչ-որ բան գտնելու վրա: Ցավոք սրտի, այդ ժամանակ կորպուսի շտաբը զբաղված էր դատարկաբանությամբ: Ստիպ-ված էինք պատասխանել նույն կերպ: Մեղավորը շտաբի պետն էր:

Երբ ես գտնվում էի Խնուսում, մի քանի օրվա ընթացքում այնտեղ կուտակվեցին մեծ թվով հայ փախստականներ, գլխավորապես՝ կանայք ու երեխաներ: Նրանք ծայ-րահեղ կարիքի մեջ էին, մեծ թիվ էին կազմում հիվանդներն ու հյուծվածները: Նրանց ուղարկում էին Ալաշկերտի Ղարաքիլիսա, որտեղ սննդի կետ կար: Քանի որ նրանցից

վե՛ր համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) րարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

շատերը չէին կարող ուտքով գնալ, ուստի ես խնդրեցի կորպուսի հրամանատարին թույլ տալ նրանց ուղարկել վերադարձող գումակներով և, ի գարմանս ինձ, թույլտվություն ստացա:

Չորամասերի պետերը դեռ չէին հեռացել իմ սենյակից, երբ ես ստացա կորպուսի հրամանատարի հրամանը՝ հունվարի 28-ի առավոտյան անցնելու հարձակման: Մեկ օրվա ընթացքում՝ երկու փոփոխություն, և անհասկանալի էր, թե ինչով էր պայմանավորված այդպիսի շտապողականությունը: Ստիպված էի շտապ հավաքել զորամասերի հրամանատարներին և նոր կարգադրություններ տալ: Ջոկատի մի մասը դեռ չէր հասցրել վերախմբավորվել, իսկ վիրակապման ջոկատը և լազարեթը՝ զբաղեցնել նշված տեղերը: Ցավոք, կրկին քառս սկսեց, ինչպես միշտ եղել էր: Բիարկե, բլիթներ մատակարարելու մասին այլևս պետք չէր մտածել: Որոշ զորամասեր գնացին իրենց տեղամասերը՝ գիշերվա ընթացքում անցնելով 15 վերստ:

Չորամասերի հեռանալուց հետո բերեցին պաքսիմատ՝ յուրաքանչյուրին 2 ֆունտ չափով: Ամբողջ գիշեր ես և շտաբի անդամները չկարողացանք հանգստանալ, քանի որ կարգադրություններ էինք անում և կազմում էինք հարձակման հրամանը: Ես տվեցի հետևյալ հրամանը. «Քարտեզը՝ թուրքական, մեկ դյույմում 5 վերստ: Խնուս, № 2-րդ, 27 հունվարի 1916 թ., երեկոյան Ժամը 8:

1) Հակառակորդի վերաբերյալ տեղեկությունները նույնն են: Կան նախանշաններ, որ հակառակորդը թուլացրել է իր ձախ թևն ու կենտրոնը և ուժեղացրել աջ թևը: Ձեռք ենք գցել թուրքական բանակի հրամանատարի հեռագիրը, որում նա բողոքում է անտանելի դրությունից և համալրում է խնդրում:

2) Հարևան զորքերի մասին տեղեկությունները նույնն են: Հունվարի 28-ին զեներալ Աբացիևի ջոկատը կիրականացնի ուժեղացված հետախուզություն դեպի Լիբ (Լիզ) և Կոփ:

3) Հաշվի առնելով բանակի ճակատում ստեղծված իրադրությունը և Մուշի ու Բիթլիսի ուղղություններով թուրքական լրացուցիչ ուժերի գալը՝ ինձ վստահված ջոկատին կորպուսի հրամանատարը հրամայեց հունվարի 28-ի լուսաբացին բոլոր ուժերով վճռականորեն գրոհել մեր դեմ խմբավորվող հակառակորդի վրա և ետ շարտել Խան-Շարաֆ-դաղ լեռան լեռնանցքից:

ա) Գնդապետ Օբրագովի ջոկատին, որն ուժեղացվել է Կովկասյան 7-րդ հրաձգային գնդի վաշտով, հունվարի 28-ի լուսաբացին, եթե կարելի է ավելի վաղ, գրոհել հակառակորդի վրա № 2500 բարձունքի և Կոլան գյուղի ուղղությամբ՝ աշխատելով շրջառել նրա ձախ թևը, իսկ հաջողության դեպքում զարգացնել գործողությունը Կյում-Կյում-Վադիկ գյուղի ուղղությամբ:

բ) Գնդապետ Չապլինսկու ջոկատին՝ հունվարի 28-ին՝ մինչև լուսաբացը, եթե հնարավոր է ավելի վաղ, գրոհել հակառակորդի վրա Կոլան - Թիքթեշ⁷³ ճակատով՝ նրան հետ մղելով դեպի հարավ:

գ) Գնդապետ Նոսկովի ջոկատին՝ հունվարի 28-ի առավոտյան գրոհել հակառակորդի վրա Կախկիկ - Արարու - Ֆարոքարիկ - Շակլիկ⁷⁴ ուղղությամբ՝ շրջառելով հակառակորդի աջ թևը:

73 Թիքթեշ (Տրշուկ) - գյուղ Խնուսի գավառում (երգրումի վիլայեթ):
74 Քաղքիկ, Արարու, Ֆրոֆիկ, Ճիլգյուլ - գյուղեր Խնուսի գավառում:

դ) Ընդհանուր պահեստագորին՝ փոխգնդապետ Կրեմենեցկու ղեկավարությամբ լուսաբացին լինել մարտական լրիվ պատրաստականության մեջ, իսկ փոխգնդապետ Կրեմենեցկուն՝ լուսաբացին լինել ինձ մոտ:

4) Չինամթերքի պահեստները կլինեն Խնուսում և Չավերմե⁷⁵ գյուղում:

5) Վիրակապման գլխավոր կետերից մեկը կլինի Կարա-Աղաջում, մյուսը՝ գնդապետ Նոսկովի գորայանը կից և նրա ղեկավարության ներքո:

Լազարեթներ կբացվեն Խնուսում և Կարա-Բյոփրիում:

6) Գումակները [տեղակայվում են] գորամասերի հրամանատարների կարգադրությամբ:

7) Շտաբի պետին՝ բաշխել հեռախոսները ջոկատների միջև: Ջոկատների հրամանատարներին՝ հատուկ ուշադրություն դարձնել մշտական կապ հաստատելուն և միջոցներ ձեռնարկել, որպեսզի հեռախոսագծերը պաշտպանված լինեն վնասվելուց:

8) Շտապ զեկուցագրերն ուղարկել ավելի վաղ նշված ժամկետներում՝ առավոտյան ժամը 11-ն անց 30 րոպեին, ցերեկը՝ ժամը 5-ն անց 30 րոպեին, երեկոյան ժամը 9-ն անց 30 րոպեին և գիշերը՝ 4-ն անց 30 րոպեին: Վերջին զեկուցագրում ներկայացնել անցած օրվա ամփոփագիրը, ունեցած կորուստները՝ նշելով սպաների անունը և հայրանունը [ազգանունը], ռազմավարը, զինամթերքի ծախսը և այն, թե հրացանի քանի փամփուշտ և թնդանոթի քանի արկ կա:

9) Տեղակալներն են գնդապետներ Օբրազցովն ու Չապլինսկին:

Ստորագրել է ջոկատի հրամանատար, գեներալ-մայոր Նազարբեկովը:

Ստորագրությունը վավերացրել է շտաբի պետ, Գլխավոր շտաբի գնդապետ Պոտավցևը:

Ուղարկվել է 1916 թ. հունվարի 27-ին՝ երեկոյան ժամը 9-ն անց 20 րոպեին»:

Իմ հրամանի համաձայն՝ հունվարի 28-ին երեք գորայուներ լուսաբացին անցան հարձակման և ետ շարտեցին հակառակորդի պահակային գորախումբը: Սկզբում բացվել էր հրացանային, ապա՝ հրետանային կրակ: Հակառակորդը ետ մղվեց և ժամը 10-ին նահանջեց դեպի իր բաձրադիր դիրքերը: Պարզվեց, որ հակառակորդն ունի 4 թնդանոթ:

Չախ գորայունը մնացել էր ետևում, ուստի մեջտեղի գորայունը ստիպված էր կանգ առնել: Չարմանալի էր այն, որ չնայած գորայուները գլխավորում էին քիչ թե շատ փորձառու մարդիկ, սակայն նրանք չէին կարողանում հասկանալ, թե մարտի ժամանակ ինչ կարևոր նշանակություն ունեն ճշմարիտ ու կանոնավոր զեկուցագրերը: Առանց այդ զեկուցագրերի, սենյակում նստած՝ դժվար է ղեկավարել մարտը: Ցավոք, գորայուների միջև չկար փոխադարձ կապ: Երևում էր, որ շտապողականության հետևանքով նրանք չէին հասցրել կապը կազմակերպել: Դա էր պատճառը, որ ջոկատի գորամասերը չկարողացան զարգացնել իրենց սկզբնական հաջողությունը: Ստիպված էին կանգնել լեռնանցքին չհասած: 8-րդ գնդում ծանր վիրավորվել էին երեք պրապորշիկներ, սպանվել էին 18 շարքայիններ, և վիրավորվել 88-ը, 7-րդ գնդում վիրավորվել էր փոխգնդապետ Ալեքսանդերը: Չգիտես ինչու, բոլորը հույս ունեին, որ մեր ուժերի երևալուն պես հակառակորդն անմիջապես, առանց մարտի կնահանջի:

Հունվարի 29-ին գորայուները շարունակում էին հարձակվել և կատարել մարտական հանձնարարությունը: Համալրում ուղարկեցի ճակատից հարձակվող գորա-

75 Չաուրմա - Չևիրմե - գյուղ Խնուսի գավառում:

սյանը՝ 2 լեռնային թնդանոթ և 8-րդ գնդի մեկ վաշտ: Համայրումը ստանալուց հետո մեջտեղի գորասյունն անցավ վճռական հարձակման: Թւերից սպառնացող վտանգը ստիպեց հակառակորդին նահանջել: Նա հատկապես վախենում էր իր ձախ թևի համար, որտեղ գնդապետ Օբրագովի գորասյունը, հաղթահարելով չափից ավելի մեծ դժվարություններ և շարժվելով գրեթե անհաղթահարելի Բինգյոլ-դաղի լեռնանյութավորումներով, սկսեց սպառնալ հակառակորդի թիկունքին: Ցավոք, գնդապետ Նոսկովի գորասյան առաջխաղացումն այդպես եռանդուն չէր, ուստի չկար այն հաջողությունը, որ սպասում էի նրա հեծելագորից, որն ավելի ուժեղ էր, քան մյուսները: Նա հետո ամբողջ մեղքը բարդեց առջևից դանդաղ գնացող Հայկական դրուժինայի վրա: Դա նրա կողմից միայն դատարկ պատրվակ էր: Եթե նա վճռականություն հանդես բերեր և ճշտորեն կատարեր իր վրա դրված հանձնարարությունը, ապա դրուժինան միշտ էլ կարող էր փոխարինել կանոնավոր գորամասով կամ էլ ստիպել նրանց ավելի արագ առաջանալ: Ինչպես ինձ հետո հայտնեցին նրա գնդի սպաները, նա ողջ ընթացքում բարձրաձայնում էր, որ հարկ չկա շտապելու:

Այդ նույն օրը Խնուս եկավ կորպուսի հրամանատարն իր շտաբի պետի և կորպուսի շտաբի մի մասի հետ: Ես նրան ընդառաջ գնացի Կարա-քյոփրիի ուղղությամբ և զեկուցեցի մարտի ընթացքի մասին: Այդ օրը կորպուսի հրամանատարն իր շտաբի հետ ճաշեց ինձ մոտ՝ շտաբում: Նրան սենյակ հատկացվեց այն շինությունում, որտեղ ժամանակին մնում էին գեներալ Պևնևը և գնդապետ Նոսկովը: Որոշ ժամանակ անց, երբ կարգի բերվեց Խնուսի փաշայի տունը, կորպուսի շտաբն այնտեղ տեղափոխվեց:

Վերադարձող գումակներով հաջողվեց փախստականների հետ ուղարկել մոտ 150 վիրավորի: Հունվարի 29-ի լույս 30-ի գիշերը հակառակորդը նահանջեց Կյում-կյում-վաղիկի⁷⁶ ուղղությամբ գտնվող իր դիրքերը: Մեր գորասյուները շարունակում են հարձակվել Չարբոբի⁷⁷ և Կյում-կյում-վաղիկ գյուղերի վրա: Հունվարի 31-ին աջ գորասյունը գրավեց Կյում-կյում-վաղիկը, կենտրոնականը՝ Չարբոբիը, իսկ գնդապետ Նոսկովն իր հեծելագորի և Հայկական դրուժինայի հետ ուղարկվեց հարավ՝ դեպի Մուշ: Հակառակորդը բոլոր ուժերով նահանջում էր Կյում-կյում-վաղիկից արևմուտք:

Փետրվարի 1-ին ես իմ շտաբի հետ Խնուսից ուղևորվեցի Կորջիկ գյուղ: Մինչև Կարա-Աղաջ գյուղը ճանապարհը տանելի էր, սակայն այնուհետև սարսափելի էր: Դա ճանապարհ չէր, իսկ արահետին սփռված էին եղջերավոր անասունների և ձիերի դիակներ: Հակառակորդի դիրքերի մոտ սկսեցին հանդիպել ասկյարների դիակներ: Մինչև Կորջիկ գյուղը հաշվեցի մոտ 50 մարդ: Հավանաբար դիրքերում նրանք ավելի շատ էին: Մենք զարմանում էինք, թե ինչպես են կարողացել մեր հրաձիգները հաղթահարել անչափելի ձյունը, որը հասնում էր մինչև գոտկատեղ, ու գնալ գրոհի այդպիսի բարձունքների վրա: Գիշերելու վայրերում, որտեղ ձյունը մաքրվել էր, խորությունը հասնում էր 2 ½ արշինի: Երեկոյան մոտեցանք Կորջիկ գյուղին: Դժվարությամբ էինք բարձրանում թեք գառիվայրերը և վերջապես իջանք Կորջիկ: Բնակիչներ չկային: Թողել էին բոլոր կենդանիներին, ցորենը, ծղոտը և հարդը: Անասունները շրջում էին գյուղում, հատկապես շատ էին գոմեշները:

76 Կյումգյում - Վարդոյի գավառի կենտրոնը:
77 Չարբոբի կամ Չարբուհար - գյուղ Վարդոյի գավառում:

Փետրվարի 2-ին մենք ուղևորվեցինք Կյում-կյում-վաղիկ: Անտանդի արահետ էր: Գժվարությամբ էինք բարձրանում և ապա իջնում ձորը, հատկապես դժվար էր գնալ լեռնանցքով: Ճանապարհին, ավելի ճիշտ՝ արահետներին, իսկ մեծ մասամբ արահետների կողքերին ընկած էին սպանված ասկյարներ, քրդեր, ինչպես նաև ցրտահարվածներ: Ամբողջ ճանապարհը ծածկված էր սատկած կենդանիներով: Առանց չափազանցության, վստահաբար կարելի է ասել, որ նրանց թիվը հասնում էր հազարների: Այն կենդանիները, որոնք դուրս էին մնացել արահետներից, դատապարտվել էին մահվան, քանի որ ուժասպառ էին եղել սննդի բացակայությունից և չէին կարողացել հաղթահարել ձյունը: Հատկապես շատ դիակներ կային Մերնիս-կելի գյուղում: Մենք ցանկացանք նախանաշել այդ գյուղում, սակայն չկարողացանք, քանի որ մի թիզ ազատ տեղ չկար դիակներից: Հավանաբար դրանք վաղուց սատկած կենդանիներ էին: Մի քանի դիակներից հանված էր կաշին, հավանաբար կոշիկ կարելու համար: Ճանապարհին թափված էին մեծ թվով փամփուշտներ:

Տերեկը՝ մոտ ժամը 2-ին, հասանք Կյում-կյում-վաղիկ, որտեղ մեզ դիմավորեց 7-րդ գնդի հրամանատար, գնդապետ Օրբագցովը: Գյուղը մեծ էր, ուներ փոքրիկ քաղաքի տեսք: Բնակիչները փախել էին մեր զորքի մոտենալու ժամանակ՝ թողնելով զգալի քանակությամբ ցորեն, խոտ և մեծ թվով անասուններ, որոնք ուժասպառ էին եղել: Գիշերը մենք տեղեկացանք, որ մեր զորքերը գրավել են Էրզրումի շատ ֆորտեր:

Փետրվարի 3-ին ես կատարեցի զորքերի վերախմբավորում: Հեծելագործին հրամայեցի շարժվել դեպի Մուշ ու գրավել Եփրատի գետանցումը և, եթե հնարավոր է, նաև Մուշը: Ընդ որում, ավելորդ խոսակցությունների տեղիք չստացավ համար հրամայեցի Հայկական դրոժինան Մուշ չտանել: 8-րդ գնդից առաջապահ ուղարկվեց Չարբորխ⁷⁸ գյուղից հարավ, իսկ գյուղում տեղավորվեցին կենտրոնական զորայան գլխավոր ուժերը, որն այդ գյուղում միացավ ձախին: Գնդապետ Օրբագցովի այ զորայունն առայժմ թողնվեց Կյում-կյում-վաղիկում, որպեսզի պաշտպանի այ թևը և մասնակիորեն թիկունքը: Կյում-կյում-վաղիկից ես շտաբի հետ ուղևորվեցի Չարբորխ: Ճանապարհը բավականին տանելի էր: Այդ շրջանը բնակեցված էր չերքեզներով, որոնք Հյուսիսային Կովկասից էին: Գյուղերը լավն էին, տները նման էին մալոռուսական շինություններին: Գյուղերի շուրջը առատ բուսականություն կար: Բացի առանձին անձանցից՝ բնակիչներ չկային: Գիշերը գնդապետ Նոսկովից հեռագիր ստացա, որ թեթև դիմադրությունից հետո Մուշը գրավվել է:

Փոմա Իվանի Նազարբեկով [ստորագրություն]
ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 9, թ. 1-49: Բնագիր: Ձեռագիր:

Ռուբեն Օ. Սահակյան - գիտական հետաքրքրությունների շրջանակում են Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատը, կամավորական շարժումը, Հայոց ցեղասպանությունը, ինքնապաշտպանական մարտերը, հայկական ոստիկանության պատմությունը:

78 Տե՛ս ծնթ. 48:

Summary

THE UNPUBLISHED MEMORIES OF TOVMAS NAZARBEKYAN

Military operation on the Caucasus Front from
July 1914 to April 26, 1916.

Copy-book 7 and 8: from January 1 to February 3, 1916.

Ruben O. Sahakyan

Key words - Tovmas Nazarbekyan, M. Silikyan (Silikov),
Dro, N. Yudenich, Vl. De Witt, Erzurum (Karin), Khnus, Mush.

The 7th and 8th notebooks of Th. Nazarbekyan's memoirs present the military operations that took place from January 1916 to February 3, which brought a radical breakthrough in the battles on the Caucasus front. Notwithstanding the unbearable weather conditions, the Caucasus Army took decisive actions aiming to capture Erzurum in the first place. The servicemen had to overcome enormous difficulties, about which Th. Nazarbekyan constantly informed the command.

But when, on the eve of Khnus' operation, he considered it his duty to report to General Vl. De Witt – the Commander of the 4th Caucasian Army Corps, by the order of the latter, Th. Nazarbekyan was temporarily deprived of the opportunity to lead his attacking division because of his “audacity”. Only some time later, after a large number of victims who died due to frostbite or lost limbs, the command realized what complications and barriers were mentioned in Th. Nazarbekyan's report.

In the unbearable winter conditions, not having enough food, but not paying attention to the difficulties encountered, on January 13, 1916, the Cossacks, the shooters supporting them and the Armenian 2nd Squad led by Dro captured Khnus, which saved more than 1.000 Armenian women and children.

At the end of 1915 and the beginning of 1916, the desire to dissolve the Armenian volunteer groups was already maturing among the Caucasian authorities. That is why various absurd, sometimes provocative rumors were spread about Armenian volunteers. The Labinskian Cossack Regiment, under the command of Noskov – the not-so-unknown Colonel of the General Staff, had entered Khnus, sending a false report from Mush valley to Th. Nazarbekyan in July 1915, claiming that he was being attacked by 12 Turkish battalions, thus contributing to the sudden retreat of Russian troops.

«Կէս համահայկական հանդես», ԺԲ (ԺԸ) տարի, թիվ 2 (70), ասպիտ-հոտիս, 2020

And after the capture of Khnus, the Cossacks of Noskov once again spread false rumors that Armenian volunteers had committed violence against local Kurds and Turkish casualties. Being in Khnus, Th. Nazarbekyan visited the wounded and sick Turks in the hospital and talked to one of them. According to the latter, the murders were committed by the Cossacks themselves.

In order to prevent the Armenian volunteers from being unjustly accused of organizing a massacre again, Th. Nazarbekyan ordered not to allow them to enter Mush first. However, Colonel Noskov, who sent him a telegram on February 3, 1916, about the capture of Mush, did not comply with that order. It turned out that if Taron's Armenians had been annihilated by the hands of Turks and Kurds by organizing the July 1915 retreat, and now, in January-February 1916, by killing the Turks and Kurds with their own hands, the same Armenians would be held responsible.

Резюме

НЕИЗДАННЫЕ ВОСПОМИНАНИЯ ТОВМАСА НАЗАРБЕКЯНА

Военные действия на Кавказском фронте

с июля 1914 г. по 26 апреля 1916 г.

Тетради 7 и 8: с 1 января по 3 февраля 1916 г.

Рубен О. Саакян

Ключевые слова - Товмас Назарбекян, М. Силикян (Силиков), Дро, Н. Юденич, Вл. Де-Витт, Эрзерум (Карин), Хнус, Муш.

7-я и 8-я тетради воспоминаний Т. Назарбекяна представляют военные действия с января по 3 февраля 1916 г., которые привели к коренному перелому в боях, ведущихся на Кавказском фронте. Несмотря на невыносимые погодные условия, Кавказская армия перешла к решительным действиям, имея целью в первую очередь взятие Эрзерума. Военнослужащие были вынуждены преодолевать огромные трудности, о которых Т. Назарбекян все время информировал командование.

Но когда накануне операции по взятию Хнуса он считает своим долгом обратиться с рапортом об этом к командующему 4-м армейским корпусом генералу Вл. Де-Витту, по приказу последнего «за дерзость» временно лишается возможности руководить своей дивизией, перешедшей в наступление. Только спустя некоторое время, после многочисленных жертв, умерших или потерявших конечности от обморожения, командование поняло, о каких трудностях и препятствиях говорилось в рапорте Т. Назарбекяна.

В невыносимых зимних условиях, не имея достаточного питания, но не обращая внимания на встречающиеся сложности, 13 января 1916 г. казаки, поддерживающие их стрелки и 2-я Армянская дружина заняли Хнус, благодаря чему были спасены больше тысячи армянских женщин и детей.

В конце 1915 и начале 1916 г. у кавказских властей уже созревало желание упразднить армянские добровольческие группы. По этой причине распространяли разные абсурдные, иногда провокационные известия об армянских добровольцах. В Хнус вошел Лабинский казачий полк под командованием небезызвестного полковника из Генерального штаба Носкова, который в июле 1915 г. из Мушской долины послал ложное донесение Т. Назарбекяну о том, что на него якобы наступают 12 турецких батальонов, и тем самым способствовал внезапному отступлению русских войск.

И вот после взятия Хнуса казаки Носкова распространяли ложные слухи, будто армянские добровольцы совершили насилие над местными курдами и пленными турками. Т. Назарбекян, будучи в Хнусе, посещает находящихся в больнице раненных и больных турок и беседует с одним из них. По свидетельству последнего, убийства совершили сами казаки.

Чтобы армянских добровольцев еще раз несправедливо не обвиняли в организации резни, Т. Назарбекян приказывает не допустить, чтобы они первыми вошли в Муш. Но полковник Носков, 3-го февраля 1916 г. пославший ему телеграмму о взятии Муша, этот приказ тоже не выполняет. Получалось, что если организацией июльского отступления 1915 г. руками турок и курдов было уничтожено армянское население Тарона, то теперь, в январе-феврале 1916 г., на тех же армян перекаладывали ответственность за совершенную своими руками резню турок и курдов.

REFERENCES

1. **Korsun N. G.**, Pervaja mirovaja vojna na Kavkazskom fronte. Operativno-strategicheskij ocherk, M., 1946 (**In Russian**).
2. **Maslovskij Je. V.**, Mirovaja vojna na Kavkazskom fronte 1914-1917g., Parizh, 1933 (**In Russian**).
3. Reljicii dejstvii pravoj kolonny otrjada polkovnika Chaplinskogo pod komandoj polkovnika 8-go Kavkazskogo strelkovogo polka Jegupova. Rossijskij gosudarstvennyj arxiv, f. № 3304, 8-oj Kavkazskij strelkovyj polk, op. № 1, 8-oj Kavkazskij strelkovyj polk, d. № 49, Reljicii boevix dejstij 8-go Kavkazskogo strelkovogo polka, tert 1-6,
4. <https://gwar.mil.ru/documents/view/?id=51546623> (06.04.2020) (**In Russian**).
5. **Shatirjan R.**, Kratkij ocherk armjanskix dobrovolcheskix druzhin 1914-1916 gg., "Armjanskij vestnik", M., 1917, N 7 (**In Russian**).